Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

6113

[illegible]

264
4-30

1932 р

1 OCT 2009

ԴՊՐՈՒԹԻՒՆ

*ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ*

264
4-30

18 MAY 2013

ԿԱՐԳ

# ԴՊՐՈՒԹԵԱՆ

## ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Ի ՊԷՏՍ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ ԵՒ ԴՊՐԱՑ

ԵՒ

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ի ՄԱՇՏՈՑԷ

ՎԻԵՆՆԱ
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

18 MAY 2013
6113

ՀՐԱՄԱՆԱՒ ՄԵԾԱՒՈՐԱՑ

1932

661-60

## ԶԵԿՈՒՑՈՒՄՆ

Երեք մասունք են գրոցս Դպրութեան կամ Սպասաւորութեան Սրբոյ Պատարագի։

1. Կարգ Դպրութեան օրըստօրէն, հանդերձ Յաւելուածովն։

2. Աւուր պատշաճքն հասարակաց։

3. Պատշաճքն գլխաւոր տօնից ըստ կարգի տօնացուցին։

Ի Յաւելուածին որ յետոյս Դպրութեան գրոցս՝ կանոնք օրհնութեանցն ըստ այժմեան համառօտութեանց կարգեալ են։

Աստեղանիշդ * ցուցանէ զկրկնելիս ի վերջս տանց։

Ի սկիզբն Մարգարէական ընթերցուածոց՝ ի նշանդ ‖ յաւել՝ Այսպէս ասէ Տէր. եւ յԱռաքելականացն ի նոյն նշան՝ յաւել՝ Եղբարք։

Աւանդեալքն ի սովորութենէ եւ չգտեալք ուրեք ի գիրս՝ ի փակագծի յաւելեալ են։

## ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՔ

| | |
|---|---|
| Ածն. | Աստուածածնի. |
| աղ. | աղօթք. |
| աղց. | աղուհացից. |
| առք. | առաքելական. |
| աւետ. | աւետարան. |
| ղպ. | դպիրքն. |
| եր. | երես. |
| ընթ. | ընթերցուած. |
| խչ. | խաչի. |
| ծն. | ծննդեան. |
| կց. | կցորդ. |
| հյրպ. | հայրապետաց. |
| ճշ. | ճաշու. |
| մես. | մեսեդի. |
| մղթ. | մաղթանք. |
| մրգ. | մարգարէական. |
| մրտ. | մարտիրոսաց. |
| յին. | յինանց. |
| յիմն. | յիմնակաց. |
| շբպհ. | շաբաթապահոց. |
| շր. | շարական. |
| պհ. | պահոց. |
| սղմ. | սաղմոս. |
| սրկ. | սարկաւագ. |
| վ. | վերջ. |
| փխ. | փոխ. |
| քհն. | քահանայ. |
| քրզ. | քարոզ. |

### ՈՒԹ ՁԱՅՆՔՆ

| | |
|---|---|
| աձ. | առաջին ձայն. |
| ակ. | առաջին կողմ. |
| բձ. | երկրորդ ձայն. |
| բկ. | աւագ կողմ. |
| գձ. | երրորդ ձայն. |
| գկ. | վառ ձայն. |
| դձ. | չորրորդ ձայն. |
| դկ. | վերջ ձայն. |
| ստ. | ստեղի. |

### ԱՒՈՒՐՔ ՇԱԲԱԹՈՒՆ

| | |
|---|---|
| կիր. | կիւրակէ. |
| բշ. | երկուշաբաթի. |
| գշ. | երեքշաբաթի. |
| դշ. | չորեքշաբաթի. |
| եշ. | հինգշաբաթի. |
| ուր. | ուրբաթ. |
| շբ. | շաբաթ: |

# Ա.

# ԿԱՐԳ ԴՊՐՈՒԹԵԱՆ

## ՕՐԸՍՏՕՐԷՆ

ԿԱՐԳ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ·

ՅԱՒԵԼՈՒԱԾ·

Օրհնեալ գովեալն ըստ խորհրդոյ աւուրն:

Երգք, շարականք, տաղ ճաշակման սրբոյ Խորհրդոյն:

Կարգ Հայրապետական պատարագի:

Կարգ Ննջեցելոց պաշտաման պատարագի — եւ Պաշտօն հանգստեան Ննջեցելոց:

## ԿԱՐԳ ԴՊՐՈՒԹԵԱՆ

# ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

---

Շարական ընծայատուութեան պատարագի. Դ Զ:

Խորհուրդ խորին անհաս անըսկիզըն. որ զարդարեցեր զվերին պետութիւնս. ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասըս հրեղինաց:

Անճառահրաշ զօրութեամբ. ստեղծեր զԱդամ պատկեր տիրական. եւ նազելի փառօք զգեստաւորեցեր. ի դրախտն Ադենի տեղի բերկրանաց:

Չարչարանօք քո սուրբ միածնիդ. նորոգեցան արարածք ամենայն. եւ վերըստին մարդն անմահացաւ. զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անձրեւածին բաժակ հրահոսան. որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատանն. հեղ եւ ի մեզ հոգիդ սուրբ Աստուած. ընդ պատմուճանին զքո զիմաստութիւնդ:

Տան քում վայելէ սրբութիւն. որ ըզգեցար ըզվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ. պատեա ըզմէջս մեր ճըշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո. տարածեցեր ընդդէմ աստեղաց. հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ. համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել:

Խուսամամբ թագ ի գլուխ. պատեցես ընդմիտս եւ զզգայարանս. խաչանիշ ուրարամբ ըստ Ահարոնի. ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանի:

Բամից բոլորից. տիրապէս ածպետականն. Նախորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր. քում սուրբ խորհրդոյդ լինել սպասաւոր:

Եւ լուանայ քահանայն զձեռս: (Եւ դառնայ եւ կոչէ զժողովուրդն խաղն:)

Կց: Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան:

---

Մաղթանք:

Քհն. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին Տէր ընկալ զաղաչանս մեր, եւ կեցո զմեզ:

Քարոզ:

Սրբ. Սբ զԱծածինն եւ զամ սբս բարեխօս արասցուք առ Հայր յերկինս, զի կամեցեալ ողորմեսցի, եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր: Ամենակալ Տէր Ած մեր. կեցո եւ ողորմեա:



Աղօթք:

Քհն. Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի Որդւոյ քո, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց, (եւ որոց կամ որոյ այսօր է յիշատակ:) Լուր մեզ Տէր եւ ողորմեա. ներեա, քաւեա եւ թող զմեղս մեր: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ խոնարհեալ առաջի այլ քահանայիցն առընկեր կոչելոյ՝ ասէ.

Խոստովանիմ առաջի Աստուծոյ, եւ սրբուհւոյ Ածածնին, եւ առաջի ամենայն սրբոց, եւ առաջի ձեր հարք եւ եղբարք, զամենայն մեղս զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով, եւ ամենայն մեղօք զոր գործեն մարդիկ. մեղայ. մեղայ: Աղաչեմ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն:

Պատասխանեն որ մերձ են.

Ողորմեսցի քեզ Աստուած հզօրն, եւ թողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց, անցելոյն եւ այժմուս, եւ յառաջիկայէն փրկեսցէ զքեզ. եւ հաստատեսցէ յամենայն գործս բարիս. եւ հանգուսցէ զքեզ ի հանդերձեալ կեանս. ամէն:

Պատասխանէ եւ ընէն

Քհն. Ազատեսցէ եւ զձեզ մարդասէրն Աստուած, եւ թողցէ զամենայն յանցանս ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս: Ուղղեսցէ եւ զառաջիկայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն, հզօրն եւ ողորմածն: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Դպ. Յիշեսջիր եւ զմեզ առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Քհն. Յիշեալ լիջիք առաջի անմահ գառինն Աստուծոյ:

Սաղմոս ՂԹ.

Դպ. Ուղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ:

Մտէք առաջի նորա ցնծութեամբ. ծանիջիք զի նա է Տէր Աստուած մեր:

Նա արար զմեզ եւ ոչ մեք էաք. մեք ժողովուրդք եւ խաշն արօտի նորա:

Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ. եւ օրհնութեամբ ի յարկս նորա:

Խոստովան եղերուք Տեառն. եւ օրհնեցէք զանուն նորա:

Քաղցր է Տէր, յաւիտեան է ողորմութիւն նր. յազգէ մինչեւ յազգ է ճշմարտութիւն նր:

Փառք Հօր եւ: Այժմ եւ միշտ:

Քարոզ:

Սրկ. Սբ եկեղեցեաւս աղաչեսցուք զՏէր.



զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Աղօթք:

Քհն. Ի մէջ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սբ տեղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող (զյարութիւնդ[1]) քո փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սաղմոս ԽԲ.

Քհն: — Կց. Մտից առաջի սեղանոյ Այ. առ Այ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Սրկ: — Փխ. Դատ արա ինձ Աստուած. եւ իրաւ արա ինձ ի դատաստանի իմում:

Քհն. Յազգէ որ ոչ է սուրբ. ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս:

Սրկ. Դու Աստուած հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացար զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Քհն. Առաքեա Տէր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ, եւ հանցեն զիս ի լեառն սուրբ եւ ի յարկս քո:

---

1 Ըստ խորհրդոյ աւուրն. տես երես 35:

Սրկ. Մտից առաջի սեղանոյ Աստուծոյ. առ Աստուած որ ուրախ առնէ զմանկութիւն իմ:

Քհն. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ Աստուած, Աստուած իմ:

Սրկ. Արդ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա առ Ած, խոստովանեա նմա, փրկիչ երեսաց իմոց Ած է:

Քհն. Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ:

Սրկ. Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Քարոզ:

(Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:)

Օրհնեսցուք զամենակալն Ած զՀայր Տռն մերոյ Յսի Քսի. որ արժանի արար զմեզ կալ ի տեղւոջ փառաբանութե, եւ երգել զերգս հոգեւորս: Ամենակալ Տր Ած մեր կեցո եւ ողորմեա:

Աղօթք:

Քհն. Ի յարկի սրբութեան եւ ի տեղւոջ փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս եւ մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող (զյարութիւնդ) քո օրհնեմք եւ փառաւորեմք: Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ:

Եւ ապա յետն շարականն:



Եւ զմիւսն եղանակէն Մեղեդի խորհրդաւոր կամ Տաղ, զոր յատուկ պատշաճն ունիցի: Զընտրեալն տես յերես 43:

Եւ բանան զվարագոյրն:

Շարական խնկարկութեան պատարագի. Գկ:

Ցայս յարկ նուիրանաց ուխտի Տեառըն տաճարիս. ժողովեալքս աստանօր ի խորհուրդ պաշտման պաշտմանաց առաջնակայ սուրբ պատարագիս. խնկօք անուշիւք խունկ առեալ պարեմք ի վերնայարկ սրահըս խորանիս: Ուղղութեամբ ընկալ զաղօթս մեր. որպէս բուրումն անուշահոտ խնկոց տաճարիս եւ կինամոմնաց. եւ ըզմատուցողքըս պահեա սրբութեամբ միշտ եւ հանապազ քեզ սպասաւորել: Բարեխօսութեամբ մօր քո եւ կուսի. ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից:

Որ գերագոյն քան զերկինըս պայծառացուցեր սուրբ զեկեղեցի արեամբ քով Քրիստոս. եւ ըստ երկնայնոցըն կարգեցեր ի սմա զդասս առաքելոց եւ մարգարէից սուրբ վարդապետաց: Այսօր ժողովեալ դասք քահանայից, սարկաւագաց, դպրաց եւ կղերիկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո Տէր յօրինակ ըստ հնումըն Զաքարիայ. ընկալ առ ի մէնջ ըզ-

խընկանուէր մաղթանս որպէս զպատարագն Աբելի զնուէր եւ զԱբրահամու: Բարեխօսութեամբ վերին քոյ զօրացդ. միշտ անշարժ պահեա զաթոռ հայկազնեայց:

Խընդա այժմ դուստրը լուսոյ մայր սուրբ կաթողիկէ մանկամբք քո Սիոն. զարդարեալ պըճնեայ հարսըն պանծալի երկնանըման լուսածեմ խորան: Զի օծեալն Աստուած Ընն ի Ջէն անծախապէս ի քեզ միշտ պատարագի. Հօր ի հաշտութիւն մեզ ի քաւութիւն բաշխէ՝ զմարմին եւ զարիւն իւր սուրբ: Վասն իւր կատարմանն սուրբ տնօրէնութեան. շնորհել զթողութիւն կանգնողի տաճարիս:

Կց. Զանապական կոյսըն Մարիամ Աստուածածին խոստովանի սուրբ եկեղեցի. ուստի տըւաւ հացն անմահութեան եւ բաժակ մեզ ուրախարար. տուք օրհնութիւն նըմա հոգեւոր երգով:

---

Եւ տօրհնութեան յայնէ. Օրհնեա տէր:

Քհն. Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասեն ժամամուտ ըստ պատշաճի աւուրն:



*Ժամամուտք:*

Աստուածածնի եւ Ծննդեան:

Ա. Ածածին ամենօրհնեալ, զԲանն անսկիզբն յղացար և զԱծն անբովանդակելին ծնար. զանպարագրելին ի գիրկս քո բարձեր. Նմա անդադար բարեխօսեա վն անձանց մերոց:

Բ. Աստուածածին զքեզ խոստովանեալ երկրպագէ եկեղեցի ուղղափառաց, քանզի ուր քերովբէքն բազմաչեայք եւ աթոռք հրանիւթք եւ վեցթեւեան սերովբէքն նայել ոչ իշխէին, կրեցեր անսերմնապէս յանապականութն ի յարգանդի քում որպէս աղախին զՏէր, եւ ծնար որպէս մարդ զԱստուածն բոլորից՝ զմարմնացեալն առ ի քէն զանճառ զԲանն, ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

Գ. Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մարիամ Ածածին, բարձրելոյն զօրութեամբն հովանաւորեալ եւ սուրբ Հոգւոյն եկաւորութեամբն լուսաւորեալ. որ զամ գոյութեց ստեղծիչն յղացեալ ծնար անճառապէս. մարմնացելոյն առ ի քէն բարեխօսեա կեցուցանել զանձինս մեր:

Եկեղեցւոյ:

Զխաղաղութիւն շնորհեա եկեղեցւոյ քում սրբոյ, զխաղաղութիւն եւ զանշարժութիւն ի թշնամեաց պատերազմէ. եւ հաստատեա ի մի հաւատ զկաթուղիկէ եկեղեցի. զքեզ խոստովանիմք Տէր եւ Աստուած. կեցո զմեզ:

Խաչի։

Առաջի պատուական ամենայաղթ խաչի քոյ անկանիմք երկրպագելով, եւ խնդրեմք զթողութիւն յանցանաց մերոց․ քանզի սովաւ բարձեր զդատապարտութիւն ազգի մարդկան։ Եւ այժմ վասն սրբոյ աստուածային քոյ նշանի՝ շնորհեա զերկնային զխաղաղութիւնդ ամենայն աշխարհի։

Զայլ ժամամուտս տես յաւուր պատշաճին։

---

Եւ յաւարտման երգոյն ժողովեսցէ

Սրկ․ Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք․ ընկալ, կեցո եւ ողորմեա։ Օրհնեա տէր։

Քհն․ Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ․ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Խաղաղութիւն ✝ ամենեցուն։

Դպ․ Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ․ Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ․ Առաջի քո Տէր։

Աղօթ․։

Քհն․ Տէր Աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ անչափ է եւ գթութիւնդ անբաւ։ Դու ըստ առատ մարդասիրութեան քում նայեա ի ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս սուրբ։ Եւ արա ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր ա-



ռատապէս զողորմութի քո եւ զգթութի։ Զի քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից․ ամէն։

Եւ ապա ճաշու փոխն եւ Շարականն ըստ պատշաճի աւուրն։

Սրկ․ Օրհնեա տէր։

Քհն. Զի քո է կարողութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս․ ամէն.

Եւ համբուրեսցեն զսեղանն։

Սրկ․ Վերացուցանէ զաւետարանն, եւ ձայնէ բարձր․ Պռօսխումէ։

Եւ ասեն զերեքսրբեանն ձայնիւ։

Դպ․ Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ․ ողորմեա մեզ․ Երիցս։

Քարոզ։

Սրկ․ Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Դպ․ Տէր ողորմեա։

Վասն խաղաղութեան ամ աշխարհի եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զՏէր աղաչեսցուք։ Դպ․ Տէր ողորմեա։

Վասն ամ սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց զՏէր աղաչեսցուք։ Դպ․ Տէր ողորմեա։

Վասն սրբազան Պապին մերոյ Տեառն այս անուն կենաց եւ փրկութեան հոգւոյ նորին զՏէր աղաչեսցուք։ Դպ․ Տէր ողորմեա։

Վասն Հայրապետին մերոյ Տեառն այս ա-

Նուն (կաթողիկոսի) կենաց եւ փրկութ֊ հոգւոյ նորին զՏէր աղաչես: Դպ. Տէր ողորմեա:

Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւագաց, դպրաց, եւ ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ զՏէր աղաչ: Դպ. Տէր ողորմեա:

Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց, զօրավարաց եւ զօրաց նոցին զՏէր աղաչեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոց՝ որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին զՏէր աղաչեսցուք: Դպ. Յիշեա Տ՟ր և ող:

Եւ եւս և վ՟ն միաբանութ՟ե ճշմարիտ և ս՟բ հաւատոյս մերոյ զՏ՟ր աղ: Դպ. Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տ՟ր Ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութեան քում: Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ. Տ՟ր ողորմեա. Տ՟ր ողորմեա. Տ՟ր ողորմ:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոլով. եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ. այժմ եւ միշտ:

(Եւ դնեն զգրակալն:)

Եւ սկսանին զՃաշու Սաղմոսն առաջին՝ է ձայն. եւ ընթեռնուն զԳիրս՝ մարգարէականս եւ առաքելա-



կանս ըստ խորհրդոյ աւուրն. եւ զկնի՝ Ալէլու ըստ ցուցանելոյ Ընթերցուածոյն: Եւ յաւարտման Ալէլուին Բարձր ձայնիւ գոչէ

Սրկ. Օրթի:

Քհն. Խաղաղութիւն ✝ ընդ ամենեսեան:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Սրբոյ Աւետարանիս որ ըստ (Մատթէոսի):

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

Եւ սարկաւագն կարդայ զԱւետարանն:

Եւ յաւարտելն ասասցեն ամենեքեան.

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Եւ ապա ասեն զՀաւատամքն: (Եւ խունկ ծխեն:)

Սրկ. Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին նախ քան զամենայն յաւիտեանս: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վ՟ն

մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։ Որով էառ մարմին, հոգի եւ միտս, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։ Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս։ Որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։

Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալ, որ ի Հօրէ եւ յՈրդւոյ բղխի։ Որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս։ Որ էջն ի Յորդանան. քարոզեաց զառաքեալն, եւ բնակեցաւ ի սուրբսն։

Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ յառաքելական սուրբ եկեղեցի։ Ի մի մկրտութիւն։ Յապաշխարութիւն՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։ Ի յարութիւն մեռելոց։ Ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց եւ մարմնոց։ Յարքայութիւն երկնից եւ ի կեանս յաւիտենականս։

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի, կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի. կամ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զսուրբ Հոգին. եւ թէ փոփոխելի են կամ այ-



լայլելի, զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ եւ առաքելական եկեղեցի։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիր պագանելով սրբոյ Երրորդութեան եւ մի Աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։ (Եւ համբուրէ զաւետարանն սուրբ։)

Քարոզ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Դպ. Տէր ողորմեա։

Եւ եւս հաւատով աղաչեսցուք, եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ՝ ի ժամուս պաշտաման եւ աղօթից։ Զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց։ Ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր։ Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան Նորա։ Եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով, արդարութեամբ վաստակել ի գործս բարիս։ Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի։ Դպ. Կեցո Տէր։

Զժամս սբ̄ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք։ Դպ. Շնորհեա Տէր։

*Զհրեշտակ խաղաղութ՟ պահապան անձանց մերոց ի Տ՟ռնէ խնդր:* Դպ. *Շնորհեա Տէր:*

*Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդր:* Դպ. *Շնորհեա Տէր:*

*Զսրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:* Դպ. *Շնորհեա Տէր:*

*Եւ եւս և վս՟ միաբանութ՟ ճշմարիտ և սբ՟ հաւատոյս մերոյ զՏ՟ր աղա:* Դպ. *Տէր ողորմեա:*

*Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Այ՟ ամենակալին յանձն արասցուք:*

Դպ. *Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:*

*Ողորմեաց մեզ Տ՟ր Ա՟ծ մեր ըստ մեծի ողորմութեան քում: Ասասցուք ամենեքեան միաբանութ՟:*

Դպ. *Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ող:*

Սրկ. *Օրհնեա Տէր:*

Քհն. *Որպէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

*Խաղաղութիւն † ամենեցուն:*

Դպ. *Եւ ընդ հոգւոյդ քում:*

Սրկ. *Աստուծոյ երկրպագեսցուք:*

Դպ. *Առաջի քո Տէր:*

Աղօթ.:

Քհն. *Խաղաղութ՟ քով Ք՟ս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս, ամրացո*



*զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ: Հաւասարեա զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիր պագանեն: Վասնզի ամենասբ՟ Երրորդութեդ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ:*

*Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս:*

Դպ. *Ամէն:*

Սրկ. *Օրհնեա տէր:*

Քհն. *Տէր Ա՟ծ օրհնեսցէ † զամենեսեանդ:*

Սրկ. *Մի՛ ոք յերախայից, մի ոք ի թերահաւատից, եւ մի ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսցի յաստուածային խորհուրդս:*

Դպ. *Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կայցէ առաջի: Երկնային զօրութիւնքն յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով. սբ՟, սբ՟, սբ՟. Տէր զօրութեանց:*

Սրկ. *Սաղմոս ասացէք Տեառն Այ՟ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութ՟ զերգս հոգեւորս:*

Եւ դպիրքն եղանակեն զՍրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն:

*Սրբասացութիւնք:*

Կիւրակէից եւ Եկեղեցւոյ:

*Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր Աստուած զքո սուրբ զեկեղեցի: Հազարք հազարաց հրեշտակապետք կան առաջի քո, եւ բիւրք բիւրուց հրեշտակք պաշտեն զքեզ Տէր:*

Եւ ի մարդկանէ հաճեցար ընդունել զօրհնութիւնս ձայնիւ խորհրդականաւ. սուրբ, սուրբ, սուրբ. Տէր զօրութեանց:

Ծննդեան եւ Աստուածածնէ:

Բազմութիւնք հրեշտակաց եւ զօրաց երկնաւորաց իջեալ ի յերկնից ընդ մածին Թագաւորին: Որք երգէին եւ ասէին. սա է Որդին Աստուծոյ: Ամենեքեան ասասցուք. ուրախ լերուք երկինք, եւ ցնծասցեն հիմունք աշխարհի. զի Աստուածն յաւիտենական ի յերկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ, զի կեցուսցէ զանձինս մեր:

Զայս օրհնաբանութիւնս ասէ յաւուր պատշաճին:

Եւ է սարկաւագացն վերաբերելոյն ընծայքն է սեղանն սուրբ:

---

Քարոզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ ահիւ: Մի խղճիւ եւ գայթագղութեամբ, մի նենգութեամբ խորամանկութեամբ, մի պատրանօք եւ խաբէութեամբ, մի երկմտութբ եւ մի թերահաւատութեամբ: Այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտիւ, կատարեալ հաւա-



տով, լցեալ սիրով, լի եւ առաւելեալ ամենայն գործովք բարութեան՝ կացցուք յաղօթս առաջի սրբոյ սեղանոյս Աստուծոյ. եւ գտցուք զողորմութեան զշնորհս՝ յաւուր յայտնութեան եւ ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ եւ փրկչին Յսի Քսի: Կեցուսցէ եւ ողոր: Դպ. Կեցո Տր եւ ողորմ:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Շնորհօք եւ մարդասիրութբ Տեառն մերոյ եւ փրկչին Յսի Քսի. ընդ որում քեզ Հօր միանգամայն եւ Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք իշխանութի եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Ամէն: Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Սրկ. Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութե. եւ որք ոչ էք կարող հաղորդիլ ածային խորհրդոյս, առ դրունս ելէք եւ աղօթեցէք:

Եւ համբուրեսցեն զսեղանն եւ զմիմեանս:

Դպ. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ. Որ էնն Աստուած աստ բազմեցաւ: Խաղաղութեան ձայն հնչեցաւ. Սուրբ ողջունիս հրաման տուաւ: Թշնամութիւնըն հեռացաւ. Սէր ընդ համօրէն սփռեցաւ: Արդ պաշտօնեայք բարձեալ ըզձայն, Տուք օրհնութի ի մի բերան՝ Միաստուածական անձնութեան, Որում սրովբէքն են սրբաբան:

Ոմանք եւ զայս ասեն ի հանդիսի դպրի։

Սրկ. Որք հաւատով կայք յանդիման Սուրբ սեղանոյս արքայական. տեսջիք բազմեալ զՔն̃ արքայն, եւ շուրջ պատեալ զօրք վերնական։

Դպ. Վերհամբառնամք զաչս ունելով, եւ պաղատիմք զայս ասելով. Ըզմեղս մեր մի յիշեսցես, Այլ գթութեամբ քո քաւեսցես։ Ընդ հրեշտակացն օրհնեմք ըզքեզ. Եւ ընդ սրբոց՝ Տէր փառք քեզ։

Սրկ. Ահիւ կացցուք, երկիւղիւ կացցուք, բարւոք կացցուք. եւ նայեսցարուք զգուշութ̃։

Դպ. Առ քեզ Աստուած։

Սրկ. Պատարագ Քն̃ մատչի գառն Այ̃։

Դպ. Ողորմութիւն եւ խաղաղութիւն եւ պատարագ օրհնութեան։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր և Որդւոյ ✝ և Հոգւոյն սրբոյ եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Դպ. (Ամէն.) Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Զդրունս, զդրունս ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ։ Ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր աստուածային երկիւղիւ։

Դպ. Ունիմք առ քեզ Տէր ամենակալ։

Սրկ. Եւ գոհացարուք զՏ̃նէ բոլորով սրտիւ։

Դպ. Արժան եւ իրաւ։

Սրկ. Օրհնեա Տէր։



Քհն. Եւ ընդ սերովբէսն եւ ընդ քերովբէսն միաձայն սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել։

Իսկ ի հանդիսի աւուրս՝ ոմանք չինի Արժան եւ իրաւէն ասեն եւ զայս։

Սրկ. Եւ զստոյգ փրկութեան՝ որ միշտ ընդ ամենայն տեղիս գոհութիւն մատուցանեմք քեզ Քրիստոս։ Դպ. Որով եւ զհրաշալի (զյարութիւնդ քո[1]) գովեն զօրութիւնք։ Սրկ. Սարսին սերովբէքն։ Դպ. Դողան քերովբէքն։ Սրկ. Եւ իշխանութիւնք վերին պետութեանցըն պար առեալ ձայնիւ եղանակեն եւ ասեն։

Դպ. Սուրբ. սուրբ. սուրբ. Տէր զօրութ̃ց։ Լի են երկինք եւ երկիր փառօք քո. օրհնութի̃ ի բարձունս։ Օրհնեալ որ եկիր եւ գալոց ես անուամբ Տեառն. ովսաննայ ի բարձունս։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Առէք կերէք . . . ի թողութի̃ մեղաց։

Դպ. Ամէն։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Արբէք ի սմանէ . . . ի թողութի̃ մեղաց։

Դպ. Ամէն։

Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոց.

[1] Ըստ խորհրդոյ աւուրն. տես երես 35։

հեղմամբ արեան նորա, աղաչեմք զքեզ, ողորմեա քոյ բանաւոր հօտիս։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Եւ զքոյս ի քոյոցս քեզ մատուցանեմք, ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն։

Դպ. Յամենայնի օրհնեալ ես Տէր, օրհնեմք զքեզ. գովեմք զքեզ. գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ Տէր Աստուած մեր։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Խաղաղութիւն † ընդ ամենեսեան։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք։

Դպ. Առաջի քո Տէր։

Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն, հաց կենաց բաշխիս ի մեզ. հեղմամբ՝ արեան քոյ սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա արեամբ քո փրկեալ հօտի։

Քահանայն խոնարհեալ լինի անձայն եւ օրհնէ զհացն. սուրբ եւ զբաժակն. եւ սարկաւագն (խնկարկէ առ ամենայն օրհնութեանն, եւ) ասէ ի ցած՝ Ամէն։ Եւ ի վերայ երկոցուն՝

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց։

Դպ. Հոգի Աստուծոյ, որ զխառակցի քոյ զխորհուրդ իջեալ ի յերկնից կատարես ի ձեռս



մեր. հեղմամբ արեան սորա, աղաչեմք զքեզ, հանգո զհոգիս մեր ննջեցելոցն։ (Եւ խոնարհի ասէ։)

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Ընդ որս և մեզ այց արասցես բարերար Ած, աղաչեմք։ Դպ. Յիշեա Տր եւ ողորմ։

Քհն. Աստուածածնին սրբոյ կուսին Մարիամու, Յովհաննու մկրտչին, Ստեփանոսի նախավկային, եւ ամ սրբոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղ։ Դպ. Յիշեա Տր եւ ողորմ։

Սարկաւագն յաջակողմն սեղանոյն կանգնած ասասցէ։

Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց եւ ամ հայրապետաց սրց, առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց, եւ ամ սրբոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։

Դպ. Յիշեա Տր եւ ողորմ։

Տէրունի աւուրցն եւ պահոց։

Սրկ. Օրհնեալ, գովեալ եւ փառաւորեալ՝ հրաշալի եւ ածազարդ (յարութն Քհի) երկիր պագանեմք։ Տես երես 35։ Դպ. Փառք (յարութն քոյ) Տր։

Ի տօնս Սրբոյն զայս ասա։

Սրկ. Սուրբ եւ աստուածահաճոյ (առաքելոյն) այս անուն, որոյ այսօր զյիշատակն կատարեցաք՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք։ Դպ. Յիշեա Տր եւ ողորմ։

Սրկ. Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն սրբոց. Թադէոսի եւ Բարթուղիմէոսի

առաքելոցն, եւ Գրիգորի լուսաւորչին, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակայ, Դանիէլի եւ Խադայ, Մեսրոպայ վարդապետին, և Գրիգորի Նարեկացւոյն, և Ներսէսի Կլայեցւոյն: Եւ ամ նցա հովուաց և հովուապետացն Հայաստանեայց՝ եղիցի յիշատակ ի նմ պատարագս, աղ: Դպ· Յիշեա Տր̅ եւ ողորմ:

Սրկ· Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ ածուսոյց կրօնաւորացն, Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ոնոփրիոսի, աբբայ Մարկոսի, Սրապիոնի, Նեղոսի, Արսէնի, Եւագրի· Յովհաննիսեանց, եւ Սիմէոնեանց, սրբոց Ոսկեանց, եւ Սուքիասանց, եւ ամենայն սրբոց հարց եւ աշակերտելոց նոցին ընդ տիեզերս՝ եղիցի յիշատակ ի սբ̅ պատարագս, աղ: Դպ· Յիշեա Տր̅ եւ ողորմ:

Սրկ· Թագաւորաց հաւատացելոց սրբոց, Աբգարու, Կոստանդիանոսի, Տրդատայ, եւ Թէոդոսի, եւ ամ սբ̅ եւ բարեպաշտ թագաւորաց եւ ածասէր իշխանաց՝ եղիցի յիշատակ ի սբ̅ պատարագս, աղաչեմք: Դպ· Յիշեա Տր̅ եւ ողորմ:

Սրկ· Ընդ հանուր ամենայն հաւատացելոց, արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, եւ ամ չափու հասակի հաւատով եւ սրբութեամբ ի Քս̅ ննջեցելոց՝ եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք: Դպ· Յիշեա Տր̅ եւ ողորմ:

Սրկ· Օրհնեա տէր:

Քհն· Եւս առաւել զսրբազան Պապն մեր



զՏէր այս անուն, եւ զերջանիկ Պատրիարքն (կամ զԱրքեպիսկոպոսն) մեր զՏէր (այս անուն) շնորհեսցես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ:

Ծանիր զի ուղղափառ առաջնորդաց միայն լինի յիշատակ:

Եւ ապա ի յաջակողմն սեղանոյն կարդասցէ սարկաւագն յետ ով ողջոյնից:

Քարոզ:

Գոհութիւն եւ փառաբանութիւն մատուցանեմք քեզ Տէր Աստուած մեր՝ վասն սբ̅ եւ անմահ պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս: Զի զսա մեզ ի սրբութիւն կենդանութեան պարգեւեսցես: Սովաւ շնորհեա զսէր, զհաստատութիւն, եւ զըղձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ եկեղեցւոյ, եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց: Եւս առաւել սրբազան Պապին մերոյ Տեառն այս անուն, եւ պատուական Պատրիարքին մերոյ Տեառն այս անուն, եւ Արքեպիսկոպոսին մերոյ Տեառն այս անուն, եւ քահանայիս որ զպատարագս մատուցանէ: Եւ վասն զօրութ̅ն եւ յաղթութ̅ն թագաւորաց քրիստոնէից, եւ իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք եւ խնդրեսցուք եւ վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ րաբունապետացն մերոց, եւ շինողաց սուրբ եկեղեցւոյս, եւ որք ընդ հովանեաւ սորին են հանգու-

ցեալ։ Ազատութիւն եղբարց մերոց գերելոց, եւ շնորհ առաջիկայ ժողովրդեանս։ Հանգիստ հաւատով եւ սրբութեամբ ի Քրիստոս կատարելոցն։ Եղիցի յիշատակ ի սբ պատարագս, աղաչեմք։

Դպ. Ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Եւ եղիցի ողորմութիւն մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի † Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեան։

Դպ. (Ամէն.) Եւ ընդ հոգւոյդ քում։

Քարոզ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։ Դպ. Տէր ողորմեա։

Ամենայն սրբովք զորս յիշատակեցաք, եւս առաւելապէս զՏէր աղ։ Դպ. Տէր ողորմեա։

Վասն մատուցեալ սուրբ եւ աստուածային պատարագիս որ ի վերայ սրբոյ սեղանոյս զՏէր աղաչեսցուք։ Դպ. Տէր ողորմեա։

Որպէս զի Տէր Աստուած մեր որ ընկալաւ զսա ի սուրբ, յերկնային եւ յիմանալի իւր մատուցարանն, եւ փոխանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս եւ զպարգեւս Հոգւոյն սրբոյ, զՏէր աղաչեսցուք։ Դպ. Տէր ողորմեա։

Ընկալ, կեցո եւ ողորմեա եւ պահեա զմեզ Տր քոյին շնորհիւդ։ Դպ. Կեցո Տր եւ ող։

Զամենասրբուհի զԱստուածածինն, զմիշտ



կոյսն Մարիամ հանդերձ ամենայն սրբովք յիշելով, զՏէր աղաչեսցուք։ Դպ. Տէր ողորմեա։

Եւ եւս և վն միաբանութեան ճշմարիտ և սբ հաւատոյս մերոյ զՏր աղա։ Դպ. Տէր ողորմեա։

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում։ Ասասցուք ամենեքեան միաբանութեամբ։

Դպ. Տէր ողորմեա. Տր ողորմ. Տր ողորմ։

Սրկ. Օրհնեա տէր։

Քհն. Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր, կարդալ զքեզ, երկնաւոր Հայր, երգել եւ ասել։

(Եւ սարկաւագն խօսի ասէ։)

Եւ դպիրքն քաղցրաձայն ասեն քարոզ·

Հայր մեր որ յերկինսդ ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս եւ յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա ի չարէ։

Սրկ. Օրհնեա տէր.

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպ. Առաջի քո Տէր:

Քահանայն խոնարհի, եւ ամենայն ժողովուրդն ընդ նմա ի վայր:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Քրիստոսիւ Յիսուսիւ Տերամբ մերով. ընդ որում քեզ Հոգւոյդ սրբոյ եւ Հօր ամենակալի վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ առնու զսուրբ հացն ի ձեռս:

Սարկաւագն ձայնէ բարձր. Պռօսխումէ:

Քահանայն բարձրացուցանէ ընծայեալ ժողովրդեանն, եւ ասէ. Ի սրբութիւն սրբոց:

Դպ. Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր. ամէն:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմարիտ: Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Օրհնեալ Որդիդ սուրբ Աստուած ճշմարիտ: Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա տէր:

Քհն. Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած ճշմարիտ: Դպ. Ամէն:

Սրկ. Օրհնեա տէր:



Քահանայն վերացուցանէ զսկիհն սուրբ արեամբն, եւ ասէ. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպ. Ամէն: Հայր սուրբ. Որդիդ սուրբ. Հոգիդ սուրբ: Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Սրկ. Օրհնեա տէր:

Քահանայն վերացուցեալ զսուրբ մարմինն եւ զարիւնն Տեառն՝ բերցէ ի տեսութիւն ժողովրդեանն, եւ ասասցէ առ նոսա բարձր. Ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ եւ յարենէ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ՝ որ իջեալ յերկնից բաշխի ի միջի մերում: Սա է կեանք, յոյս, † յարութիւն, քաւութիւն եւ թողութիւն մեղաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորիս մերոյ անմահի, որ նստի ի կառս քերովբէականս:

Եւ քարշեն զվարագոյրն:

Քարոզ:

Սրկ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերգս հոգեւորս: Զի սմա վայելեն սաղմոսք եւ օրհնութիւնք, ալէլուք եւ երգք հոգեւորք: Պաշ-

տմնեայք հանդերձ երգով սաղմոս ասացէք, եւ զՏէր յերկինս օրհնեցէք:

Դպ. Օրհնեալ է Աստուած:

Երգ:

Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր. եւ սուրբ զարիւն իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա:

Մատիք առ Տէր եւ առէք զլոյս. ալէլուիա:

Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ալէլուիա:

Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա. օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա:

Օրհնեցէք զնա ամ հրեշտակք նորա. ալէլ. օրհնեցէք զնա ամ զօրութիւնք նորա. ալէլ:

Զայս երգ. տես. յերես 37.

---

*Բաշխման աղօթք Խորհրդոյն:*

Քարոզէն վերադարձին յետ:

Սրկ. դառնայ առ ժողովուրդն ասելով բարձր. Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք, եւ սրբութեամբ հաղորդեցարուք:

(Ասացէք՝ մեղայ Աստուծոյ: Հաւատամ ի Հայր սուրբ յԱստուած ճշմարիտ: Հաւատամ յՈրդի սուրբ Աստուած ճշմարիտ: Հաւատամ ի Հոգի սուրբ յԱստուած ճշմարիտ: Խոստովանիմ



եւ հաւատամ զի սա է ճշմարիտ մարմին եւ արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ բաշխի զմեղս աշխարհի:)

Եւ ամենայն արժանաւոր ժողովուրդն հաղորդին. (Աղօթարանին՝ յերես 38:) Եւ յետ հաղորդելոյն՝

Դպ. Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Քհն. խաչակնքէ զժողովուրդն ասելով բարձր. Կեցո Տէր զժողովուրդս քո. եւ օրհնեա ✝ զժառանգութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Եւ դարձեալ քարոզէն վերադարձին:

---

Դպ. Լցաք ի բարութեանց քոց Տէր. ճաշակելով զմարմին քո եւ զարիւն: փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Որ հանապազ կերակրես զմեզ. առաքեա ի մեզ զհոգեւոր քո զօրհնութիւնդ: փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ:

Քարոզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Դպ. Տէր ողորմեա:

Եւ եւս հաւատով ընկալեալք յածային, սուրբ, յերկնային, յանմահ, յանարատ եւ յանապական խորհրդոյս, զՏեառնէ գոհացարուք:

Դպ. Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ քոյ: Բաշխե-

լով զմարմին եւ զարիւնդ ի փրկութիւն աշխարհի, եւ կեանք անձանց մերոց:

Աստանօր դպիրքն եղանակեն Տաղս խորհրդաւորս՝ մինչեւ քահանայն ստորագրեսցէ զնշան աղօթիցն։

(Ապա բանան զվարագոյրն։)

Սրկ. Օրհնեա տէր:

Եւ ապա առնու քահանայն զաւետարանն սուրբ ի ձեռս իւր, եւ երկրպագեալ համբուրէ զսեղանն։ Եւ իջեալ է ի մէջ եկեղեցւոյն ասէ ի ձայն.

Աղօթք:

Քհն. Որ օրհնես զայնոսիկ որք օրհնեն զքեզ Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ: (Դպ. Օրհնեալ է Աստուած:) Կեցո զժողովուրդս քո եւ օրհնեա զժառանգութիւնս քո: Զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա. սրբեա զսոսա որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ: (Դպ. Ամէն:) Դու զմեզ փառաւորեա աստուածային զօրութեամբ քով, եւ մի թողուր զյուսացեալքս ի քեզ: Զխաղաղութիւն քո պարգեւեա ամենայն աշխարհի. եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցա, եւ ամենայն ժողովրդեանս: (Դպ. Ամէն:) Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի քէն՝ որ ես Հայր լուսոյ: Եւ քեզ վայելեն փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից: Դպ. Ամէն:



Եւ ասեն երիցս. Եղիցի անուն Տեառն օրհնեալ, յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Եւ քահանայն դառնայ առ ժողովուրդն եւ ասէ ի ձայն:

Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես Քրիստոս Աստուած փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս քո. լցո եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Սրկ. Օրթի:

Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ աւետարանիս որ ըստ Յովհաննու:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

Քհն. (Յհ. Ա. 1:) † Ի Հօրէն լուսոյ.
Ի սկզբանէ էր Բանն. մինչ՝ 17. Յսի Քսի եղեն:

Իսկ է յետոյն. (Յովհ. ԻԱ. 15:)

† Յետ յարութեան Տեառն մերոյ Յսի Քսի.
Եւ իբրեւ ճաշեցին. մինչ՝ 19. եկ զկնի իմ:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Քարոզ:

Սրկ. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց, եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա:

Քհն. Տէր ողորմ. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթ.:

Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ † եւ պատուական խաչի քո ի խաղաղութեան. փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դպ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Եւ քահանայն խաչակնքէ զժողովուրդն, եւ ասէ.

Օրհնեալք եղերուք † ի շնորհաց սուրբ Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան. ամէն:

---

Եւ ի բաշխելն մնշխարս առ ժողովուրդն՝ երգեն Սաղմոս ԼԳ:

Ի Տէ՛ր պա՛րծեսցի՛ ա՛նձն իմ. լուիցե՛ն հե՛զք եւ ուրախ եղիցի՛ն:

Մե՛ծ արարէ՛ք զՏէր ինե՛ւ. է լման:

Փա՛ռք Հօր եւ. ա՛յժմ եւ միշտ:

---

# ՅԱՒԵԼՈՒԱԾ.

---

## ՕՐՀՆԵԱԼ ԳՈՎԵԱԼՆ

### ԸՍՏ ԽՈՐՀՐԴՈՑ ԱՒՈՒՐՆ

---

Յարութեան:

Յինանց՝ մինչ ի Համբարձումն, եւ ամենայն կիւրակէից յարութեան:

Յարութեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք յարութեան քո Տէր:

Համբարձման:

Համբարձման Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք համբարձման քո Տէր:

Հոգւոյ գալստեան:

Գալստեան Հոգւոյն սրբոյ երկիր պագանեմք:

Դպ. Փառք գալստեան քո Տէր:

Վարդավառի:

Այլակերպութե՛ Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք հրաշալի այլակերպութե՛ քո Տ՛ր:

Տօնից Աստուածածնի:

Տէրութեան Քրիստոսի ի տօնի (ընծայման) մօր իւրոյ եւ կուսի երկիր պագանեմք:

Դպ. Փառք տէրութեան քո Տէր:

Եւ թէ կիւրակէ հանդիպի, Յարութեան Քրիստոսի ի տօնի . . . : Բայց զփոխմանն ասանէ այսպէս ասեն.

Գալստեանն Քնի ի փոխումն մօր Բւրոյ եւ կուսի երկիր պագանեմք:

Դպ. փառք գալստեան քոյ Տէր:

Խաչի:

Սուրբ խաչին Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք սուրբ խաչի քոյ Տէր:

Եկեղեցւոյ:

Տէրութեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք տէրութեան քոյ Տէր:

Ծննդեան:

Ծննդեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք ծննդեան քոյ Տէր:

Տնօրէնութեան:

Տնօրէնութեան եւ անուան Քնի երկիր պագան:

Դպ. փառք տնօրէնութե՟ եւ անուան քոյ Տր՟:

Յայտնութեան:

Յայտնութեան եւ մկրտութե՟ Քնի երկիր պագ:

Դպ. փառք յայտնութեան քոյ Տէր:

Տեառնընդառաջի:

Քառասնօրեայ գալստեան Քրիստոսի երկիր պագ:

Դպ. փառք գալստեան քոյ Տէր:

Աւետման:

Մարդեղութեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք հրաշալի մարդեղութե՟ քոյ Տր՟:

Ղազարու եւ Ծաղկազարդին:

Գալստեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք գալստեան քոյ Տէր:



Աւագ Հինգշաբթու:

Տէրութեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք տէրութեան քոյ Տէր:

Պահոց աւուրցն:

Տէրութեան Քրիստոսի երկիր պագանեմք:

Դպ. փառք տէրութեան քոյ Տէր:

Այլ եւ է տօնս Սրբոց՝ յաղթելոյն տաճարայէն, յեւ զստոյգն ես այլուր՝ Զտէրութիւնդ քո:

---

ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԷՍԻ ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

# ԵՐԳ ԺԱՄԱԿՄԱՆ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

ԸՍՏ ԱՒՈՒՐՑ ՇԱԲԱԹՈՒՆ

---

ԿԻՐ. Ալէլուիա. ալէլուիա. ալէ-լուիա:

ԲՀ. Լոյս ճշմարիտ եւ ճառագայթ Հօր. ծագումն եւ կնիք. Բան եւ ծնունդ: Որ կանգնեցեր յեօթանց սեանց զեկեղեցի սուրբ. ածեալ ի սպանդ զորթն պարարակ: Շնորհեա մեզ. կերակուր յիմաստութեան քում սեղանոյ. ողորմեա:

ԳՀ. Հաց կենաց եւ անմահութե՟ ճաշակ. սուրբ եւ անճառ սոսկալի խորհուրդ:

Որ ի յերկնից իջեր կենդանութիւն մարդկան. կենդանի եւ կենդանարար։ Պահպանեա քաղցելոցս ընդ քաղցրութեան քում ճաշակումն. ողորմեա։

ԴՀ. Դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան. տէր երկնի, ի յերկնայնոցն օրհնեալ դասուց։ Որ զմարմին քո եւ զարիւնդ անապական բաշխեցեր առաքելոցն։ Մաքրեա զմեզ հաղորդիլ սրբութեան քում խորհրդոյ. ողորմեա։

ՆՀ. Բան Հօր եւ քահանայապետ մեծ. յանմարմնոցն գովեալ ի բարձունս։ Որ ի վերայ խաչին պատարագեալ մարմնով, հեղեր զարիւնդ ի փրկութիւն։ Սրբեա զմեզս մեր կենարար եւ փրկական քաւիչ քո արեամբդ. ողորմեա։

ՈՒՐ. Վէմ հոգեւոր եւ գլուխ անկեան օծեալ. բարեբանեալ ի հրեշտակաց։ Որ ի խաչին բացեր զկողահոս աղբիւրդ, զանմահութեն ցօղեալ տիեզերաց։ Արբո եւ մեզ ծարաւեացս զբաժակ քո փրկութեան. ողորմեա։

ՇԲ. Գառն Այ զենեալ միշտ եւ կենդանի. անմեղ եկեալ ի պատարագ։ Որ ի հաշտութիւն Հօր պատարագեալ բառնաս զմեղս աշխարհի. յանմահից զօրաց փառաւորեալ։ Յիշեա զհոգիս հաւատով ի քեզ ննջեցելոցն մերոց. ողորմեա։

---

Շարական ԳՁ. տաղաչափ։

Վերանձգողն երկնից մշտընջենաւոր Հօր



Որդին. ներգործեղ խմիս ի վեր քան ըզհրաշս. ծառայի առեղ ըզկերպ. անկողոպտելի ածութեն։

Բաշխէ զմարմին իւր եւ զարիւնն նոր ուխտ անուանեալ եւ յիշատակ կամաւոր մահուանն. մերձեցելոցս ի նմա սրբութեամբ։

Որ մարմնով եւ արեամբ քո ցուցեր ըզթողութիւն մեղաց. որք միշտ պատարագիս ի մեզ անծախապէս. մաքրեա ի մէնջ ըզմեգ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ։

Որ քաւիչ զայս նոր ուխտ ցուցեր յետ առաջնոյ քոյ. մահացելոցս ի ճաշակմանէ նախահօրն. մաքրեա ի մէնջ ըզմեգ խաւարին խորհրդոյ եւ լուսաւորեա զմեզ։

Որ կազմեցեր սեղան խորհրդոյ. եւ արբուցեր յանմահական բաժակէն. սրբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատանն. աղաչեմք փրկիչ ողորմեա։

Մաքրեա ըզմիտս եւ ըզխորհուրդս. զի եւ մեք հաղորդեսցուք սրբութեամբ. ընդ սրբոց քոց առաքելոցն այսօր ի սուրբ վերնատանն. աղաչեմք փրկիչ ողորմեա։

---

Տաղ Բաշխման։

Մայր հաւատոյ սուրբ հարսնարան.
Եւ առագաստ գերադրական.

Տուն փեսային անմահական
Որ զարդարեաց զքեզ անվախճան:
Երկրորդ երկին դու հրաշական:
Փառաց ի փառըս բարձրական.
Որ զմեզ ծնանիս լուսոյ նըման
Աւազանաւն որդիական:
Բաշխես ըզհացըդ մաքրական,
Ջարիւնդ ըմպել տաս սոսկական.
Հանես ի վեր գերաստիճան
Իմանալեացըն զուգական:

Ե՛կայք որդիք նոր Սիոնի.
Մատիք առ Տէր մեր սըրբութեամբ.
Ճաշակեցէք եւ տեսէք.
Զի քաղցր է Տէր մեր զօրութեամբ:

Նա բաժանեաց ըզՅորդանան.
Դու զծով մեղաց աշխարհական.
Նըմա Յեսու մեծ զօրական.
Քեզ Տէր Յիսուս Հօր էական:
Հինն օրինակ քեզ եւ նման.
Դու խորանին գերագրական.
Նա խորտակեաց զդրունս անդամանդ.
Դու դըժոխոց զդրունս ի հիմանց:

Հացս այս մարմին է Քրիստոսի.
Բաժակս արիւն նորոյ ուխտի.
Ծածկեալ խորհուրդըն մեծ յայտնի.
Աստուած ի սմա մեզ տեսանի:



Սա է Քրիստոս Բանն Աստուած,
Որ ընդ աջմէ Հօրըն բազմի.
Եւ աստ ի մեզ պատարագի.
Բառնայ ըզմեղըս աշխարհի:
Այն որ օրհնեալ է յաւիտեան
Հարբ եւ Հոգւովըն միաբան.
Այժմ եւ յաւէտ եւ յապագայն
Եւ անըսպառ միշտ յաւիտեան:

---

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆԻՆ

Երբ եպիսկոպոս լինի խորհրդատուն, առնու եւ զսուրբ կոնքեան եւ ածէ ի վերայ ընծային, եւ զպատուական եմիփորոնն: Եւ փոխերգն եղանակէն է զփետտաւորէին՝ Շր. Խորհուրդ խորին. երես 1:

(Եւ յերգեանն առեն Շարական Եկեղեցւոյ. ԳՁ:

Այսօր ածութիւն զուարճանայ Նոր հաստատելով զերկիր. պարեք սուրբ փառաբանեն զուարթնոց. եւ մեք ձայնիւ օրհնութեամբ զարդարեսցուք սուրբ ըզտօնս: Այսօր եւ մեք ցընծամք տօնիւս ընդհանուր հնչմամբ. մեծապէս փայլմամբ երեւեցաւ յաշխարհի. առ Աստուած գոհութիւք ընթանան. պատմեն անդադար զբան կենդանի: Խընդա եւ զուարճացիր եկեղեցի. կուսնք եւ հարսն երկնաւոր փեսային. ահա տեսա-

նեմք զօծեալն ըզՔրիստոս. գոլով առ քեզ լոյս-սըն հեթանոսաց։

Կամ այլ շարական եկեղեցւոյ։

Եւ գան ի դուռն եկեղեցւոյն. եւ ասեն

Շարական ԴԶ։

Հրաշափառ Աստուած եւ միշտ բարեխնամող. որ յառաջագիտութեամբ ընտրողութիւն Հայաստանեայց ընկղզընաւորեալ. ի պարթեւական մեղապարտ ազգէն լուսաւորիչ մեզ շնորհեցեր. վասն որոյ բարեխօսութեամբ սորա փրկիչ կեցո ըզմեզ. այժմ եւ ի քո յահաւոր գալստեանն։)

Կց։ Թագաւոր երկնաւոր. զեկեղեցի քո անշարժ պահեա. եւ զերկրպագողս անուանդ քում պահեա ի խաղաղութեան։

Եւ ասեն Սաղմոս. ԻԵ։ Կց. Լուացայց. եւ լու-նայ շՅեաս։ Եւ այլն ամենայն ըստ կարգի, երես 2։

Ձայնէ Աղաղակեցէք սաղմոսին տէրունի

Սրբ. Մի եկեղեցեաւս աղաչեսցուք։

Աղօթք։

Եպս. Առ դրան սուրբ տաճարիս եւ առաջի աստուածընկալ եւ պայծառացեալ սուրբ նշանացս եւ սուրբ տեղւոյս խոնարհեալ՝ երկիւղիւ երկիր պագանեմք. զսուրբ, զհրաշալի եւ զյաղթող (զյարութիւնդ) քո փառաւորեմք։ Եւ քեզ մատուցանեմք զօրհնութիւն եւ զփառս ընդ Հօր



եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Եւ մտանեն յեկեղեցին սաղմոսելով. Կց. Մտից առաջի սեղանոյ։ Փխ. Դատ արա ինձ Աստուած. երես 5։

Եւ յետ աւելոյ գի յարկի սրբութ. մատուցեալ անկանի եպիսկոպոսն առաջի սրբոյ սեղանոյն ի վերայ երեսաց իւրոց ըստ եւ անմտաւանէ. եւ ասասցէ զԱղօթս Հոգին սուրբ տնօրինէր զորմայն։

Ամենակալ բարերար մարդասէր Ած բոլորից։

Դարձեալ կրկնեսցի ի նոյն կարգ բանի։

Աղաչեմք եւ աղերսեմք արտասուալից հառաչ։

Եւ դպիրքն եղանակեն մեղեդի խորհրդաւոր կամ Երգ։

Ընտրեալդ յԱստուծոյ. ով երջանիկ դը
(Հայրապետ.)

Նըմանեալ Ահարոնի. եւ Մովսէսի մարգարէին.

Այնմ որ զգեստուցն էր յօրինող. զոր Ահա-րոն միշտ ըզգենոյր։

Յօրինէր ըզպատմուճանն՝ զոր ի չորից կազմեալ նիւթոց.

Ի կարմրոյ, ի կապուտոյ, ի բեհեզոյ, ի ծիրանւոյ։

Թելըզթելըն յօրինէր. կարգն առաջին էր կար-կեհան.

Եւ զօծումըն գրապանին շուրջանակի բոլորաշէն։

Եւ յընթացս գարշապարին հընչէր երկիր, ցըն-ծայր խորան։

Արդ ի նոյն նմանութիւն քո ըզմեր տէրս յօրինէ:
Յորժամ մըտցես ի նը խորանն, անդ յիշեսցես զմեր ննջեցեալսն:
Յորժամ առնես ըզպատարագն, յիշեա եւ զիս ըզբազմամեղս:
Զի եւ մեզ ողորմեսցի. ի միւսանգամ իւր գալըստեանն:
Հօրըն փառք Որդւոյն պատիւ. եւ նը Հոգւոյն այժմ յաւիտեան.
Յաւիտեանս յաւիտենից. Քրիստոս օրհնեալ ի հաւիտենից:

Զընտրեալն որ առեալ՝ մեղքի մի առէր:

Սրկ. Օրհնեա տէր:

Եպիսկ. Զի քո է գթութիւն եւ կարողութիւն եւ մարդասիրութիւն, զօրութիւն եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ասա յքեն զվարագոյրն:

Դպ. Շր. Գկ. Ցայս յարկ նուիր. երես 7:

Եւ բանան զվարագոյրն:

Սրկ. Օրհնեա տէր:

Եպիսկ. Օրհնեալ Թագաւորու. Եւ այլն բաց կարգի: Եւ աւրհնութեն հրաման առեալ կարդայ զաւետարանն, եւ ասէ զհաւատամսն յայնժամ:

*Վերաբերումն Ընծայից*:*

Եթէ հանդիսաւոր օր լինի եւ ընծայսն վերաբերել կամիցի, այս է արարողութիւնն:

* Հանդիսաւոր վերաբերումն ընծայիցն խափանեալ է առ մեզ եւ չէ այլ եւս ի կիր արկանել:



Յորժամ պատարագիչն ասէ. Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեան. սրկ. Սաղմ. ասացէք: Եւ դպիրքն երգեն զՍրբասացութիւնն ըստ խորհրդոյ աւուրն: Աղօ՝

Սրկ. Մի ոք յերախայից:

Դպ. Մարմին տէրունական:

Եւ գան ընկալնելով ի սուրբ խորհրդանոցն:

Սրկ. Յարեւմուտս եհար զխորան իւր. եւ ինքն որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ:

Դպ. Եւ ցնծայ նա որպէս հսկայ. յընթանալ ըզճանապարհս իւր:

Սրկ. Որք ըստ քրովբէիցն:

Դպ. Խորհրդաբար կերպարանիմք:

Եւ գան յարեւելից կողմն:

Սրկ. Ճանապարհ արարէք այնմիկ. որ նստի յերկնից երկինս ընդ արեւելս:

Դպ. Եւ կենդանարար Երրորդութեանն. զերեքսրբեան օրհնութիւնս մատուցանեմք:

Եւ գան ի հարաւակողմն:

Սրկ. Աստուած ի հարաւոյ եկեսցէ. եւ Սուրբն ի Փառան լեռնէ:

Դպ. Զամենայն ըզկենցաղական. ի բաց դընելով ըզհոգս:

Եւ գան յառաջեան խորանին:

Եւ բարձեալ ասասցէ հանդարտութեամբ:

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր.

Համբարձցին դրունք յաւիտենից. եւ մտցէ Թա-գաւոր փառաց:

Եւ պատարագողն խնկարկէ եւ հարցանէ.

Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարող ի պատերազմի:

Դպ. Որպէս զի զԹագաւորն. ամենեցուն ընդունիցիմք:

Բարձողն. Համբարձէք իշխ. որպէս ի վերոյ:

Պատարագիչն. Ո՞վ է սա Թագաւոր փառաց եւ Տէր զօրութեանց:

Դպ. Եւ ըզհրեշտակացն հանդիսապէս. ընծայեալ բերեմք ըզկարգ:

Բարձողն. Սա ինքն է Թագաւոր փառաց:

Եւ պատարագողն առնու ի ձեռաց քահանայէն՝ տանելով.

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Դպ. Ալէլուիա, ալէլուիա:

Ապա երգ. Եւ ես խաղաղ: Եւ ես հաւատով եւ սրբութեամբ. երես 18: Եւ այլն ամենայն ըստ կարգի:

(Յաւարտման պատարագին Շարական Դ Զ:

Որ ըզշնորհս աստուածային առ ի վերուստ իջեալ յերկնից. պարգեւեցեր հիւսիսականացս. ի ձեռըն նր վարդապետին. աղաչանօք սորա ողորմեա մեզ Աստուած:)

---

# ՆՆՋԵՑԵԼՈՑ ՊԱՇՏԱՄԱՆՆ

Մեղեդի կամ տաղ՝ շարական ասա:

(Բայց առանց ի ննջեցելոց պաշտաման պատարագին փո-խանակ մեղեդւոյն զԸնտրեալէն զի մաանն ասէն. Յորժամ մտցես. երես 44. Եւ Սրբասացութեան՝ Վասն յիշատակի:)

Ժամամուտ, շարական եւ այլն ամենայն յաւուր պատ-շաճին է:

---

Երգ պաշտաման ննջեցելոց:

Սրկ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրկ. Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն,

Ամենասուրբ Երրորդութիւն:

Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրկ. Տուր աշխարհիս խաղաղութիւն.

Եւ հիւանդաց առողջութիւն.

Եկեղեցւոյ հաստատութիւն.

Ննջեցելոց արքայութիւն:

Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Սրկ. Սբ անմահ պատարագիս միջնորդութ:

Դպ. Յիշեա Տէր եւ ողորմեա:

Ի հանդիսի առաւօտու առանց յաւելման՝

Շնորհիւ աւուրս մեզ ողորմեա:

Ապա Երգ. Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, դպիրք:

## ՊԱՇՏՕՆ

### ՀԱՆԳՍՏԵԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Յաւարտ պատարագին, զկնի Պահպանեա աղօթիցն

Քհն. Օրհնեալ Տէր † մեր Յս Քս. ամէն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ, կեցո եւ ողորմեա:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ:

Եւ խունկ ծխեն:

Եւ սկսանին Շարական հանգստեան, ըստ ձայնին:

Ա Ձ.

Որ անճառ տնօրէնութեամբ ի փրկութիւն ազգի մարդկան խոնարհեցար Բանդ Աստուած. *այսօր հանգոմմ եւ զմեր զննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր: Որ անչարչարելիդ մարմնով եկիր կամաւ ի չարչարանս. եւ ի խաչին բեւեռեցար. հեղեր զարիւնդ ի փրկութիւն. այսօր հանգո: Որ թաղմամբն երեքօրեայ զզօրութիւն մահու լուծեր. եւ կոխեցեր զիշխանն մահու. եւ վերածեր զննջեցեալսն. այսօր հանգոմմ:

Մժ. Որ զաւետիս Հոգւոյն ի հրեղէն ի հրեշտակէն ընկալար ուրախ լեր. բերկրեալդ



Տէր ընդ քեզ Մարիամ ամենօրհնեալ: Անըսկիզբըն Բանըն հաճեցաւ առնուլ մարդեղութեամբըն ըսկիզբըն ի կուսէդ. Քրիստոս Աստուած թագաւորն յաւիտենից: Աղաչեմք զքեզ որ Աստուածածին ու քն բարեխօսեա փրկել զըժողովուրդս քո զոր գընեաց արեամբըն իւրով:

Խղ. Հրաշակերտ եւ զօրեղ փայտ խաչի քո Քրիստոս. գաւազան զօրութեան ի յերկրի երեւեր. *եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Զոր Հրէիցըն ծածկեալ զանթաքչելի զըգանձըն. փափագմամբ թագուհւոյն փայտ կենաց յայտնեցաւ. եկայք ժող: Փառք Հօր եւ: Սա է զէն յաղթութեան հաւատացելոց. ախոյեան եւ կնիք յաղթող ընդդէմ թըշնամւոյն. եկայք ժող:

Այժմ եւ միշտ: Որ հրաւիրեցեր յանմահութիւն զազգըս մարդկան. անմահութեանց բաշխող Քրիստոս. աղաչանօք Ածածնին. այսօր հանգոմմ եւ զմեր զննջեցեալսն ընդ սուրբս քո. որ միայնդ ես մարդասէր:

Ակ.

Զեռուք քո արարին եւ ըստեղծին զիս ի հողոյ. ի յօրհնել զքեզ Աստուած յաւիտեան: Իսկ պատրանօք բանսարկուին խափանեցայ յանճառ լուսոյն. եւ դարձայ անդրէն ի հող յորմէ ստեղծայ:

Մժ. Ով գերահրաշ ծաղիկ բուրեալ յԵդեմայ. հոտ անմահութեան ծնընդոցս Եւայի. յորմէ սփռեցաւ մահ ընդ տիեզերս. * օրհնութեամբ ըզքեզ մեծացուցանեմք: Դու լուծիչ երկանց բարձող անիծից. ծագումն արեւու լուսոյն ճըշմարտի. որով հերքեաւ խաւարն առաջին. օրհնութ: Ըզքեզ ունիմք բարեխօս կոյս ամէն օրհնեալ. մայր անարատ Էմմանուէլի. տաճար Բանին Հօրն երկնաւորի. օրհնութ:

Խն. Սեղան քո Տէր զօրութեանց հաւատով կանգնեցաւ ի խորանի քում. * եկայք ժողովուրդք երկրպագեսցուք: Վէմ պատուական ի խորանի քում հիմնեցաւ այսօր. եկայք: Փառք Հօր: Ի սմա մատուցաւ ճըշմարիտ պատարագ եւ զենումն անապական. եկայք:

Այժմ եւ միշտ: Մըխիթարիչ սուրբ Հոգի լուսաւորեա զմեր ննջեցեալսն. եւ հանգո զհոգիս նոցա ընդ սուրբս քո:

ԲԶ.

Թագաւոր անմահ արարիչ յաւիտենից. մարդասիրութեամբդ քո խընայեա յանձինս մեր. * ստեղծիչ կենդանեաց եւ հանգուցիչ ննջեցելոց: Ի խաչին բեւեռեցար. զմահու լուծեր զիշխանութի. յաւիտենից ըզննջեցեալսն վերածեր յանմահ ի կեանս. ստեղծիչ:



Ծն. Խոնարհեցար ի բարձանց. եւ մարմնացար ի կուսէն. որ նըստէիրդ ի քրովբէս. արարիչդ արարածոց: Երկինք չէին բաւական փառաց անմահ անեղիդ. արգանդ կուսին ժուժկալեաց ընդունել ըզգանձդ երկնային: Յորմէ սարսեալ սերովբէքն ոչ իշխէին մերձենալ. ի խանձարուրս պատեցար եւ եդար ի մսուր յանբանից:

Խն. Այսօր խընդրի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթայ ի ձեռն աստուածասէր դըշխոյին. * եկայք հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս: Այսօր ընծայէ Գողգոթա ըզծածկեալն ի յերկրի. վերաբերեալ անուշահոտ խընկովք. ի ձեռն երանելւոյն Յուդայի. եկայք հաւատ: Փառք Հօր: Այսօր ի ձեռըն փրկական սուրբ խաչին կենագործի պատանին մեռեալ. եւ ողբայ սատանայ ըզկործանումն իւր. իսկ մեք Քրիստոսի հաւատացեալք երկրպագեսցուք աստուածային սուրբ նըշանիս:

Այժմ եւ միշտ: Արժանաւորաց քոց աղօթիւք յիշեա ըզմեր ըզննջեցեալսն. յորժամ գայցես անճառ փառօք հատուցանել մարդկան ըստ գործս. եւ մեր ննջեցելոյն շնորհեա դասել ընդ սուրբս քո:

ԲԿ.

Գովք զօրութեանց թագաւորն. ի նորոգել զարարածս. ի ձայն աՀեղ բարբառոյ. զարթուցանէ զննջեցեալսն: Դողան երկինք եւ երկիր. յաՀէ փառաց Քրիստոսի. Հուր բորբոքեալ ընթանայ. բոցակիզէ զմեղաւորսն: Նորափետուր զարդարին. դասուք սրբոց կուսանացն. ուրախութ մտանեն ի յառագաստ փեսային:

ԱՁՆ. Որ ողորմեցար ի մեղս ծնեալ մարդկան Հայր երկնաւոր ըստ մարգարէին. եւ ետուր բնութեանս այսօր պարգեւ զկոյսն սուրբ զծնող Որդւոյդ միածնի. * մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեա: Որ ցուցեր ի մեզ յամպոյ օրինաց Որդիդ այսօր զկոյսն Մարիամ. յորմէ ծընար մարմնով եւ բարձեր նովաւ զմեղս նախաստեղծին Ադամայ. մաղթա: Որ մաքրեցեր Հոգիդ սուրբ զսիրտ եւ զարգանդ մօր քո փառակցին. այսօր յամուլ ծնողաց նորին ետուր զմայր Բանին զօրՀնիչն Եւայի. մաղթա:

ԽՂ. Ճառագայթ փառաց Հօր Որդիդ միածին. որ զկոյսդ անվայրափակ մարմնով պարագրեալ. * այսօր ի Թաբօր փառօք փայլեցեր: Որ աննիւթ սրովբէից անՀաս ի վեր քան ըզբան ծառայի կերպիւ պարածածկեալ զկոյսդ անըստուեր. այսօր ի Թաբօր: փառք Հօր: Որ



Հրեղինացն անմերձենալի Հուր աստուածութեամբ. ի Հողեղէնս խոնարՀեալ լուսոյ արփիական. այսօր ի Թաբօր:

Այժմ եւ: Ի քեզ եմք ապաւինեալ. ամենօրՀնեալ սրբուՀի. լեր բարեխօս անդադար. վասն մերոյ փրկութեան:

ԳՁ.

ՅաՀաւոր քո գալստեանն յորժամ գաս Տէր ի յերկնից աՀագին քո զօրութեամբ. եւ նշան նմ խաչին պայծառանայ ի մէջ երկրի: Նորոգին տարերք երկրի ի ձայնէ Հնչման փողոյն. որ գոչէ զկենդանութիւն. ասէ արիք եկըն Տէր կենդանեաց եւ մեռելոց:

ԾՆ. Դասք անմարմնականք երկնաւոր զօրացն ի մէջ Հովուացն օրՀնէին զծագումն լուսոյ. մեծին ի Հօրէ մեզ ի փրկութիւն: Եւ մոգքն աստեղբ նշանաւ եկին ի ԲեթղեՀէմ. երկիր պագին Տեառն. եւ ի յայրին մատուցին զընծայս խորՀրդոյ: Եւ Հովիւքն երգեն ընդ Հրեշտակս փառք ի բարձունս մեծիդ Աստուծոյ. որ եկիր եւ փրկեցեր ըզտիեզերս քոյով յայտնութեամբդ:

ԽՂ. Քեզ Քրիստոսի կաթուղիկէ եկեղեցւոյ շնորՀողի. զյաղթական զպատուական զաստուածընկալ սուրբ նշանս. մատուցանեմք զօր-

հներգութիւն միշտ ի բարձունս: Սա կամաւ քո Քրիստոս եւ Թեւօք ամենազօր սուրբ Հոգւոյն. եւ դասուք հրեշտակաց թռուցեալ եկաւորի ի լեառըն Վերագայ բընակել ի նմա: Փառք Հօր եւ Որդւոյ: Եկայք ժողովուրդք երկրպագեսցուք ծայրն ըմբնըշանիս. համբարձէք միաբան ըզձեռըս ձեր ի սրբութիւն. եւ ըզընակեալն ի սմա միշտ փառաւորեսցուք:

Այժմ եւ միշտ: Շնորհեա մեզ Տէր ողորմութիւն ի ծագել սրբոյ խաչին. որով եղեւ մեզ փրկութիւն. զի նովաւ եկցուք ընդ առաջ Աստուածորդւոյդ որ ի յերկնից:

Գ Կ.

Ընդ զուարթունս երկնից օրհնեցէք ըզնըստեալն ի յաթոռ փառաց. * զի հանգուցէ ըզնընջեցեալ ծառայս իւր յաւիտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալըստեամն: Ընդ սերովբէիցըն սրբասաց ձայնիւ գովեցէք զՈրդին միածին. զի հանգուս:

ՄԺ. Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց որ եղեր արեւելք արեգական արդարութեան. եւ նըստելոցս ի խաւարի լոյս ծագեցեր. * վասն որոյ ամենեքեան ըզքեզ միշտ մեծացուցանեմք: Անապական տաճար եւ մորենի անկիզելի. որ զանշէջ հուր



ածութեան ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեան կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ ամե: Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտին. որով ելք յերկիր աւետեաց հորդեալ. Հոգւով ի քեզ տըպաւորեալ Բանին. վասն որոյ ամենեք:

Խ Ն. Ով պանծապան որ ծագեցար յԵդեմայ. նըշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամւոյն: Դու փակելոյ դրախտին բացող եւ առաջնորդ աւազակին. որ զբոցեղէն սուրըն կապտեաց մնեղին հրամանաւ: Փառք Հօր: Քեւ ցընծան ըստորայինքս ամ ի միւսանգամ քո գալըստեանն. եւ յաւէժս զուարճանան դասք անմարմնոցն առէկս:

Այժմ եւ միշտ: Ընդ քերովբէիցըն փառաբանութեանց բարեբանեցէք զՀոգին ճըշմարիտ. զի հանգուսցէ ըզնընջեցեալ ծառայս իւր յաւիտենից. ի միւսանգամ փառաց իւրոյ գալըստեանն:

Դ Զ.

Ահագին է օրըն դատաստանին. եւ դողումն առաջի բեմին. սարսափին հրեշտակք սասանի երկիր. ըզնընջեցեալըն մեր մի անտես առներ. յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սբ Ածածնին: Բանին դրունք երկ-

նից բարբառին հրեշտակք. բանին գերեզմանք բորբոքի գեհենն. ըզնընջեցեալսըն մեր մի անտես առնէր. յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին:

Մծ. Ծագումըն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ. եւ բանըն հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ. անվընաս պահելով զարարածս ամ՟: Ծագումըն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ. ճառագայթելով զարարածս ամ՟. երկինք ցընծային եւ երկիրս ուրախանայր. եւ Քն Ած ընդ մարդկան շըրջեցաւ: Առ քեզ ապաւինիմք ամենասըրբուհի. գերագոյն եւ հրաշալի եւ բաշխող բարութե. աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աշխատելոց. եւ եղեր վերընկալ Ածային բանին:

Խղ. Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս. որ կանգնեցեր ի փրկութի աշխարհի. *սա՟ պահեսցէ ըզմեզ յամենայն փորձութենէ: Քանզի ի սմա բարձրացար Աստուած. եւ ի սմա հեղեր ըզպատուական նբ՝ զարիւնըդ. սա՟ պահ: Փառք Հօր: Եւ ըզքո միւսանգամ ըզգալուստըդ. նըշանաւ խաչի քո ցուցեր աշխարհի. սա՟ պահ:

Այժմ եւ միշտ: Գալարին երկինք որպէս մագաղաթ. գերագոյն գոչէ փող գաբրիէլեան. գերապանծ լուսով զարդարին արդարքն. ըզ-



նընջեցեալսըն մեր մի անտես առնէր. յահագին աւուրըն դատաստանին. բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին:

Դկ.

Ես ասացի Տէր ողորմեա հոգւոյ իմոյ բազմամեղի. որ բնակեալդ ես ի յերկինս. եւ յանմարմնոց փառաբանիս. * յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ. եւ փարատեցո զցաւս անձին իմոյ: Պակասեցայ յազգատոհմէ. լըքեալ թողի զկեանս աշխարհի. եւ մարմին ունայնութեան դարձաւ ի հող ուստի ստեղծաւ. յիս մարդաս: Յաւուր յայնմիկ մատնեցայ ի ձեռս ահեղ հրապարակին. եւ առ քեզ ապաւինիմ ստեղծող բնութ Տէր բոլորից. յիս մարդասիր: Հայեցայ ի բարձունս առ քեզ կարող յամ՟. ընկալ զիս յարկս արդարոց. ամրածածուկ աջովըդ քո. յիս մարդաս: Ահա ի խաղաղութիւն դարձայ ի հող յորմէ ստեղծայ. նորոգող ճարտարապետ պարգեւատու ողորմութեան. յիս մարդասիրեա:

Մծ. Աստուածածին մայր եւ կոյս. ծագող արեգականն արդարութեան. որ լուսաւորեացն ըզմեզ. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին: Էլոյծ զօրէնըս բնութե մարդկան. հրաշափառ

քո՛ եւ ծընունդ եւ զէութի՛ բնութեան՝ ամբողջ պահեալ. եւ կուսութիւնդ քո ոչ խախտեցան կնիք. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին։ Զքեզ մորենի անկէզ. լեառըն վիմածին դուռըն փակեալ եւ աղբեր կնքեալ. նախատեսացըն գուշակեալ մայր եւ կոյս. հոգեւոր երգով զքեզ բարեբանեմք եւ փառաւորեմք ըզմիածին քո զՈրդին։

Խն. Խաչի քո Քս երկրպագեն արարածք ամենայն. որ ի փրկութի մեզ կանգնեցաւ. սա եղիցի մեզ պահապան յաղթող. * պարեցուցանել ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։ Ի սմա բարձրացար բարձրոց անիծից. որ փառաւորեալդ ես ընդ Հօր. ժողովել ըզհեռացեալըն կենսաբեր փայտիւն. ապրեցուց: Փառք Հօր: Սովաւ լուսաւորեցան արարածք ամ. սմա սպասէին արգելեալքն ի մեղսաւէր բանտին. որ ազատեաց ըզմեզ ի պատրանաց բանսարկուին։

Այժմ եւ միշտ: Այլ կենդանիքս օրհնեմք ըզքեզ Քրիստոս Թագաւոր յաւիտենից. որ փառօք փառաւորիս. ի յերկնայնոց եւ յերկրայնոց. յիս մարդասիրեա բազմագութ փրկիչ. եւ փարատեցո զցաւս անձին իմոյ։



Եւ ասէ սաղմոս ձայնիւ՝ յառաջընթաց հանգըստեան Աւետարանին։

Ալէլուիա. ալէլուիա.

Սաղմոս ՃԺԹ։

Կց. Եղիցին ականջք քո ի լսել ըզձայն աղօթից իմոց։

Փխ. Ի խորոց կարդացի առ քեզ Տր. Տէր. լուր ձայնի իմում։

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց։

Թէ զանօրէնութիւնս քննես Տէր. Տէր ո կարէ կալ առաջի քո. զի ի քէն է քաւութի։

Վն անուան քո համբերի Տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի Տր։

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ. ի պահէ առաւօտու յուսացաւ Իսրայէլ ի Տէր։

Ի Տնէ է ողորմութի բազում. եւ ի նմանէ է փրկութի. — Եւ նա փրկեաց զԻէլ յամ նեղութեանցն։

Սրկ. Որթի։

ՔՀՆ. Խաղաղութիւն ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք։

ՔՀՆ. Սրբոյ Աւետարանիս որ ըստ (Մատթէոսի։)

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սրկ. Պռօսխումէ։

Դպ. Ասէ Աստուած։

Եւ ընթերցեալ լինի Աւետարան հանգստեան ըստ յայնէն:

ԲԿ. ԴԿ. — Ի ՄԱՏԹԷՈՍ:

ԺԱ. 25: Յայնմ ժամանա. վերջ՝ փոքրոգի: 30:
ԺԳ. 36: Յայնժամ թող. Վ. զնոր եւ զհին: 52:
ԻԱ. 18: Եւ այգուցն. Վ. հաւատալ նմա: 32:
ԻԵ. 31: Եւ յորժամ. Վ. յաւիտենականս: 46:

ԲՁ. ԴՁ. — Ի ՄԱՐԿՈՍ:

Գ. 1: Դարձեալ սկսաւ. Վ. լսելոյ՝ լուիցէ: 9:
Դ. 26: Եւ ասէր. այսպէս. Վ. մեկնէր զամ: 34:
ԺԳ. 24: Այլ յաւուրսն. Վ. անցանիցեն: 31:
ԺԳ. 32: Այլ վասն աւուրն այնոր. Վ. արթուն կացէք: 37:

ԱԿ. ԳԿ. — Ի ՂՈՒԿԱՍ:

Թ. 10: Դարձան առաքեալքն. Վ. սակաւի: 17:
ԺԲ. 32: Մի երկնչիր. Վ.-չեսցեն ի նմանէ: 48:
ԺԷ. 3: Զգոյշ կացէք. Վ. առնել՝ արարաք: 10:
ԻԱ. 27: Եւ յայնժամ տեսցեն. Վ. լսել ի նմանէ: 38:

ԱՁ. ԳՁ. — Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ:

Բ. 13: Եւ էր մերձ զատիկն. Վ. ասաց Յս: 22:
Ե. 19: Պատասխանի ետ Յս. Վ. զառաքիչն նորա: 23:
Ե. 24: Ամէն ամէն ասեմ. Վ. առաքեաց զիս: 30:
ԺԲ. 24: Ամէն ամէն ասեմ. Վ. պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:



Երգ:

Փառաց ի փառըս բարձրանան. Աջակողմեանքըն վերանան. Յորժամ լըսեն զերանական. Ձայն օրհնութեան ի քէն կոչման. Նընջեցելոյս մեր լըսեցո. Ձայնին բարբառըդ քո. Դասաւորեա ըզսա վերնոցն. Երգել քեզ փառս ընդ զըւարթնոցն:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ. Ընդ նընջեցեալըս հաւատով ընկալ ըզմեզ նովին յուսով. Յերուսաղէմ քաղաք վերին Յորում արդարքըն ժողովին. Փառս վերերգել միշտ ընդ նոսին Երրորդութեանդ երրեակ անձին:

Եւ կցուրդեն մի տուն յԱրարիչ եւ մարդասիրէն կամ յես ասացին:

Դ.Ձ.

Արարիչ եւ մարդասէր. Անոխակալ եւ բարեգութ. Որ գովիս ի սրովբէից. Տէր դատաւոր արդարութեան. Ընդ սըրբոց առաքելոց Տէր պըսակեա զմեր նընջեցեալըն. * Ողորմած Տէր ողորմեա հոգւոցըն մեր նընջեցելոց:

Յորժամ գըրեալքըն կատարին Որ զայնմաւուր մեզ պատմեցին. Մարգարէից բանքըն յարգին. Առաքելոցըն վըճարին. Ողորմած:

Ի վերինն Երուսաղէմ ի բնակարանըս հրեշ-

տակաց. Ուր Ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ. Ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս. Ողորմ:

Թագաւոր փառաց Քրիստոս. Որ ժամանեալ գաս ի յերկնից ի վերայ Թեւոց հողմոց քո հայրենի կերպարանօք. Եւ առնես հրափորձութեամբ Ըզքննուծ որդւոց մարդկան. Ողորմ:

Ի դնել բեմին բազմի փեսայն. Եւ առագաստն զարդարի. Գաբրիէլեան փողն գոչէ. Մէք ամ անդ հաւաքին. Արդարոց դասքըն բերկրին. Իսկ մեղսասէրքըն Թախանձին. Ողորմ:

Յորժամ հնչիւն փողյն լինի. Եւ զեւտական գիրըն յայտնի. Ճառագայթ սրբոյ խաչին Յարեւելից փառօք ծագի. Հրեշտակաց գունդք ծաւալին. Հրեշտակապետք պարունակին Ողոր:

Ահեղ խորհուրդ քահանային. Բազկատարած կայ ի բեմին. Առաջի նք սեղանոյն. Հուր շիջանի խաւար մերժի. Տրտմեալ հոգիքն ուրախանան Ջի Թողութիւն մեղաց լինի. Ողորմած:

Մովսէս ածախօս Եւ Ահարոն ղեւտացին. Մարգարէքն Իսրայէլին. Եւ քահանայք հին օրինին. Յառաջագոյն մեզ ծանուցին Ըզգալուստ սուրբ միածնիդ. Ի փրկութի մեզ յայտնեցին. Յանապատի կերակրէին. Ողորմ:

Տրտմահաղորդ չարչարանօք Ի յանձն առեր ըզմահ խաչին. Եւ փայտին բարձող եղեր վասն Ադամայ նախաստեղծին. Ողորմ:



Զարհուրեցան զօրք երկնայինք Յորժամ տեսին զՏէրդ ի խաչին. Արեգական լոյս քօղարկեալ. Եւ լոյս լուսնին Նըւաղեցաւ. Յահեղ փառաց աստուածորդւոյդ Խաւար եղեւ ընդ տիեզերս. Ողորմած:

Ուրախացան ազգք մարդկան Յորժամ լըւան զքո յարութիւնդ. Նորափետուր զարդարեցան Ի յարութեան սուրբ միածնիդ. Ողորմած:

Աղաչանօք սրբոյ խաչին Եւ անբարբառ բարեխօսին. Եւ սրբոյ Աստուածածնին. Եւ Յովհաննու կարապետին. Եւ սրբոյն Ստեփանոսին Եւ առաջին մարտիրոսին. Եւ սրբոյ լուսաւորչին Հայաստանեայց հայրապետին. Եւ սրբոց առաքելոց. Եւ համօրէն մարտիրոսաց. Ողորմած:

ԴՁ.

Ես մնացի ի վերանալ յինէն միւոց իմոց. յուր երթայցեմ ես այսօր. յառաջին օթեվանին զոր ոչ գիտէի. * օգնեա եւ ինձ քն այսօր. յառաջին ճանապարհին. եւ ի միւսանգամ գալըստեանըն քո օգնեա ինձ:

Եկն եհաս օր վախճանի իմոյ. լալումն ողբումն եւ աշխարումն. սիրտ իմ խռովեցաւ յիս. եւ ոսկերք իմ ցամաքեցան. օգնեա:

Ի մահիճս իմ զարթուցին զիս պահանջողք հոգւոյ իմոյ. տանէին զիս ճանապարհ հեռաւոր զոր ոչ գիտէի. օգնեա:

Նայեցայ եւ ոչ ոք էր որ օգնէր ինձ. ապաւինեցայ յԱստուած փրկութեան իմոյ. ցընծասցէ հոգի իմ յարքայութեան քում. օգնեա։

Գրեցայ ես ի գիր կենդանութե̃. եւ մեկնեցայ երթալ առ Արարիչն երկնի և երկրի. օգնեա։

Ցանստուեր եւ յանեղ լուսոյն հեռացայ խաբմամբ խաւարային. Ճաշակեցի զմահաբեր պտուղն. հողանայ պատկեր բարերար ստեղծողիդ. օգնեա։

Ցանջատման հոգւոյս ի մարմնոյս. ի քակտել գեղեցիկ շինուածոյս. զարհուրիմ ի սպառնալեաց թագաւորին. թէ պահանջէ յինէն զտաղանդ պատուիրանին. օգնեա։

Կուսածին մարդացեալ Աստուած իմ Յիսուս. յայնմ աւուր ահեղ ատենին զգինս արեան քո մի դատապարտեր. օգնեա։

Սոսկալի է օր վախճանին. եւ ահեղ օր քոյ դատաստանին. յայնմ աւուր ահեղ ատենին զգինս արեան քո մի անտես առներ. զի պատկեր եմ բարերար ստեղծողիդ. օգնեա։

Զահաւոր դատաստան դատաւորիդ տեսի եւ զարհուրեցայ. զի անպատրաստ եգիտ զիս ի հրամանաց քոց թագաւոր յաւիտենից. օգնեա։

Աստուածածին անարատ մայր Տեառն եւ կոյս սուրբ. բարեխօսեա առ Որդին քո միածին. զի փրկեսցէ զմեզ ի սպառնալեաց գեհենոյն. եւ



պարգեւեսցէ մեզ զերկնից զարքայութիւնն, եւ հանգուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն. օգնեա։

Մաղթանք։

Քհն. Հոգւոյ հանգուցելոյս, Քն Աստուած, արա հանգիստ եւ ողորմութիւն. եւ մեզ մեղաւորացս շնորհեա զթողութիւն յանցանաց։

Քարոզ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչ։

Վասն հոգւոյ հանգուցելոյս աղաչեսցուք զփրկիչն մեր Քրիստոս. զի զսա ընդ արդարսն դասեսցէ. եւ զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ։

Աղօթք։

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգի հանգուցեալ ծառայիս քոյ այս անուն։ Յիշեա յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ. արա արժանի ողորմութեան, քաւութեան եւ թողութեան մեղաց։ Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո յաջակողման դասուն։ Զի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն, դատաւոր կենդանեաց եւ մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Օրհնեալ Տր̃ մեր † Յս̃ Քս̃. ամէն։

Դպ. Հայր մեր որ յերկինս. յոյնէ–:

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Մաղթանք:

Քրիստոս Աստուած մեր, ողորմեա համօրէն հաւատացեալ ննջեցելոց հոգւոցն. (մանաւանդ այս անուն ծառայի կամ աղախնոյ քոյ.) ամէն:

Դպ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ:

Քհն. Օրհնեալք եղերուք ✝ ի շնորհաց նը Հոգւոյն. երթայք խաղաղութեամբ, եւ Տէր եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ. ամէն:

Բ.

# ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃՔՆ

ՀԱՍԱՐԱԿԱՑ

## ՏԷՐՈՒՆԻ ԱՒՈՒՐՑՆ

Կիւրակէից յարութեան:

Կիւրակէից աղուհացիցն:

Յինանց:

## ՊԱՀՈՑ ԱՒՈՒՐՑՆ

Չորեքշաբաթու եւ Ուրբաթու:

Շաբաթապահոց:

## ՏՕՆԻՑ ՍՐԲՈՑՆ

Առաքելոց:

Մարգարէից:

Հայրապետաց:

Մարտիրոսաց:

Ճգնաւորաց:

Կուսանաց:

Այլոց սրբոց:

# ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃՔՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՑ

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆԱՑՆ, ՊԱՀՈՑ ԵՒ ՏՕՆԻՑ ՍՐԲՈՑ

Գիրք եւ աւետարան ընթերցուածոյն յաւուրն կարգաւ: Վերջին աւետարան հանապազ ի սկզբանէն է, որ է Յինանցն:

---

# ՏԷՐՈՒՆԻ ԱՒՈՒՐՑՆ

## ԿԻՐԱԿԷԻՑ ՅԱՐՈՒԹԵԱՆ

*Ժամամուտ:*

Միածին Որդի եւ Բանդ Աստուած, եւ անմահ էութիւն. որ յանձն առեր մարմնանալ ի սրբուհւոյ Աստուածածնէն եւ ի միշտ կուսէն· անփոփոխելիդ մարդ եղեալ խաչեցար Քրիստոս Աստուած. մահուամբդ զմահ կոխեցեր. մինդ ի սրբոյ Երրորդութենէն փառաւորակից ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն. կեցո զմեզ:

*Ճաշու շարականք ըստ ձայնին:*

Փոխ. Տր̃ թագաւորեաց. վայելչութ̃ զգեցաւ:

ԱՁ·

Օթագաւորըն փառաց Քս̃· որ վս̃ մեր մարմնացաւ ի սբ̃յ կուսէն եւ խաչի համբերե-

լով. * միաբանութեամբ նրգով բարեբանեսցուք: Որ ըզթաղումն երեքօրեայ յանձն էառ. յարուցեալ ի մեռելոց իշխանութեամբ. միաբ: Փառք Հօր: Կարողապէս ըզդրունըս դըժոխոց խորտակեաց. եկեղեցւոյ իւրում զգեցոյց զմեծվայելչութիւն. միաբ:

ԱԿ.

Թագաւորեաց Աստուած ի վերայ հեթանոսաց. եւ լուսազարդեալ պայծառացոյց սուրբ զեկեղեցի. * Ժողովուրդք ըզՔրիստոս բարեբանեսցէք: Զգեցաւ Տէր զօրութիւն ընդ մէջ իւր ածաւ. քանզի շիջոյց զխայթոց մահու խաչին իւրով սրբով. ժողով: Փառք: Ցարեաւ Աստուած եւ տիեզերք ամ նորափետուր զարդարեցան. եւ մանկունք հաղորդեցան մարմնոյ եւ արեան կենարարին. ժողով:

ԲԶ.

Թագաւորին յաւիտենից մատուսցուք զօրհներգութի. որ ի կուսէն մարմնացաւ. հաստատեաց զաշխարհս ի հաւատս անսասանելի. * փառք նմա այժմ եւ յաւիտեան: Որ կամաւ համբեր մահու խաչի Աստուած բանն. եւ եհեղ զարիւնն իւր սուրբ ի փրկութիւն տիեզերաց. փառք: Փառք Հօր: Աստուածապէս յարուցեալ ի նորափոր ի վիմէն. լուսազարդեաց



զեկեղեցի իւր սուրբ. ի փառս եւ ի գովեստ անուան իւրոյ. փառք նմա այժմ եւ յաւիտեան:

ԲԿ.

Օրհնութիւն ի բարձունս. տնօրինեցելոյն ի կուսէն թագաւորին մերոյ. * ալէլուիա ալէլուիա: Օրհնութիւն ի բարձունս. անսասանելի եւ հաստատուն յուսոյն մերոյ. ալէլ: Փառք Հօր: Օրհնութիւն ի բարձունս. անբաժանելի եւ միաբնական սուրբ Երրորդութեան. ալէլ:

ԳԶ.

Զթագաւորն քո. օրհնութեամբ նրգով բարեբանեցէք ամ երկիր: Արարողին երկնի եւ երկրի. մատուսցուք նրգով գոհաբանութիւն ամ երկիր: Փառք Հօր: Երրորդութեան եւ մի Աստուածութեանն. մատուսցուք պատիւ երկրպագութիւն յաւիտեանս ամէն:

ԳԿ.

Լուսով Աստուածութեան քո Քրիստոս. լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. * պահեա ըզսա անշարժ յաւիտեան: Տօնէ այսօր Երուսաղէմ. հաւատացելոց բազմութիւն. զնաւակատիս սուրբ եկեղեցւոյ. պահեա: Փառք Հօր: Բացան դրունք հաւատոյ նոր Սիոնի. ընդունել զանմահ փեսայն յառագաստ. բաշխէ զմարմին քո եւ զարիւն. պահեա:

ԴՁ

Թագաւոր Քրիստոս էակից Հօր եւ Հոգւոյն. որ վասն մեր մարմնացար ի սուրբ կուսէն. * Թագաւոր փառաց Քրիստոս քեզ փառք։ Որ կամաւոր մահուամբ ըզմահ մեռուցեր. եւ անապական յարութեամբդ քո նորոգեցեր զաշխարհս. Թագաւ։ Փառք Հօր։ Որ կենդանարար արեամբդ քո լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի. երգեմք քեզ ընդ հրեշտակս ասելով։ Թագաւ։

ԴԿ.

Որ անքննելի յաղթող զօրութեամբ Թագաւոր ես երկնի եւ երկրի Քս Աստուած. Օրհնաբանեմք զքեզ։ Որ փառակցութեամբ ընդ Հօր վերօրհնիս յանմահից. եւ խոնարհեալ մարմին զգեցար փառաց Թագաւոր. Օրհնաբանեմք զքեզ։ Փառք Հօր։ Որ կարողապէս ըզմահ կոխեցեր եւ յարուցեալ լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի անմահ էութիւն. Օրհնաբանեմք զքեզ։

---

*Ճաշու առաջին սաղմոս ԿԴ։*

Ն—խ տ—ն զ——ջէն ըն—ե—ցո——ծն։

Քեզ վայել է օրհնութիւն Աստուած ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ։



Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ։

---

*Մեսեդի սաղմոսք ըստ ձայնին.*

Ց——Ջ տ—ն զԱ——տեւլոյանն։

ԱՁ. Կց. Ամենայն երկիր երկիր պագցեն քեզ. եւ սաղմոս ասասցեն քեզ։

Փխ. Աղաղակեցէք առ Աստուած ամենայն երկիր. սաղմոս ասացէք անուան նորա. եւ տուք զփառս օրհնութեան նորա։

ԱԿ. Կց. Մեծ արարէք զՏէր Աստուած մեր. եւ բարձր արասցուք զանուն նորա ի միասին։

Փխ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհնութիւն նորա ի բերան իմ։

ԲՁ. Կց. Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր։

Փխ. Օրհնեցէք զՏէր ամենայն երկիր. օրհնեցէք զՏէր եւ օրհնեցէք զանուն նորա։

ԲԿ. Կց. Օրհնեցէք զԱստուած մեր. օրհնեցէք եւ սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ։

Փխ. Տէր Աստուած օրհնեալ. օրհնեալ է Տէր զօրհանապաղ։

ԳՁ. Կց. Մեծ է Տէր մեր եւ մեծ է զօրութիւն նորա. իմաստութեան նորա ոչ գոյ բաւ։

Փխ. Օրհնեցէք զՏէր զի բարի է սաղմոս. Աստուծոյ մերոյ քաղցր եղիցի օրհնութիւն։

ԳԿ. Կց. Սաղմոս ասացէք Այ մերում. սաղ-

մոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէք:

Փխ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

ԴՁ. Կց. Սուրբ է տաճար քո. սքանչելի արդարութեամբ:

Փխ. Քեզ վայել է օրհնութիւն Աստուած ի Սիովն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

ԴԿ. Կց. Այս օր է զոր արար Տէր. եկայք ցնծասցուք եւ ուրախ եղիցուք ի սմա:

Փխ. Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

*Ալէլուիք ըստ ձայնին:*

Ալէլուիա. ալէլուիա.

ԱՁ. Դու յարուցեալ գթասցիս ի վերայ Սիոնի ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ: Կմ. Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Ած է. սաղմոս ասացէք նմա իմաստութբ:

ԱԿ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց:

ԲՁ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան: Կմ. Աստուած, դու դարձեալ կեցուսցես զմեզ. ժողովուրդ քո ուրախ եղիցի ի քեզ:

ԲԿ. Արի Տէր Աստուած իմ ի հրամանս քո զոր պատուիրեցեր. եւ ժողովք ժողովրդոց



շուրջ եղիցին զքեւ. վն այսորիկ ի բարձունս դարձ Տէր:

ԳՁ. Ուրախ եղեւ Իսրայէլ յարարիչ իւր. որդիք Սիոնի ցնծասցեն ի թագաւորն իւրեանց:

ԳԿ. Եկայք եւ տեսէք զգործս Աստուծոյ. որպէս զի ահեղ են խորհրդով քան զամենայն որդւոց մարդկան:

ԴՁ. Հաճեցար Տէր ընդ երկիր քո. եւ դարձուցեր զգերութիւն Յակոբայ:

ԴԿ. Յարեաւ Աստուած, եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա. փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Սրբասացութիւն. Հրեշտակային կարգս. 17:

---

## ԿԻՒՐԱԿԷԻՑ ԱՂՈՒՋԱՑԻՑՆ

Ժամամուտ. Միածին Որդի. Երեք 69:

Ճաշու շարական՝ շարաւ շարաքին Օրհնութեանն :

Առաջին աղմ. Կդ: Քեզ վայել է օրհնու. 72:

*Միւնոյն սաղմ. Հբ:*

Կց. Ուխտս դիք եւ կատարեցէք Տեառն Այ մերոյ. ամենեքեան որ շուրջ էք զնովաւ:

Փխ. Յայտնի է ի Հրեաստանի Աստուած. եւ յԻսրայէլ մեծ է անուն Նորա:

*Ալէլուն սաղմ. ՂԹ:*

Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր. ծառայեցէք Տեառն ուրախութեամբ. Երգ 4. գլուխն է ըստ [illegible]:

Սրբասացութիւն. Հրեշտակային կարգաւ. 17:

(Բայց ամենայն է Կիւրակէս [illegible] ժամամուտ [illegible] Առաջի ամենայաղթ, եւ յարութեան յիշատակ [illegible]:)

---

## ՅԻՆԱՆՑՆ

*Մեղեդի:*

Նոյն ձայն զարիւծոն ասեմ. — Որ գոչէ մոր ի քառաթեւին. — * Ի քառաթեւին գոչէր. կրկնէ: — * Զայն առնէր ի սանդարամետսն. կրկնէ:

*Ժամամուտ:*

Յինանց երեք ժամամուտք են: — Զկիրակէ շաբաթն է բուն, եւ անդի յառաջ մինչ է Համբարձումն՝ յաւուրն Շբ. եւ Կիր. (զոր է Նոր կիւրակէէն) ժամամուտ զՔրիստոս յարեաւ ասեն. իսկ յայլ աւուրս՝ զոր շաբաթն զԱհաւորն եւ զՔանզի յարեաւն ասեն կարգաւ:

Ա. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. Նմա փառք յաւիտեանս. ամէն:



Բ. Ահաւոր եւ սքանչելի է խորհուրդ փրկութեան մերոյ: Որ անսկիզբն ի Հօրէ՝ անճառաբար մարմնացաւ ի կուսէն. խաչի համբերելով, եւ կամաւոր մահուամբ իւրով զկենդանութեան մեզ պարգեւեաց շնորհս:

Գ. Քանզի յարեաւ ի մեռելոց Քս Աստուած յաւիտենից արարիչ, եւ յարութիւն ազգի մարդկան. զոր օրհնեն անդադար զինուորութիւնք հրեշտակաց, եւ մեք զուարթունք երկնից. ընդ որս գոչելով ասեմք. փառք սոսկալի յարութեան քո Տէր:

*Ճաշու շարական՝ Գովեայք յհանցն, ըստ յա-կամութուց:*

Փոխ. Գովեա Երուսաղէմ զՏէր:

Առաջին շաբաթուն:

ԱՁ. Յարեաւ Քրիստոս ի մեռելոց. * ալէլուիա: Նկայք ժողովուրդք. երգեցէք Տեառն. ալէլ: Փառք Հօր: Յարուցեալն ի մեռելոց ալէլուիա. որ զաշխարհըս լուսաւորեաց. ալէլ:

Եւ տարեկան յաւուրն Շբ. եւ Կիր. Յարեաւ Քրիստոս ասա մինչ է Համբարձումն: — Զայս ճաշու շարականս յինանց յերկրորդ շաբաթին ի քեզ կարգաւ:

Երկրորդ շաբաթուն.

ԱՁ. Նորացուցէք զօրհնութիւն յարուցելոյն ի մեռելոց: Որ նորոգեացն զտիեզերս

*Նոր օրհնութիւնս երգեսցուք. յարուցելոյն ի մեռելոց: փառք: Ծնկայք նոր ժողովուրդք նոր օրհ:

Երրորդ շաբաթուն:

Ա2. կամաւ յանձն առեր զչարչարանըս խաչի եւ համբերեցեր. * ալէլուիա: Թաղեցար ի սիրտ երկրի երեքօրեայ. ալէլուիա. եւ յարեար ածապէս. ալէլ: փառք Հօր: Յարուցելոյն ի մեռելոց երկրպագեսցուք ալէլուիա. որ փրկեացն զմեզ ի մեղաց. ալէլ:

Չորրորդ շաբաթուն:

Ա2. * Տուք օրհնութիւն Տեառն Աստուծոյ՝ յարուցելոյն ի մեռելոց: Նա ըզդըժոխս գերեաց մահուամբն իւրով. եւ զհզօրըն կապեաց. տուք: փառք: Տէր հզօր զօրութեամբ իւրով. Տէր կարող ի պատերազմի. տուք:

Հինգերորդ շաբաթուն:

Ա2. Յարուցելոյն ի մեռելոց Քրիստոսի Աստուծոյ. * երգեսցուք ընդ հրեշտակս օրհնութիւնս. ալէլուիա ալէլուիա: Փրկողին տիեզերաց կենարար յարութե. երգեսց: փառք: Ծնկայք մանկունք առագաստի երկնաւոր փեսային. երգեսց:

Վեցերորդ շաբաթուն. (Բշ. Գշ. Դշ:)

Ա2. Որ յարեարդ ի մեռելոց կենդանութեանց պարգեւատու քո անմահ թագաւոր * ընդ երկնային զուարթունս. Նոր օրհնու-



թիւնս քեզ երգեսցուք. ալէլուիա: Որ մահուամբդ ըզմահ լուծեր զանմահութիւն մեզ շնորհեցեր կենդանարար քո յարութեամբդ. ընդ երկնայ: փառք: Որ ի յերկինս համբարձար եւ ընդ աջմէ Հօր նստար յաթոռ փառաց Բանդ Աստուած. ընդ երկնայ:

*Առաջին սաղմոս՝ Մտաղոգիք յիմաստ:*

Յառաւօտու Զատկին ունիմք շնորհնեալ կանոնն, եւ յամէն օր է է ժամ ասա կարգաւ մինչեւ ի Հոգւոյ գալուստն, որ այն օր ՃԾ սաղմոսն վճարի: —
(Այժմ շաբաթին տաղեան միայն շէրկոյց առաջին կոխէցն ասեն եւ սկսանին շգործեն:)

*Մեսեդիք շատ սաուրց:*

Մեսեդիս շինի Գործոյն է: Յառաջին շաբաթուն սկսիր:

ԿԻՐ. եւ ԲՇ. Փխ. Քեզ վայելէ օրհնութի Այ ի Սիոն. եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

Լուր աղօթից իմոց. զի առ քեզ ամենայն մարմին եկեսցէ:

ԳՇ. Կց. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեցեր զմեզ:

Փխ. Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

ԴՇ. Փխ. Գովեա Երուսաղէմ զՏէր:

Եւ օրհնեա զԱստուած քո Սիոն:

ԵՇ. Կց. Բարձր արարէք զՏէր Այ մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նր զի սբ է:

Փխ. Տր̅ թագաւորեաց. բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

ՈւՐ. Կդ. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն Նոր. զի սքանչելիս արար:

ՇԲ. Փխ. Ած̅ ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ. երեւեցո զերեսս քո ի մեզ եւ ողորմեա մեզ:

Ճանաչել յերկրի զճանապարհս քո. յազգս ամենայն զփրկութիւնս քո:

*Ալէլուք ըստ աւուրց:*

Ի Ձայնէն Գնչէ է Համբարձման:

Ա՛լէ՛լուիա. ալէ՛լուիա.

Սաղմոս ՃԽԷ:

ԿԻՐ. եւ ԲՇ. Գովեա՛ Երուսաղէմ զՏէր:

Ե՛ւ օրհնեա՛ զԱստուած քո Սիո՛ն:

Զի զօրացոյց զնիգս դրանց քոց. եւ օրհնեաց զորդիս քո ի քեզ:

Ո եդ զսահմանս քո ի խաղաղութիւն. պարարտութեամբ ցորենոյ լցոյց զքեզ:

Առաքէ զբան իւր յերկիր. վաղվաղ ընթանան պատգամք Նորա:

Դնէ զձիւն որպէս զասր. եւ զմէգ որպէս փոշի ցանեաց:

Արկանէ զսառն որպէս պատառս. առաջի ցրտոյ Նորա ո՞ կարէ կալ:



Առաքէ զբան իւր եւ հալէ զնոսա. շնչեսցեն հողմք եւ գնասցեն ջուրք:

Պատմէ զբան իւր Յակոբայ. զարդարութիւն եւ զիրաւունս Իսրայէլի:

Ոչ այսպէս արար ամենայն ազգաց Տէր.
— Եւ զդատաստանս իւր ոչ յայտնեաց նոցա:

ԴՇ. Տէր, ի զօրութ̅ քում ուրախ եղիցի թագաւոր. եւ ի փրկութ̅ քում ցնծասցէ յոյժ:

ԴՇ. Քեզ վայելէ օրհնութիւն Աստուած ի Սիովն: Եւ քեզ տացին աղօթք յԵրուսաղէմ:

ԵՇ. Տէր, ո՞վ կացցէ ի խորանի քում. կամ ո՞վ բնակեսցէ ի լեառն սուրբ քո:

ՈւՐ. Տէր թագաւորեաց, վայելչութիւն զգեցաւ. զգեցաւ Տր̅ զօրութ̅ ընդ մէջ իւր ածաւ:

ՇԲ. Ցնծացէք առ Աստուած, օգնական է մեր. աղաղակեցէք առ Աստուած Յակոբայ:

*Սրբասացութիւն*

Գնչ է Հոգւոյ գալստեան այս է.

Ո՞վ է որպէս Տէր Աստուած մեր. խաչեցաւ վասն մեր, թաղեցաւ եւ յարեաւ. հաւատարիմ եղեւ աշխարհի, եւ համբարձաւ փառօք: Եկա՛յք ժողովուրդք օրհնութ̅ ընդ հրեշտակս երգեսցուք նմա ասելով, սո̅ւ, սո̅ւ, սո̅ւ ես Տէր Ած̅ մեր:

*Ցաղ յարութեան:*

Ա. Գուշէր հրեշտակն առ վիմին — վասն յարութեան Յիսուսին. — կանայք՝ դուք զի՞ զարհուրէք, — Կալով խնդրէք զկենդանին:

րամից էից արարիչն, — Ազգի մարդկան ազատիչն, — Նա ի խաչին բարձրացաւ, — Անմահն Աստուած մահացաւ:

Որ ի յաթոռ Հօր բազմեալ — Ի հող մահու խոնարհեալ. — Այսօր փառօք յարուցեալ. — Մեզ կեանս անճառ պատրաստեալ:

---

## ՊԱՀՈՑ ԱՒՈՒՐՑՆ

Ճաշու փոխ. Օրհնեցէք զՏէր ամ ազինք:
Առաջին աղմ. չէ: Սրբասացութիւն. Վա յիշատակի:

---

## ԶՈՐԵՔՇԱԲԱԹՈՒ ԵՒ ՈՒՐԲԱԹՈՒ

*Ժամամուտ:*

Որ ըստ ամ միտս անցանես՝ զխաղաղութի քո Ած տուր մեզ հանապազ. զքեզ աղաչեմք:

*Ճաշու շարական:*

Փոխ. Օրհնեցէք ըզՏէր ամենայն ազինք:

ԴՇ. դկ. ար. Փառաբանութիւն առաքեմք քեզ Հայր երկնաւոր. * յիշեա զննջեցեալսըն մեր եւ հանգո ընդ սուրբըս քո: Որ էակից ես Հօր եւ Հոգւոյ Որդի միածին. յիշեա: Փառք: Որ փառակից ես Հօր եւ Որդւոյ Հոգի ճշմարիտ. յիշեա:

ՈՒՐ. դկ. Որ անըսկիզըն յէութեան էկիր



յաշխարհ. մարմնացար ի կուսէն յաղագս մերոյ պարտեաց. * հանգո զննջեցեալսըն մեր: Որ ի Հօրէ լուսոյ լոյս ծագեցար եւ կեանք. միածին Որդի Հօր համագոյակից. հանգո: Փառք: Որ ի վերդ ես քան ըզմիտս եւ զխորհուրդս. եւ խաչի համբերեալ փրկեցեր ըզտիեզերս. հանգո:

Առաջին աղմոս չէ.

*Մեսեդիք ըստ աւուրց:*

ԴՇ. Կց. Կեցո զծառայս քո Աստուած իմ որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր, զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ. ուրախ արա զանձն ծառայի քոյ, զի առ քեզ Տէր համբարձի զանձն իմ:

ՈՒՐ. Կց. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

*Ալէլուք ըստ ձայնին:*

ԱՁ. Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յերկիր ուղիղ: Կոմ. Վա անուան քոյ Տէր կեցուսցես զիս. արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ:

ԱԿ. Տէր, մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. եւ մի բարկութեամբ քով խրատեր զիս: Կոմ. Զգնացս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

ԲՁ. Սիրտ խռովեցաւ յիս. եւ երկիւղ մահու անկաւ ի վերայ իմ:

ԲԿ. Դարձ, Տէր, եւ փրկեա զանձն իմ. կեցո զիս Տէր ըստ ողորմութեան քում:

ԳՁ. Վասն անուան քո Տէր քաւեա զմեղս իմ. զի բազում եղեն յոյժ:

ԳԿ. Ողորմեա ինձ Տէր զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ զի խռովեցան ոսկերք իմ:

ԴՁ. Յիշեա Տէր զգթութիւնս քո. եւ զողորմութիւնս քո որք ենն յաւիտենից: Կամ. Զմեղս մանկութեան իմոյ եւ զանգիտութեան մի՛ յիշեր. այլ յիշեա զիս Տէր ըստ ողորմութե՛ քում վն՛ քաղցրութե՛ քո. զի քաղցր եւ ուղիղ ես:

ԴԿ. Տէր, ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Կամ. Զմեղս մանկութեան. որպէս է վերոյ: Կամ. Աղաղակեցի առ քեզ Տէր եւ ասացի. դու ես յոյս եւ բաժին իմ յերկրի՛ն կենդանեաց:

*Սրբասացութիւն:*

Վասն յիշատակի հանգուցելոյն ընկալ, Հայր սուրբ մարդասէր, զպատարագս. եւ համարեա զհոգիս նոցա ի թիւ սրբոց քոց յարքայութեանդ երկնից: Մանաւանդ զի հաւատով մատուսցուք զպատարագս. հաշտեսցի աստուածութիւնդ, եւ հանգուսցէ զհոգիս նոցա:

---

# ՇԱԲԱԹԱՊԱՀՈՑ

*Ժամամուտ:*

ԲՂ. ԳՂ. եւ ԵՂ: Որ ի Հօրէ առաքեցար փրկիչ, եւ մարմնացար ի սուրբ կուսէն. որ վասն մեր ի յերկնից իջեր, լուսաւորեցեր զտիեզերս. զխաղաղութիւն քո տուր մեզ Տէր. որ խաղաղութեանց ես թագաւոր. զխաղաղութիւն եւ զողորմութիւն. որ յամենայնի ես դու կարող մարդասէր:

ԴՂ. եւ ՈՒՐ: Որ ըստ ամենայն միտս անցանես՝ զխաղաղութիւն քո Աստուած տուր մեզ հանապազ. զքեզ աղաչեմք:

*Ճաշու շարական, ըստ աւուրց:*

Փոխ. Օրհնեցէք զՏէր ամենայն ազինք:

ԲՂ. եւ ԳՂ. գձ. Քրիստոս Աստուած. յիշեա՛ զննջեցեալսն ի նս՛ անուն՛դ քո՛: Ըղգինս արեա՛ն քո՛ Տէր. *յիշեա՛ եւ հանգո՛ ընդ սուրբս քո՛: Փառք Հօր: Եւ ի միւսանգամ քո՛ գալստեանն. զննջեցեալսն մեր յիշեա՛ եւ:

ԴՂ. դկ. ու. փառաւորութի՛ առաքեմք. Էրես ՁԲ:

ԵՂ. գձ. Քս՛ Ած՛ յիշեա. որպէս է վերոյ:

ՈՒՐ. բկ. Ո՞ր յանէից ստեղծող գոյից արարչական Հօր Բանդ Աստուած. *Թողութիւն շնորհեա ննջեցելոց քոց ծառայից. յորժամ գաս դատել զոր անարատ ձեռօք ստեղծեր: Ո՞ր ի հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն. Թողու: Ո՞ր ի խաչին անշնչացար. զմահու լուծեր զիշխանութիւն. Թողութիւն: Փառք: Ո՞ր պսակիչդ ես քոց սրբոց եւ անվախճան բարեաց բաշխող. Թողութիւն:

Իսկ ի շաբաթապահս յորս տօն լինի, ուրբաթու ձգ. շարական՝ Դկ. Որ անսկիզբն. Երգ 82:

Առաջին սաղմոս չէ:

*Մնացեալ սաղմոսն, ըստ աւուրց:*

ԲՀ. Արքայութիւն քո արքայութիւն ամ յաւիտենից. եւ տէրութիւն քո յազգէ մինչեւ յազգ:

Հաւատարիմ է Տէր յամենայն բանս իւր. եւ արդար է յամենայն գործս իւր:

ԳՀ. Երկիր պագից ի տաճար սուրբ քո. երկիւղիւ քո Տէր:

Պարծեսցին ի քեզ սիրելիք անուան քո Տէր. զի օրհնեսցես դու զարդարն:

ԴՀ. Կեցո զծառայս քո՝ Աստուած իմ որ ի քեզ յուսացայ:

Ողորմեա ինձ Տէր. զի առ քեզ աղաղակեցի զօրհանապազ:



ԵՀ. Կց. Բարձր արարէք զՏէր Աստուած մեր. երկիր պագէք պատուանդանի ոտից նորա, զի սուրբ է:

Փխ. Տէր թագաւորեաց, բարկացան ժողովուրդք, որ նստին ի քերովբէս. սասանեցաւ երկիր:

ՈՒՐ. Կց. Տեսին ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր. զի սքանչելիս արար:

*Ալէլուք ըստ աւուրց:*

ԲՀ. Եկայք ցնծասցուք ի Տէր. աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր:

ԳՀ. Երգեցէք Տեառն երգ նոր. երգեցէք Տեառն ամենայն երկիր. երգեցէք Տեառն եւ բարձր արարէք զանուն նորա:

Չորեքշաբաթու՝ յառաջ հայէն:

ԵՀ. Բարձր արարից զընտրեալն ի ժողովրդենէ իմմէ. գտի զԴաւիթ ծառայ իմ. եւ իւղով սրբով իմով օծի զնա:

Ուրբաթու՝ յառաջ հայէն:

Սրբասացութիւն. Վա յիշատակի. Երգ 84:

---

## ՏՕՆԻՑ ՍՐԲՈՑՆ

Ճաշու փոխ. Սիրեցի զի լուիցէ։ Մեսեդի ող. չէ։

---

## ԱՌԱՔԵԼՈՑ

*Մեղեդի։*

Արեգակն արդար որ ի Հօրէ ծագեալ. Զառաքեալսն քո անճառ շնորհօք լցեալ։

Ռահ լուսոյ ցուցեալ Հայաստանեայց ազանց. Մեծին Թադէոս Բարթուղիմեաւ փայլեալ։

*Ժամամուտ։*

Առաքեալք եւ վկայք Քրիստոսի Աստուծոյ. ամենակալ Հոգւոյն զօրութեամբն զամենեսեան ընդ հանուր յորդեգրութիւն կենաց կոչելով միանական սուրբ Երրորդութեանն յորդորեցին երգել փառս ի յաւիտեանս. ամէն։

*Ճաշու շարական Ալ։*

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթ։

Որ սիրողդ էք արարչին արարածոց. * Քնի սուրբ առաքեալք. բարեխօսեցէք առ Տէր վասն մեր։ Որ քարոզդ էք ընդհանուր տիեզերաց. Քրիստոսի սուրբ առա։ Փառք Հօր։ Որ պսակեալ էք ամենայն եկեղեցեաց. Քրիստոսի սուրբ առա։



*Առաջին սաղմոս ԺԸ։*

Կց. Ոչ են բանք եւ ոչ են խօսք. որոց ոչ լսին ձայնք նոցա։

Փխ. Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն։

*Ալէլուիա։*

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամ երկիր. եւ յիշեսցի անուն քո ընդ ամ ազգս ազգաց։

Ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա. եւ մինչեւ ի ծագս աշխարհի են խօսք նոցա։

*Սրբասացութիւն։*

Առաքելոց, Մարգարէից եւ Հայրապետաց։

Ամենակալ ես Տէր զօրութեանց, որ թագաւորդ ես յաւիտենից, որ նստիս յերկնից ի յերկինս, եւ լոյս ծագես յարարածս քո։ Որ խոնարհութեամբ իջեր ի յերկիր, քեզ պատարագս մատուցանեմք։ Եւ սուրբ զանունդ քո փառաւորեմք, Տէր, որ պսակիչդ ես քոց սրբոց (առաքելոց)։ Վասն զի սոքա են մեզ բարեխօս Տէր ամենակալ ի քում արքայութեանդ։

---

## ՄԱՐԳԱՐԷԻՑ

*Մեղեդի։*

Աստուածային խորոցն անճառ. — Խորհրդածուք նմ մարգարէք. — Բանիւ պատմողք զապագայիցն — Յառաջագոյն ղեղելուն։

փառք են սոքա ազգի մարդկան, — Եւ լուսատուք տիեզերաց. — Քրիստոսի Նախաքարոզք, — Որում պատիւ, երգ. սրբասաց:

*Ժամամուտ:*

Տէր որ հիմնեցուցեր զեկեղեցի քո ի վերայ վիմին հաւատոյ. եւ կարգեցեր ի սմա առաքեալս եւ մարգարէս, հովիւս եւ վարդապետս՝ առ ի հաստատութիւն սրբոց. եւ ճգնութեամբ վկայից զթշնամին սորա վանեցեր. ի խաղաղութեան զսա պահեա Աստուած որպէս մարդասէր:

*Ճաշու շարական:*

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր ըզձայն աղօթ:

ԱՁ. Ճառագայթ անճառ լուսոյ անքննելի տէրութիւն. յառաջագոյն հրաշացուցեր զտեսողութիւն մարգարէից. իջանելով ի ստորինս ածային տնօրէնութեամբ: Որք ըզտաճար հաւատոյ հիմնեցուցին շնորհօք նորին Հոգւոյն. յոր եմուտ Բանն Աստուած եօթնարփեան ճառագայթիւք. իջանելով ի ստորինս ածային տնօրէնութեամբ: Փառք Հօր: Երեւեցաւ յաշխարհի ճշմարիտ մարդեղութեամբ. զոր քարոզեցին մեզ հրաւիրողքն համագոյ Հօր եւ Հոգւոյն. լուսաւորելով ըզտիեզերս ածային տնօրէնութեամբ:



*Առաջին սաղմոս կե:*

Կց. Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի:

Փխ. Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նր:

*Ալէլու:*

Յեկեղեցիս օրհնեցէք զԱստուած. եւ զՏր յաղբերացն Իսրայէլի:

Սրբ…… Ամենակալ ես Տէր. եր. 89:

---

## ՀԱՅՐԱՊԵՏԱՑ

*Մեղեդի:*

Ի հանդէս տօնի քո ըմխացեալ ցընծամք. Հայր եւ վարդապետ մեր հայրապետ (Պետրոս):

*Ժամամուտ:*

Զհայրապետականն զարդարեցեր զաթոռ ի յերկրի. առաքելական առեր զպատիւ յերկնուստ, ծառայ Քրիստոսի ով երանելիդ ի հարս սուրբ հայրապետ: Քանզի քո վարդապետութեանդ սերմանք՝ բարեպաշտութեան բուսուցին հասկս, ուրախութեան պտուղ հատուցանելով եւ հաւատացելոցս զփրկութիւն շնորհելով: Վն որոյ բարեխօսեա առ Տր վն անձանց մերոց:

*Ճաշու շարական:*

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր ըզձայն աղօթ:

Դ.Ձ. Այսօր երկնայնոցն ընդ մեզ տօնախմբելով զյիշատակ նահապետացն. որք լուսաւորեցին զհաւատոյ մանկունս. եւ ընդ հրեշտակացըն դասս վերակարգեցան: Այսօր առաքելոց եւ մարգարէիցըն դասք տօնակից գոլով դստեր վերին Սիոնի. ի յիշատակի սուրբ վարդապետացն. որք զիմաստից նոցին զլուրոց յայտնեցին զխորհուրդ: Փառք Հօր: Այսօր քահանայք եւ պաշտօնեայք նոր եկեղեցւոյ. վերապատուեն զյիշատակ նոր վարդապետացն. որովք զարդարեցան երկնային շնորհօքն. երգեն ընդ նոսին զփառըս յաւիտեան:

Կամ յաւելոց Օրհնաբանեն.

Գ.Ձ. Զառաջնորդս եւ զվարդապետս եկեղեցւոյ քո սրբոյ. յիշատակաւ պատուեմք այսօր. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Ծիր մշակք անպարտելիք կաթուղիկէ եկեղեցւոյ. եւ պսակք պայծառանաց հաւատացելոց. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ: Փառք: Հազարապետք ծայրին խորհրդոյն. եւ բացողք դրանն արքայութեան երկնից. բարեխօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:



*Առաջին սաղմոս ՃԼԱ:*

Կց. Քահանայք քո զգեսցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Փխ. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամենայն հեզութիւն նորա:

*Ալէլուա:*

Քահանայք քո զգեսցին զարդարութիւն. եւ սուրբք քո ցնծալով ցնծասցեն:

Սրբասացութիւն. Ամենակալ ես Տէր. Եր. 89:

---

# ՄԱՐՏԻՐՈՍԱՑ

*Քարոզ:*

Ի տաճարի սրբոց եւ ի յիշատակի սրբոց մարտիրոսաց զձեռս համբառնալով աղաչեմք. բարեխօսութեամբ սոցա եւ աղօթիւք զկենդանութիս մեր խաղաղացո Ած որպէս մարդասէր:

*Ճաշու շարականք ըստ ձայնին:*

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթ:

Ա.Ձ.

Պարծեսցին սուրբքըն փառօք. եւ ցնծասցեն յաւիտենական ի վաստակս իւրեանց յաւուր գալստեան փրկչին. * յորժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: Սիրէ Տէր զերկիւղածս իւր եւ պահէ ըզնոսա. եւ բնակէ ի հեզս եւ ի խոնարհս ի գալստեան

իւրոյ. յորժամ գայ փառօք Հօր փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց: Փառք Հօր: Փոխանակ ճգնութեան համբերողաց մնացուցանէ իւրաքանչիւր զանթառամ պսակն. փայլեն որպէս զարեգակն. յորժամ գայ փառ:

ԱԿ.

Ի տաճարի հանգստեան սրբոց վկայից. զաղաչանս մեր մի անտես առներ որ կարդամք առ քեզ Տէր. * սոցա բարեխօսութեամբ կեցո ըզմեզ: Որք վասն անուանդ քո հեղին զպատուական սուրբ զարիւնս իւրեանց. արիաբար մարտեան ընդդէմ թշնամւոյն. եւ զօրացան ի պատերազմի. սոցա բարե: Փառք Հօր: Պարծեսցին սուրբք քո Տէր ի հանգիստս իւրեանց. որք տանջանաց անօրինացն համբերեցին. եւ անապական պսակացն արժանի եղեն. սոցա:

ԲՁ.

Ուրախանան հրեշտակք ի յերկինս. ընդ չարչարանս ճգնաւորացն. եւ հրաշանան արարածք ընդ յաղթութիւնս սրբոց: Մեծապէս պատերազմեալք. զառաքինութեան ըզհանդէս. պսակեցան ի Քրիստոսէ ընդ վերին զուարթունսն: Փառք Հօր: Ցնծայ կաթողիկէ. զուարճանան հաւատացեալք. աղաղակեն ասելով. փառք քեզ Աստուած:



ԲԿ.

Յիշեա զմեզ Աստուած փրկիչ մեր. յորժամ գաս թագաւորութեամբդ քո. * կեցո ըզմեզ բարեխօսութեամբ սրբոց քոց: Շնորհեա մեզ թողութիւն երկնաւոր թագաւոր. ընկալ զաղաչանս մեր. կեցո ըզմեզ բար: Յօրհնութիւն ի նոր օրհնեսցուք ըզքեզ քո թագաւոր. որ վասն մեր մարմնացար կեցո ըզմեզ. բար: Փառք Հօր: Զհայր եւ զՈրդի եւ ըզՍուրբ զՀոգին փառաւորեմք ասելով. երեքսրբեան տէրութիւն կեցո:

ԳՁ.

Պայծառացիր եկեղեցի Աստուծոյ. ընդ ճգնութիւն սրբոց վկայից. * որք նահատակեցան ի յերկրի. եւ ի յերկինս պըսակեցան: Ուրախանան եւ հրեշտակք ի յերկինս. ընդ ճգնութիւն սրբոց վկայից. որք նահատ: Փառք Հօր: Համաձայնեալ ընդ նոսին այսօր եւ մեք տօնեմք. զյիշատակ սրբոց վկայից. որք նահատ:

ԳԿ.

Ճգնաւորք ճշմարիտք եւ վկայք Քրիստոսի. որք զչարչարանս եւ զմահ յանձն առիք վասն Տեառն. զձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց: Քանզի հեղմամբ արեան ձերոյ պայծառացան սուրբ

եկեղեցիք. եւ զստուերամած խաւար կռապաշտութեանցն բարձիք. *ըզձեզ ունիմք բարեխօս առ Քրիստոս վասն անձանց մերոց: փառք Հօր: Երկնային զօրքն իջեալ ի պատիւ պատարագի մահուան ձերոյ. եւ ըզպըսակս անապականս առբերելով ի Հօրէ լուսոյ. ըզձեզ ունի:

ԴՁ.

Ճգնութիւնք սրբոց քոց Քրիստոս հաստատեցին զհիմունս սուրբ եկեղեցւոյ. կանգնելով ի սմա զնշան յաղթութեան: Եւ հեղմամբ սուրբ արեանն իւրեանց ազատեցին զտիեզերս ի դիւապաշտ մոլորութեանց. եւ եղեն յաղթողք ի պատերազմի: փառք Հօր: Ընդ որս եւ մեք աղաչեմք զքեզ ընկալ եւ զմեզ յերկնային խորանս ի լուսեղէն առագաստին. բարեխօսութեամբ եւ աղօթիւք սբ ճգնաւորացն.

ԴԿ.

Այսօր եկեղեցի Քրիստոսի պայծառանայ յիշատակաւ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ Տէր վասն մեր: Այսօր ի հեղումն արեան սոցա դասք հրեշտակաց խոնարհեալ. միաբանութեամբ տօնեն ընդ մարդկան: փառք Հօր: Եկայք եւ մեք Քրիստոսի հաւատացեալքս. կատարեսցուք զյիշատակ սրբոց վկայիցն. որք բարեխօսեն առ Տէր վասն մեր:



*Առաջին սաղմոս ՃԺԵ:*

Կց. Պատուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց. ո՜ Տէր, ես ծառայ քո եմ, ծառայ եւ որդի աղախնոյ քոյ:

Փխ. Հաւատացի զոր եւ խօսեցայ. եւ ես խոնարհ եղէ յոյժ:

*Աշխարհք ըստ ձայնին:*

ԱՁ. Տէր սիրէ զիրաւունս եւ ոչ ընդ վայր հարկանէ զսբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա: Կոմ. Փրկութիւն արդարոց ի Տեառնէ է. վերակացու է նոցա ի ժամանակս նեղութե:

ԱԿ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց: Կոմ. Լոյս ծագեաց արդարոց. ուղղոց սրտից եղեւ ուրախութիւն:

ԲՁ. Պարծեսցին սուրբքն փառօք եւ ցնծասցեն ի հանգիստս իւրեանց. եւ բարձր արասցեն զԱստուած բերանովք իւրեանց:

ԲԿ. Կարդացին արդարքն առ Տէր, եւ Տէր լուաւ նոցա. եւ յամ նեղութենէ նոցա փրկեաց զնոսա:

ԳՁ. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ի զենումն:

ԳԿ. Ուրախ լիցին ամենեքեան որք յուսացեալ են ի քեզ. յաւիտեան ցնծասցեն, եւ բնակեսցես դու ի նոսա:

ԴԶ. Արդարքն ոչ զարմացեալ մնասցեն. ոչ զմայրքն Լիբանանու բազում եղիցին:

ԴԿ. Բազում նեղութիւնք են արդարոց, յամենայնէ փրկէ զնոսա Տէր. եւ պահէ զամ ոսկերս նոցա, եւ մի ի նոցանէ ոչ կորիցէ:

*Սրբասացութիւն:*

Սրբութիւն սրբոց, մեծ ես եւ ահաւոր. եւ զննութիւնք հրեշտակաց օրհնեն զքեզ, եւ ասեն. փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն:

---

## ԺԳՆԱՒՈՐԱՑ

*Ժամամուտ:*

Ճգնաւորք Քրիստոսի, որք տանջանաց անօրինացն համբերեցիք, եւ զմոլութիւն կռոցն խափանեցիք. դասաւորեալք ընդ հրեշտակս ի յերկինս. որք ունիք զհամարձակութիւն ի Քրիստոսէ, բարեխօսեցէք կեցուցանել զանձինս մեր. զձեզ աղաչեմք:

Ճաշու շարական զնշանակեալն յաւուրն այս:

*Առաջին սաղմոս ԽԱ:*

Փխ. Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց. այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Ած:

Ծարաւի է անձն իմ առ քեզ, Ած հզօր եւ կենդանի. երբ եկից երեւեցայց երեսացդ Ած:



*Ալէլուիա:*

Երանելի են որք բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Սրբասացութիւն. Սրբութիւն սրբոց. երես 98:

---

## ԹԱԳԱՒՈՐԱՑ

Ժամամուտ, շարական զաւուր նշանակեալն այս:

*Առաջին սաղմոս Ի:*

Փխ. Տէր ի զօրութեան քում ուրախ եղիցի թագաւորն. եւ ի փրկութեն քում ցնծասցէ յոյժ:

Զցանկութիւն սրտի նորա ետուր նմա. եւ զկամս շրթանց նորա ոչ արգելեր ի նմանէ:

Ալէլու. Տէր ի զօրութե քում. որպէս է վերոյ:

---

## ԿՈՒՍԱՆԱՑ

*Ժամամուտ:*

Հարսնացեալք Քրիստոսի երկնաւոր փեսային, դստերք վերին Սիոնի. խնդրեցէք ի Քրիստոսէ զհաշտութիւն եւ զմեծ ողորմութիւն:

Ճաշու շարական զաւուր նշանակեալն այս:

*Առաջին սաղմոս ԽԴ:*

Կյ. Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Փխ. Բղխեաց սիրտ իմ բան բարի. եւ ասեմ զգործս իմ Թագաւորի:

*Ալէլուիա:*

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկէհուռս զարդարեալ եւ պաճուճեալ:

Տարցին Թագաւորի կուսանք զհետ նորա. եւ զընկերս նորա տարցին նմա:

Սրբ——ոց—Ըն—Ն. Սրբութի սրբոց. Երեւ 98:

Գ.

# ԱՒՈՒՐ ՊԱՏՃԱՌՔՆ

## ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԻՑ

# ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

## ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

## ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

*ի յունուարի Զ։*

---

Ժամամուտ։

Աստուածածին զքեզ խոստովանեալ. եւ. Գ։

Ճաշու շարական ԱՁ։

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծասցէ հոգի իմ Աստուծով փրկչաւ իմով։

Անսկիզբն Աստուած Բանդ որ ի Հօրէ առաքեցար. ընդ ժամանակաւ լինել հաճեցար. եւ մարմնացար ի սուրբ կուսէն վասն մերոյ փրկութեան. * այսօր մկրտիլ ի Յորդանան ի Յովհաննէ բառնալով զյանցանս առաջին նախաստեղծ մարդոյն։ Անեղանելիդ Աստուած Բանդ անմեկնելիդ ի Հօրէ. ընդ ժամանակաւ լինել հաճեցար. եւ մարմնացար ի սուրբ կուսէն Աստուած եւ մարդ յայտնեալ. այսօր մկրտ։ Փառք Հօր։ Զորեքկերպեան կենդանեացն ըզխորհուրդ քարոզեաց ամբողջին. տեսանելով սուրբ զհոգին աղաւնակերպ իջմամբն ի վերայ ջուրցն. աղաղակէր ասելով.

ահա գառն Աստուծոյ որ ի Հօրէ վկայեցաւ. դա է Որդի իմ սիրելի ընդ որում ես հաճեցայ։

Առաջին տաղմոս ՀԱ։

Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա։

Թագաւորք Թարսիս եւ կղզեաց պատարագս մատուսցեն նմա. թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն նմա։

Ընթերց. Տիտ. Բ. 11։ Քանզի երեւեցաւ շնորհն. մ. 15։

Ալէլու։

Երկիր պագցեն նմա ամենայն թագաւորք երկրի. եւ ամենայն ազգք ծառայեսցեն նմա։

Աւետարան ըստ Մատթէոսի. Բ. 1.

† վն յայտնութեան Տեառն մերոյ Յնի Քնի։

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղ. մ. 12։

Սրբասացութիւն. Բազմութիւնք հրեշտ. 18։

---

## ԿԱՆՈՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՋՐՈՅ

Յետ արձակման պատարագին զգենուն քահանայքն եւ երթան մտանեն ի ջուրն՝ խաչիւ եւ աւետարանաւ եւ բուրվառաւ եւ մոմեղինօք եւ ամենայն զարդուք, ասելով

Շարական ԴՁ։

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի մէջ կուսէն. զի վերըստին նորոգեսցես զապականեալն Ադամ։ Դու Աստուած ի յեր-



կրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար. եւ փրկեցեր զտիեզերըս յանիծիցն Ադամայ։ Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն. ասէ դա է իմ Որդի. եւ Սբ Հոգին զքեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ։

Զքեզ որ հոգւով եւ հրով մաքրեցեր զմարդկան աղտեղութիւն. որպէս զԱստուած եւ զփրկիչ ամենեքեան օրհնեսցուք։ Փրկիչն երեւեցաւ եւ զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն. որդեգրութիւն շնորհելով ի ձեռըն մկրտութեան։ Ջրով կիզու զմեղըս մեր այսօր. երեւեալ ապրեցուցիչն. եւ զովացուցանէ զաշխարհս ծծային ջրովն։

Զգլուխ վիշապին փրկիչըն ջախջախեաց ի Յորդանան գետ. եւ ինքեան իշխանութբ զամենեսեան ապրեցոյց։ Զհին մարդըն նորոգելով փրկիչն ի մկրտութի գայ այսօր. զի զապականեալ զբնութիւնս ջրով նորըս գործեսցէ. անապական զգեստ փոխարէն տալով մեզ։

Ի վերայ շարականացս ասեն յայնժամ՝

Սաղմոս ԻԸ։

Կց. Ձայն Տեառն ի վր ջուրց. եւ Ած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վր ջուրց բազմաց։

Փխ. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց։

Մատուցէք Տեառն զփառս եւ զպատիւ· մատուցէք Տեառն զփառս անուան Նորա· եւ երկիր պագէք Տեառն ի սրահ սրբութեան Նորա։

Ձայն Տեառն ի վ՜ր ջուրց, եւ Ա՜ծ փառաց որոտաց· եւ Տէր ինքն ի վ՜ր ջուրց բազմաց։

Ձայն Տեառն զօրութեանց. եւ ձայն Տեառն մեծվայելչութեանց։

Ձայն Տեառն փշրէ զմայրս· եւ մանրեսցէ Տէր զմայրսն Լիբանանու։

Մանրեսցէ զն՜ս ո՜վ զմատաղատունկն Լիբանանու· որ սիրելին է ո՜վ զորդիս միեղջերուի։

Ձայն Տեառն հատանէ զբոց ի հրոյ. ձայն Տեառն շարժէ զանապատն· եւ խռովեցուցանէ Տէր զանապատն Կադէս։

Ձայն Տեառն հաստատէ զեղջերուս. եւ յայտնի առնէ զանտառս։

Ի տաճարի Նորա ամենեքեան ասասցեն փառս Նմա։

Տէր զջրհեղեղս ընտուցանէ եւ ցածուցանէ· Թագաւորեսցէ Տէր յաւիտեան։

Տէր զօրութի՜ ժողովրդեան իւրում տացէ· եւ օրհնեսցէ զժողովուրդ իւր ի խաղաղուի՜։

Եւ ընթեռնուն զընթերցուածս.

ընթերցուածս յԵլից· ԺԵ· 22։

Եւ խաղացոյց Մովսէս զորդիսն Ի՜ղի ի կարմիր ծովէ անտի. եւ ած զնոսա յանապատն ի Սուր· եւ գնացին երեքօրեայ ճանապարհ յանապատի անդ· եւ ոչ գտանէին ջուր ըմպելոյ։ Եկին ի Մեռա, եւ ոչ կարէին ըմպել ջուր ի Մեռայն· քանզի դառն էր· վասն այնորիկ անուանեաց զանուն տեղւոյն այնորիկ՝ Դառնութիւն։ Եւ տրտնջեաց ժողովուրդն զՄովսիսէ եւ ասեն. զի՞նչ արբցուք։ Աղաղակեաց Մովսէս առ Տէր։ Եւ եցոյց Նմա Տէր փայտ· եւ արկ զայն ի ջուրն, եւ քաղցրացաւ ջուրն։ Եւ անդ ետ Նմա իրաւունս եւ դատաստանս· եւ անդ փորձեաց զնա, եւ ասէ· եթէ լսելով լուիցես ձայնի Տեառն Աստուծոյ քում, եւ զհաճոյս առաջի Նորա արասցես, եւ ունկնդիր լիցիս պատուիրանաց Նորա. եւ պահեսցես զամենայն իրաւունս Նորա· զամենայն զախտն զոր ածի ի վերայ Եգիպտացւոցն, ո՛չ ածից ի վերայ քո· զի ես եմ Տէր որ բժշկեմ զքեզ։ Եւ եկին յԱղիմ· եւ էին անդ երկոտասան աղբիւր ջուրց, եւ եւթանասուն ծառ արմաւենեաց· եւ անդ բնակեցան առ ջրովն։ 27։



ընթերցուածս ի Յեսուայ· Գ· 14։

Եւ եղեւ իբրեւ չուեաց ժողովուրդն ի խորանաց իւրեանց անցանել ընդ Յորդանան. եւ քահանայքն բարձին զտապանակ ուխտին Տեառն առաջի ամենայն ժողովրդեանն։ Եւ իբրեւ մտանէին քահանայքն որ կրէին զտապանակ ուխտին ի Յորդանան, եւ ոտք քահանայիցն կրելեաց տապանակին մխեցան յեզր ջրոյն Յորդանանու, եւ Յորդանան լցեալ գայր դարիւ եւ դարիւ ո՜վ

յաւուրս հնձոց ցորենոյ. եւ կացին ջուրքն որ իջանէին ի վերուստ՝ միաձոյլք. անջրպետեալք, հեռացեալք յոյժ յոյժ. յԱդամիտէս քաղաքէ՝ որ է մասն Կարիաթարիմայ. եւ որ իջանէինն՝ իջին ի ծովն արաբացւոց ի ծովն աղի, մինչեւ ի սպառ նուազելոյ: Եւ ժողովուրդն կայր յանդիման Երեքովի: Եւ կացին քահանայքն որ կրէին զտապանակ ուխտին Տեառն ի վերայ ցամաքի ի մէջ Յորդանանու պատրաստութ՟: Եւ ամ՟ որդիքն Իղի՟ անցին ընդ ցամաք, մինչեւ վախճանեաց ամ՟ ժողովուրդն անցանել ընդ Յորդանան: 17:

ընթերցուած ի Յեսուայ. Դ. 15:

Եւ խօսեցաւ Տէր ընդ Յեսուայ՝ եւ ասէ. հրաման տուր քահանայիցդ՝ որ բարձեալ ունին զտապանակ ուխտին վկայութեան՝ ելանել ի Յորդանանէ: Եւ հրաման ետ Յեսու քահանայիցն եւ ասէ. ելէք ի Յորդանանէ: Եւ եղեւ իբրեւ ելին քահանայքն որ բարձեալ ունէին ըզտապանակ ուխտին Տեառն ի միջոյ Յորդանանու, եւ եդին զոտսն քահանայքն ի ցամաքի, դիմեաց ջուրն Յորդանանու ի տեղի իւր, եւ գնայր ոպ՟ յերէկն եւ յեռանդ ընդ ամ՟ ատակս նր՟: 18:

ընթերցուած ի չորրորդ Թագաւորութեանց. Բ. 19:

Եւ ասեն արք քաղաքին ցԵղիսեէ. ահաւասիկ բնակութիւն քաղաքիս բարի է, որպէս եւ տէրդ իսկ տեսանէ. եւ ջուրքս չար, եւ երկիրս անզաւակ: Եւ ասէ Եղիսեէ. առէք առ իս կուժ



մի նոր, եւ դիք այդր: Եւ բերին առ նա: Եւ ել Եղիսեէ յակունս ջուրցն, եւ արկ անդ աղ եւ ասէ՝ այսպէս ասէ Տէր. բժշկեմ զջուրսդ զայդոսիկ, եւ մի եւս լիցի այդ ի մահ եւ յանզաւակութիւն: Եւ բժշկեցան ջուրքն մինչեւ ցայսօր ըստ բանին Եղիսէի զոր խօսեցաւ: 22:

ընթերցուած յԵսայեայ մարգարէէ. ԺԲ. 3:

Եւ առէք ջուր ուրախութեան յաղբերացն փրկութեան: Եւ ասասցես յաւուր յայնմիկ. օրհնեցէք զՏէր. հնչեցէք զանուն նորա. պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա. յիշեցէք զի բարձրացաւ անուն նորա: Օրհնեցէք զանուն Տեառն զի մեծամեծս արար. պատմեցէք զայս ամ՟ երկիր: Ցնծացէք եւ ուրախ լերուք բնակիչք Սիովնի, զի բարձրացաւ սբն՟ Իղի՟ ի մէջ նր՟: 6:

ընթերցուած յԵզեկիէլէ մարգարէէ: ԽԷ. 1:

Եւ եմոյծ զիս առաջի դրան տաճարին, եւ ահա ելանէր ջուր ի ներքոյ վարագուրաց տաճարին ընդ արեւելս. զի երեսք տաճարին հայէին ընդ արեւելս. եւ ջուրն հոսէր յաջմէ կողմանէ տաճարին հիւսիսոյ՝ ի սեղանն կոյս: Եւ եհան զիս ընդ ճանապարհ դրանն հիւսիսոյ, եւ շրջեցոյց զիս ընդ ճանապարհ դրանն արտաքնոյ առ դրամբն արտաքնով, որ հայէր ընդ արեւելս. եւ ահա ջուրն հոսէր յաջմէ կողմանէ: Եւ իբրեւ զելս առն դէմ յանդիման, եւ չափ ի ձեռին իւրում: Եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց

ընդ ջուրն յորդութեանց: Եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց ընդ ջուրն, եւ հարկանէր ջուրն մինչեւ ցերանսն: Եւ չափեաց հազար՝ չափովն, եւ անց ընդ ջուրն. եւ հարկանէր ջուրն մինչեւ ցգօտիսն: Եւ չափեաց հազար, չափովն զուխսն՝ եւ ոչ կարէր անցանել. զի յորդեաց ջուրն իբրեւ զյորձանս հեղեղաց ընդ որ ոչ ոք անցանիցէ: Եւ ասէ ցիս, տես որդի մարդոյ: Եւ դարձոյց զիս եւ տարաւ յափն գետոյն: Եւ ի շրջելն անդ իմում, եւ ահա յափն գետոյն ծառատունկ բազում յոյժ յայսկոյս յայնկոյս: Եւ ասէ ցիս. ջուրս այս որ ելանէ ի կողմ Գալիլեացւոց ընդ արեւելս, եւ իջանէ յԱրաբիա, եւ գայ մինչեւ ցծով ի ջուրց ելից, եւ բժշկեսցէ զջուրս: Եւ եղիցի ամենայն շունչ անասնոց Թքելոց. յամենայնի յորոց վերայ եկեսցէ գետն՝ կենդանասցին: Եւ եղիցի անդ ձուկն բազում յոյժ, զի հասեալ անդր ջրոյս այսորիկ՝ բժշկեսցէ. եւ կենդանասցին յորոց վերայ հասցէ գետն՝ եւ կեցցէ: Եւ կացցեն ի նմա որսորդք յԷնգադեայ մինչեւ ցԷնգադիս. ձգանք ուռկանաց առանձինն եղիցին. եւ ձկունք նորա իբրեւ զձկունս ծովուն մեծի, եւ բազմութիւն բազում յոյժ: Ցելս նորա՝ եւ ի դարձս նորին, եւ ի համբառնալ նորին մի՛ սրբեսցին. այլ յայլս մատնեսցին: Եւ առ գետովն ելցեն զափամբն յայսկոյս յայնկոյս՝ ամ՟ ծառ ուտելի, եւ մի՛ հնասցի շուրջ զնովաւ, եւ մի՛



պակասեսցի պտուղ նո՛, եւ զդալարու՟ իւր յառաջագոյն արձակեսցէ. զի ջուրք նո՛ ի սրբութ՟ց ելանիցեն. եւ եղիցի պտուղ նց՟ ի կերակուր, եւ ելք նոցա ի բժշկութիւն: 12:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին

Թղթոյն է ընթերցուածս. Ժ. 1:

Ոչ կամիմ եթէ տգէտք իցէք եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին. եւ ամենեքին ընդ ծովն անցին. եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն. եւ ամենեքին զնոյն զհոգեւոր զկերակուրն կերան. եւ ամենեքին զնոյն զհոգեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն որ երթայր զհետ նոցա. եւ վէմն էր ինքն Քրիստոս: 4:

Ալէլու:

Ուրախ լիցին երկինք եւ ցնծասցէ երկիր. զուարճասցի ծով լրիւ իւրով. տիեզերք եւ ամ՟ բնակեալքն ի նմա: Կամ. Ծով ետես եւ փախեաւ. եւ Յորդանան անդրէն դարձաւ:

Աւետարան ըստ Մատթէոսի. Գ. 1:

✝ Վ՟ մկրտութեան Տեառն մերոյ Յ՟սի Ք՟սի:

Յաւուրսն յայնոսիկ. Վ. ընդ որ հաճեցայ: 17:

Զկնի Աւետարանին ասեն յայնժ. զմեծ Քարոզն է վերայ Ջրոյն. ասացեալ Յովհաննու Ոսկեբերանի:

Յա՛մ՟ ժամ օրհնե՛մք զօրհնեալ փրկի՛չդ Էմմա՛նուէ՛լ. ծնեա՛լ ի կուսէն եւ վերստին ծնըն-

դեամբ մկրտեցար այսօր ի Յորդանան ի Յովհաննէ. նորին բարեխօսութ. ընկալ զաղաչանս քոց պաշտօնէից. աղ: Դպ. Լուր Տէր եւ ող:

Որ սրբեցեր ըզջուրսն Յորդանանու սրբիչդ աշխարհի. տալով ըզկնիք նորոգման որդւոց Սիոնի. տուր մաքրութիւն եկեղեցւոյ եւ ազատութի քում ժողովրդեան. աղ: Լուր Տր եւ ող:

Հեղցես Տէր ի մեզ ըզշնորհս Հոգւոյդ զոր ընկալար տնօրէնութբ ի Յորդանան. զհոգի իմաստութե, գիտութե եւ զօրութե. զհոգի հանճարոյ եւ խորհրդոյ ճշմարտութե. լցո զմեզ հոգւով երկիւղի Այ. աղ: Լուր Տէր եւ ող:

Անուն կոչեցար իւղ Թափեալ. եւ իւղով Հոգւոյն օծեալ կնքեցար. եւ հայրական ձայնիւ յերկնից սիրելի որդի Հօր վկայեցար. շնորհեա յորդեգրութի ծնելոցս ժամանել փառաց Որդւոյդ Աստուծոյ. աղաչ: Լուր Տէր եւ ող:

Նորագործ տաճար կազմեցեր զՅորդանան քան զարփին բարձրագոյն. որով ցուցար ստեղծիչ աշխարհի եւ ամենայն երկնից գերագոյն. արա զմեզ լինել տաճար ամենասուրբ Երրորդութեանդ. աղաչ: Լուր Տէր եւ ող:

Նիւթեղէն մարմնովդ առ ի մէնջ ի Յովհաննէ եղեր ձեռնադրեալ. եւ ըղձուլեալ մարմինդ ի հրոյ ճշմարտութե ջրով այսօր մխեցեր.



ամրացո զմարմին քո նմ. զեկեղեցի ի դրանց դժոխոց լինել անվանելի. աղ: Լուր Տէր եւ ող:

Ի փորձութիւն մտեր յանապատին ընդդէմ փորձողին. եւ մերով բնութեամբս յաղթեցեր հակառակողին յերիս տեսակս մարտին. կարողացո զմիտս եւ ըզմարմինս լինել յաղթող ի փորձանըս չարասիրին. աղաչեմք: Լուր Տէր եւ ող:

Սաւառնացեալ հրեշտակք անմարմինք մատեան պաշտել ըզքեզ յանապատին. որք են բանակք Այ եւ բանակեալ շուրջ զերկիւղածովքըն պարէին. զնոսա տուր մեզ պահապան ի յելս եւ ի մուտս ընդդէմ բանակաց խաւարին. աղաչեմք: Լուր Տէր եւ ող:

Ի հաղբից Թշնամւոյն պարըսպեալ ամրացո նմ. զեկեղեցի. եւ յանուն քո ժողովելոցս շնորհեա զքաւութիւն եւ ըզթողութիւն միածին Որդի Աստուծոյ. յիշեա զհոգիս ննջեցելոց մերոց եւ այց արա ի քում գալստեանդ. աղաչեմք: Յիշեա Տէր եւ ող:

Բամեա զցրուեալսն ի մի միաբանութիւն յուսոյ հաւատոյ եւ սիրոյ. ի հնազանդութիւն քոյոց ածայնոց պատուիրանաց. ի վայելուչ երկնայնոց հայրականաց քոյոց օթեւանաց. աղաչեմք: Լուր Տէր եւ ող:

Գումամբ տիրուհւոյ լսկապէս մօր քոյ եւ կուսի Մարիամու Աստուածածնին. եւ հուպ եղելոյ քեզ հողանիւթ հրեշտակին ի Յորդանան այսօր ըզքեզ ձեռնադրողին. կրկին բացողին զերկինս սրբոյն Ստեփանոսի Նախավկային. եւ հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. եւ ամենայն սրբոց քոց Տէր որք յաւիտենից քեզ հաճոյացան. առ: Լուր Տէր եւ ող:

Եւ ես առաւել զյորդորումն սիրոյ. եւ ըզգործըս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Դպ. Տուր մեզ Տէր Աստուած մեր:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպ. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեա մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպ. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. լուր Տէր եւ ողորմեա:

Յորդորակ ի Գրիգորի Կամրջաձորեցւոյ ասացեալ:

Ով զարմանալի խորհրդոյս այս մեծ
յայտնեալ.
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ:
կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ.
Զառնոյր կարապետն զմկրտելն ի յանձն:



Յորդանան լուեալ փախըստական դառնայր. Վըտակ առ վըտակ պատգամաւոր լինէր:
Գետ մի զարհուրիր քո արարիչն եմ ես. Եկեալ մկրտիմ եւ լուանամ զմեղս:
Յիսուս յառաջեաց աստուածութեամբն ի ջուրն. Հանդերձ Յովհաննու Յիսուս ի գետն եմուտ:
Երկինք պատառեալ ձայն ի վերուստ իջեալ:
Ձայն Հօր ի բարձանց Որդւոյն իւր վկայեալ:
Դա է իմ որդի ՚նդ որ հաճեցայ ասէր.
Դըմա լուարուք որդիք մարդկան ձայնէր:
Սբ Հոգին իջեալ աղաւնակերպ տեսլեամբ.
Յայտնեալ ցուցանէր Հօր փառակից զՈրդի:
Արդ օրհնեալ է Հայր եւ համագոյ Որդին. Հոգւոյն ճշմարտի փառք յաւիտեանս ամէն:

Տաղ անոյշ Զօրհնեալ:

Այսօր ձայնն հայրական
Յերկնից իջեալ հաճոյական
Սիրեցելոյ Որդւոյ վկայն.
* Այ յորդորէ. գետ յորդորէ. գետ Յորդանան:
Յորդորական ձայնիւ երգէր
Մեծ կարապետն Յովհաննէս:

Այսօր երկիրս երկինք եղեն
Երեւելով Աստուածորդւոյն,
Սիրով եկեալ ի մկրտիլ: — Այ յորդո:
Այսօր բացեալ՝ փակեալ երկինքն,

Զոր յանցանօք փակեաց Ադամ.
Եւ Հայր որդի զնա կարդալով: — Ալ յորդորէ:
Այսօր Հոգին աղաւնակերպ
Իջեալ յերկնից ի Յորդանան,
Իւր փառակցին վըկայելով: — Ալ յորդորէ:
Այսօր հրեշտակք անդրէն պարեն,
Ժողովք ամէն օրհնաբանեն.
Ըզմըկրտեալն Ած գովեն: — Ալ յորդորէ:

Եւ սարկաւագն քարոզէ ի Բեմն:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչես-
ցուք: Տէր ողորմեա:
Վասն ի վերուստ խաղաղութե եւ փրկու-
թե անձանց մերոց զՏէր աղա. Տէր ողորմեա:
Վասն խաղաղութե ամ աշխարհի եւ հաս-
տատութե նյ եկեղեցւոյ զՏէր աղ: Տէր ողորմեա:
Վասն առաջիկայ ջրոյս, եւ որ հանդեր-
ձեալ են հաւատովք ընդունել զօրհնութիւն ի
սմանէ՝ զՏէր աղաչ: Տէր ողորմեա:
Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւնն Յոր-
դանանու՝ շնորհօք միածնին որ լուսաւորեաց
զմեզ, զՏէր աղաչեսց: Տէր ողորմեա:
Վն իջանելոյ Հոգւոյն նյ ի ջուրս յայս, եւ
վերածնելոյ՝ որք մկրտին եւ լինին որդիք լուսոյ
եւ ճշմարտութե, զՏէր աղ: Տէր ողորմեա:
Վասն լինելոյ սմա ի բժշկութիւն հոգւոց
եւ մարմնոց՝ զՏէր աղաչեսց: Տէր ողորմեա:



Յիշելով զԱծածին ըբ կոյսն Մարիամ, եւ
զմկրտիչն Յովհաննէս, եւ զամենայն սուրբս զՏէր
աղաչ: Տէր ողորմեա:
Եւ եւս եւ վասն միաբան: Տէր ողորմեա:
Զանձինս մեր եւ զմիմ: Քեզ Տռնդ յանձն:
Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ
մեծի ողորմութեան քում ասասց:

Տէր ողորմեա. Տէր ողոր. Տէր ողոր:

Օրհնութեան Ջրոյ, զոր ասացեալ է Սրբոյն Բարսղի
Կեսարացւոյ:

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ, յամի:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Աստուած կենդանի՝ որ էն, եւ ես, եւ էդ. Աստ:

Ապա եպիսկոպոսն առնու զսուրբ խաչն եւ
զսուրբ միւռոնն ի ձեռս. եւ խաչանիշ առընելով կնքե-
ցէն: Եւ տեառնագրէն՝ եպիսկոպոսն խաչիւն եւ մի-
ւռոնաւն, եւ խաչանիշ աւետարանաւն զջուրն, ասե-
լով բարձր ձայնիւ.

Օրհնեսցի † եւ սրբեսցի ջուրս այս
նշանաւ սուրբ խաչիս † ըբ աւետարանաւս եւ
սուրբ միւռոնաւս եւ աւուրբս շնորհիւ. յանուն
Հօր † եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Ժողովուրդն. Ամէն. ալէլուիա. ալէլուիա.
ալէլուիա:

Երիցս կրկնեա. Օրհնեսցի եւ սրբես:

Եպիսկոպոսն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից:

Ժողովուրդն. Ամէն:

Շարական ԴՁ:

Առաքելոյ աղաւնոյ. իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. իբր նմանութիւն լուսոյ փայլման. հրաշլինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն:

Եւ եպիսկոպոսն զայս նոյն արկանէ զսուրբ մեռոնն խաչաձեւ ի ջուրն, եւ զխաչն ընէ: Եւ ասեն

Շարական ԴՁ:

Մկրտի Քրիստոս եւ սրբի ամենայն արարածք. եւ տայ մեզ թողութիւն մեղաց ջրով եւ Հոգւով վերասրբելով զմեզ:

Ապա քարոզ. Սբ խաչիւս: Աղ: Պահպանեա:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

---

## ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

Մեղէդի:

Քրիստոս փառաց թագաւորն. — Այսօր եկեալ յընծայումն. — կատարելով նա զօրէնսն. — քառասնօրեայ գալստեամբ:



Ի գիրկս առեալ ծերունին — զԱստուածորդին եւ ասէր. — Մեծ աւետիք են այսօր — Տիեզերացն ամենի:

Ժամամուտ շարական այլ ասա:

Ա. Ծերունին այսօր Սիմէոն, Հոգւովն գայր ի տաճարն, երեւելով քերովբէիցն վեհագոյն. որոց թեւօքն սաւառնեալ ոչ իշխէին նայել ի յահեղ փառացն, սա ի գիրկս իւր բարձեալ համբուրէր համարձակապէս. եւ գգուէր ոչ մանուկ. եւ աղերսելով հայցէր արձակել ի խաղաղութի:

Բ. Անսկզբնական Բանդ Աստուած, ի վերջին աւուրս յանձն առեր լինել մարդ ի կուսէն, եւ արարիչդ յաւիտենից փակեցար ընդ ժամանակաւ: Սուրբ տէր սրբութեանց, եւ անկարօտ մաքրութեանց, եկիր ի տաճարն քառասնօրեայ, զօրինացն կատարեցեր զարդարութիւն. զոր բարձեալ Սիմէովնի զանպարագրելիդ ի գիրկս իւր՝ հայցէր. որ արձակիչդ ես կապելոց՝ արձակեա զիս ի խաղաղութիւն: Վասն որոյ ընդ ծերունւոյն Սիմէովնի վերագոչեմք առ քեզ Տէր. սբ, սբ, սբ Տէր զօրութեց. լի են երկինք եւ երկիր փառօք քո. ի փրկութի մեզ՝ Քս Ած. փառք քեզ:

Ձայնս շարական ԴԿ:

Փոխ. զՄեծացուսցէն ասացեալ է ընդ առա:

Անըսկիզբըն Բանըն յանըսկըզբընական ի Հօրէ. եւ սկըզբնաւորեալ ի կուսէն մարմնոյ

զգենցմամբ. բովանդակելով յորովայնի եւ ընդ Հօր գոլով. եւ սահմանեալ ժամանակաւ ծնեալ լինի Աստուած եւ մարդ: Մըտեալ ընդ օրինօք անհիւթականին հողանիւթ գոլով. զի զհողածնեալքըս Հօրն ընծայեսցէ. Աստուածորդին որ ի ծոց Հօր. տղայ քառասնօրեայ բառնի ի գիրկըս ծերունւոյն. եւ յայտնապէս ծանուցանի Աստուած եւ մարդ: Փառք Հօր: Վասն որոյ եւ Սիմէոն ցնծայր հոգւովն աղաղակէր ի տաճարին. արդ արձակես զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի ընդհանուր տեսի զփրկողդ Աստուած եւ մարդ:

Առաջին սաղմոս Ժ:

Կց. Տէր ի տաճար սուրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում.

Փխ. Ի Տր յուսացայ. որպէս ասիցէք ցանձն իմ, փոփոխեաց ի լերինս որպէս ճնճղուկ:

Ընթերց. Մրգր. Եսայ. ԻԴ. 21: Եւ եղիցի յաւուր յայնմիկ. Վ. ԻԵ. 8:

Առաք. Գաղ. Դ. 1: Զայս ասեմ. ցորքան ժամանակս. Վ. 7:

Ալէլու:

Արդ արձակես զծառայս քո, Տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկողդ Աստուած:



Աւետ. Ղուկ. Բ. 41: Եւ երթային ծնողքն. Վ. 52:

Սրբասացութիւն. Բազմութիւնք. 18:

---

## ԱՒԵՏՈՒՄՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Մեղեդի:

Բարբառ աւետեաց ձայնիւ. կրկնէ. — Գաբրիէլ գոչէր սրբուհւոյն. — Առ քեզ առաքիմ. մաքուր. կրկնէ. — Պատրաստեալ տեղի տէրունւոյն:

Ժամամուտ Ծննդեան տաղ. Աստուածածին. 9:

Ճաշու շարական ԳԿ:

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ:

Աստուածածին խորան լուսոյ անվայրափակ արփւոյն կենաց. որ եղեր արեւելք արեգականն արդարութեան. եւ նստելոյս ի խաւարի լոյս ծագեցեր. * վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք: Անպական տաճար եւ մորենի անկիզելի. որ զանշէջ հուր Աստուածութեանն ի քեզ տարեալ կրեցեր. որով բնութեանս կիզեալ շիջաւ կրից բոց. վասն որոյ: Փառք Հօր: Կենդանի տապանակ կտակարանաց նորոյ ուխտիս. որով երկինք յերկիր աւետեաց հորդեալ. Հոգւով ի

քե՛զ տըպա՛ւո՛րեա՛լ Բանի՛ն. վա՛սն որո՛յ ա՛մենե-
քեա՛ն ըզքեզ մի՛շտ մեծա՛ցուցանե՛մք:

Առաջին սաղմոս ԿԷ:

Կց. Տէր տացէ զբան՝ ոյք աւետարանեն
զօրութեամբ բազմաւ:

Փխ. Յարիցէ Աստուած եւ ցրուեսցին ա-
մենայն թշնամիք նորա. փախիցեն ատեցք նորա
յերեսաց նորա:

Ընթ. Եբր. Ա. 1: Համբուրեսցէ զիս. Հ. 11:
Առակ. ԺԱ. 30: Ի պտղոյ արդարութե. Հ. ԺԲ. 4:
Մրգ. Եսայ. ԾԲ. 7: ‖ Իբրեւ զի գեղեց. Հ. 10:
Մրգ. Զաքար. Բ. 10: Խնդա եւ ուրախ. Հ. 13:
Մրգ. Մաղաք. Գ. 1: ‖ Ահա ես առաքեմ. Հ. 2:
Առաք. Բ Կորն. Զ. 16: Ապաքէն դուք. Հ. Է. 2:

Աւետ. (Ղուկ. Ա:)

Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ.
օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է
պտուղ որովայնի քո:

Աւետ. Ղուկ. Ա. 26: Եւ յամսեանն. Հ. 38:
Սրբասացութեան ձայն. Բազմութիւնք. 18:

---

# ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մեղեդի:

Ա՞՞ստ Ե՛բրայեցւո՛ց մա՛նկո՛ւնքն. — Զե՛րգ
ը՛գբրո՛վբէի՞ցն ա՛ւեա՛լ. — Հե՛թա՛նո՛սակա՛ն
գա՛սո՛ւց. — Տօնա՛կի՛ց վե՛հի՞ցն ե՛ղեա՛լ:



Ժամամուտ:

Ցնծա Երուսաղէմ, եւ զարդարեա զառա-
գաստ քո Սիովն. քանզի ահա Թագաւոր քո Քն
նստեալ ի յաւանակի նորոյ՝ հեզութի ցուցանե-
լով գայ մտանէ յառագաստ քո Սիովն: Եւ մեք
աղաղակեմք՝ ովսաննա, օրհնեալ եկեալ ի յա-
նուն Տեառն, որ ունի զմեծ զողորմութի:

Ճաշու շարական ԴԿ:

Փոխ. Տէր թագաւորեաց. վայելչութի՛ ըզգ:

Ա՛նըսկի՛զբըն Բա՛նըն Հօ՛ր ո՛ր ի՛ վե՛րայ քե-
րոբէի՞ցըն հանգչի՛. այսօր ի վե՛րայ յաւա՛նակի
նո՛րոյ նըստեա՛լ. * օ՛րհնեալ արքա՛յ եկեալ ան-
յաղթե՛լի՛ թա՛գաւո՛րն: Յառա՛ջ քան զյաւի-
տեա՛նս Որդի՛ն որ ի՛ վե՛րայ քառա՛կերպի՞ցըն
բազմի՛. ա՛յսօր ի ծերոց եւ ի՛ տղայոց փա՛ռատրե-
ցա՛ւ. օ՛րհնեալ արքայ: Փա՛ռք Հօ՛ր: Եկա՛յք նոր
ժողո՛վուրդք ընդ անմարմնո՛ցըն դա՛սս բազմու-
թեա՛ն. ը՛զսա՛ հըռչա՛մա՛մբ երգով քաղցըր ձայնիւ
փառա՛տրեսցո՛ւք. օ՛րհնեալ արքայ:

Առաջին սաղմոս ՂԷ:

Կց. Լերինք ցնծասցեն առաջի Տեառն զի
գայ. եւ հասեալ է Տէր ի դատել զերկիր:

Փխ. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր.
զի սքանչելիս արար.

Ընթ. Եբր. Ա. 1: Համբուրեսցէ զիս ի համբ.
(տաղաւարաց է.) Հ. Բ. 3:

Մրգ. Զաքր. Թ. 9: Ուրախ լեր յոյժ. Հ. 15:
Առաք. Փիլիպ. Դ. 4: Ուրախ լերուք ի Տէր. Հ. 7:

Ալէլու:

Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ. արարէք տօնս ուրախութեան կանխաւ մինչեւ յանկիւնս սեղանոյ:

Աւետ. Մտթ. Ի. 29: Եւ յելանելն. Հ. ԻԱ. 17:
Սրբասացութիւն. Հրեշտակային կարգ. 17:

---

## ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ

Ի պատարագին Դռօսխումէ չէ, եւ Սբ Ած ոչ ասի, եւ ոչ շուրջ գան զսեղանովն. այլ յաւել ասացէին Օրհնեա տէր. բանան վերարկոյն: Պատարագէին՝ Զի ողորմած եւ մարդասէր. եւ յաւանին՝

Ճաշու սաղմոս ԻԲ:

Կց. Պատրաստ արարեր առաջի իմ. սեղան ակնյանդիման նեղչաց իմոց:

Փխ. Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Ընթերց. առաք. Ա Կորնթ. ԺԱ. 23: Զի ես ընկալայ. Վերջ՝ դատապարտեսցուք. 32:

Ալէլու:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակնյանդիման նեղչաց իմոց:



Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո ոգի անապակ արբեցոյց զիս:

Աւետար. Մատթ. ԻԶ. 17: Եւ յառաջնում աւուր. Վերջ՝ ի լեառն ձիթենեաց. 31:

Սրբասացութիւն:

Որ վերանստիս ի կառս հրանիւթս քառակերպեանս՝ անճառելի Բանդ Աստուած. այսօր իջեալ ի յերկնայնոցն վասն քոյ արարածոցս, յանձն առեր բազմել ընդ աշակերտսն: Եւ սերովբէքն եւ քերովբէքն հիացեալ զարմանային. եւ պետութիւնք վերին զօրացն սքանչացեալ աղաղակէին ասելով. սբ, սբ, սբ Տէր զօրութեց:

Ցորժամ քհն պատարագեալն լինի՝ դպիրքն երգեն զՏաղս յորդորական յայնժմ, եւ հաղորդին ժողովուրդն:

Տաղ:

Ընկա՛յք մա՛րդի՛կ ա՛մենայն. — Մատի՛ք առ Տէ՛ր սրբութեամբ. — Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք. — Զի՛ քա՛ղցր է՛ Տէ՛ր բա՛րութեա՛ն:

Հացս այս մարմին Քրիստոսի. — Բաժակ արեան Նոր ուխտի. — Ծածկեալ խորհուրդս այս յայտնի. — Աստուած ի սմա երեւի:

Որք անմաքուր էք հոգւով — Ի բաց կացէք դողալով. — Զի հուր կիզիչ է բոցով՝ — Զհոգիս անարժան մարմնով:

---

# ՃՐԱԳ ՇԱԲԱԹ

Ցերեկոյին յառաջ ընթերցուածոց մտանեն յեկեղեցին, եւ կարգաւ զԴռնբացէքն է բեմն:

Ընթերցուած ի Դանիէլէ մարգարէէ: Գ. 1:

Յամին ութուտասաներորդի Նաբուքոդոն:

Ցաւէն զՀարցն ասողն՝ երբ զՕրհնեցէք ամ գործքն ասասցեն, դպիրքն երգեն ձայնը յայսնի.

Օ՛րհնեցէք. գովեցէք. եւ բա՛րձր արարէ՛ք ըզնա՛ յաւիտեա՛ն:

Եւ է կատարման Հարցն ասողին՝ զի յաւիտեան է ողորմ նորա. առաջնորդն բարձր յայտնիձայնէ. Օ՛րհնեա տէ՛ր:

Քհն. Օրհնեալ թագաւորութիւնն: Եւ ասէ

ժամամուտ:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց. (դպիրքն՝ Օրհնեալ է Աստուած: Եւ բանան զվարագոյրն. եւ զանգակ եւ ժամահար ի հետ հնչեցուցանեն.) Մահուամբ ըզմահ կոխեաց. եւ յարութեամբ իւրով մեզ կեանս պարգեւեաց. նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ճաշու շարական ԱՁ:

Փոխ. Գովեա Երուս: Յարեաւ Քն. եր. 77:

Առաջին ասողն. ԿԴ:

Կց. Քեզ վայելէ: Փխ. Լուր աղօթից. եր. 79:



Ընթերց. առաք. Ա Կորն. ԺԵ. 1: Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետ. Վ. հաւատացէք. 11:

Ալէլու. Յարեաւ Ած եւ ցրուեցան թշնամիք նր. փախեան ատելիք նր յերեսաց նր:

Աւետ. Մտթ. ԻԸ. 1: Եւ յերեկոյի. Վ. 20:

Սրբասացութիւն. Ո՞վ է որպէս. եր. 81: — Մինչ է պենտեկոստէ այս է սրբասացութիւնն:

---

*Նախատօնակ Յարութեան:*

Զկնի արձակման պատարագին (յետ Պահպանեա աղօթիցն՝ ելանեն յատեան, եւ տան մոմեղէն ի ձեռս ամենեցուն:

Քհն. Օրհնեալ Տէր մեր † Յս Քս. ամէն:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղ:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ: Եւ առաջնորդն խօսնակ ասէ:)

Եւ ասեն Շարական ԱՁ:

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան. հարսն ի յերկրէ եկեղեցի. * օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն: Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեալ Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա: Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ լուսովն. եւ քեզ ծագեաց լոյս գի-

տուլթեան. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեալ է ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն:

† Այսօր զատիկ մեր զենմամբ Քրիստոսի. արասցուք տօն ցնծութեամբ. նորոգեալքս ի հնութենէ մեղաց ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Այսօր հրեշտակըն լուսափայլ ի յերկնից իջեալ. զարհուրեցոյց ըզպահապանսն. եւ նա կանանցըն քարոզէր ասելով. Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Այսօր նոր Իսրայէլ կոչեցեալք ի Քրիստոս. ազատեալք ի արեամբ գառինն Աստուծոյ. պարեսցուք ընդ երկնայնոցն ասելով. Քս յարեաւ ի մեռելոց:

Եւ եւս խաղաղու: Օրհնութիւն եւ փառք:

Եւ է սկսանելն զՀարցն իջանէ առաջնորդքն յեկեղեցին, եւ ելնէ զխորանովն եւ զճառագայթեալսն:

Հարց Դկ. էար տարեցն:

Այսօր մեծ աւետիք Ադամայ նախաստեղծին տուեալ. արի որ ննջես լուսատու եղեւ քեզ յարուցեալըն Քրիստոս. Աստուած հարցըն մերոց: Այսօր ձայն աւետեաց յեւայի գոչէ ըն լսելիս. դըստերք իւղաբերք տեսայք յարուցեալ ըզյարութիւնըն քո ըզՔրիստոս. Աստուած հարցըն մերոց: Այսօր հրեշտակք յերկնից իջեալ տան զաւետիս մարդկան. յարեաւ



խաչելեալն եւ յարոյց ըզձեզ ընդ ինքեան. Աստուած հարցըն մերոց:

Գ. Օրհնեցէք ամենայն գործք Տեառն ըզՏէր. * օրհնեցէք. եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Այսօր Տէրըն մեր յարեաւ. եկայք պարեսցուք ընդ հրեշտակս յաղթական երգով. օրհնեցէք: Այսօր սիւն լուսոյ ծագեաց մեր եկեղեցւոյ. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեցէք:

Մեծ. Աստուածածին տաճար լուսոյ. որ մարմնով պարագրեալ անճառաբար ծնար զԲանն Աստուած. * զքեզ բարեբանեալ մեծացուցանեմք: Ուրախ լեր եւ բերկրեա մայր եւ կոյս. քանզի ծնեալն ի քումէդ այսօր վերըստին յարութեամբ ծնաւ ի կոյս գերեզմանէն. զքեզ: Ցնծա եւ զուարճացիր հարսն ի յերկրէ երկնից. քանզի այսօր երկնայնոցն իջեալ տային քեզ զաւետիս յարութեան միածնի Որդւոյ քո. զքեզ:

Ող. Այսօր ըզպասեք չարչարանաց ելից Իսրայէլի փոխեցեր. ի փրկութիւն հոգւոց զատիկ սուրբ յարութեամբ քո Քրիստոս: Այսօր ընդ արեանց օրինակին անբան գառանցըն զենմանց. պարգեւեցեր մեզ գառն Աստուծոյ. զարիւնըդ քո փրկական: Այսօր ընդ ան-

դրանկացն ազատութեան ազատեցեր ըզգերեալսն. պըտուղ կենաց նընջեցելոց եւ անդրանիկ մեռելոց:

Տրյ. Այսօր հրեշտակք ի բարձունս ուրախանան ընդ մարդկան. որք իջեալ ի յերկնից տուին աւետիս աշխարհի. ցնծացէք այսօր Քն՝ յարեալ ի մեռելոց: Այսօր զուարթութիւնն ի վիմին խնկաբերից սուրբ կանանցն. փողէր ձայնիւ ցնծութեամբ պատմել աշակերտացն ասելով. ցնծացէք այսօր Քրիստոս յարեալ ի մեռելոց: Փառք Հօր: Այսօր վիմին հաւատոյ եւ Յովհաննու սիրելւոյ ընդ հակառակս ընթացեալ ի գերեզման յարուցելոյն. զոր տեսեալ պատմէին Քն՝ յարեալ ի մեռելոց: Այժմ եւ միշտ: Այսօր եւ մեք զուարճացեալք պայծառասցուք տօնիւս. ընդ հաշտութեանն Աստուծոյ միմեանց արկցուք գիրկս սիրով. եւ միաբան գոչեսցուք. Քրիստոս յարեալ ի մեռելոց:

Ջնէ՝ Որթիւ:

Աւետարան ըստ Մատթէոսի. ԻԸ. 16:

† Յետ յարութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա. վերջ՝ ի կատարած աշխարհի: 20:

Քարոզ:

Սրկ. Խնդրեսցուք հաւատով միաբանութբ



ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի:

Դպ. Ձայնէ. Կեցո Տէր: Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթք:

Քհն. Թագաւոր խաղաղութեան, օգնական եւ փրկիչ անձանց մերոց, Քրիստոս Աստուած մեր. պարսպեալ պահեա զժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ եւ պատուական խաչիւդ քո ի խաղաղութեան: Փրկեա յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն: Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Դպ. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամե:

Քհն. Օրհնեալ եղերուք ի շնորհաց:

## ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Մեղեդի:

Նոյն ձայն զարիւծուն ասեմ. Երգ 76:

Ժամամուտ. Քն յարեաւ ի մեռելոց. 76:

Ճաշու շարական ԱԶ:

Փոխ: Գովեա Երուսաղեմ զՏէր:

Յարեաւ Քրիստոս ի մեռելոց. Երգ 77:

Առաջին սաղմոս սրբոցն:

Ա փոխ: Սղմ. Ա: Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդս ամպարշտաց. ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց, եւ յաթոռս ժանտից նա ոչ նստաւ:

Բ փոխ: Սղմ. Բ: Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս:

Բայց թէ սրբոցէ լինի՝ դու ընթերցիր առաջին սաղմոսն սա. ԿԴ. Քեզ վայելէ. Երգ 79:

Ընթ. Գործ. Ա. 15: Եւ յաւուրսն յայնոսիկ. Վ. 26:

Ալէլու սղմ. ՃԽԷ. Գովեա Երուսաղէմ. Երգ 80. տուն առ տուն է ըստ սմա:

Աւետարան ըստ Մարկոսի. ԺԶ. 2:

† Վն յարութն Տեառն մերոյ Յսի Քսի:

Նոյն ընդ առաւօտս միաշաբաթուն. Վերջ՝ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին: 8:



Սրբասացութիւն. Ո՞վ է որպէս. Երգ 81:

Տաղ յարութեան՝ տես յերգս 81:

Վերջին աւետարան. Մատթ. ԻԸ. 16: Իսկ մետասան աշակերտքն. Վերջ՝ 20:

---

## ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ

*Երկրորդ օր Զատկի:*

Մեռելոց է:

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռ. 76:

Ճշ. շարական. Յարեաւ Քրիստոս ի մեռ. 77:

Սրբոցին սաղմոս:

Ա փոխ: Սղմ. Դ: Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած, ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց:

Բ փոխ: Սղմ. Ե: Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ:

Թէ սրբոցէ լինի՝ ծշ. սղմ. ընթերցիր սաղմոսն սա. ԿԴ. Քեզ վայելէ օրհնութիւն. 79:

Ընթ. Գործ. Բ. 22: Արք իսրայէլացիք. Վ. 41:

Ալէլու սղմ. ՃԽԷ. Գովեա Երուսաղէմ. 80. տուն առ տուն է ըստ սմա:

Աւետար. Ղուկ. ԻԴ. 1: Բայց ի միաշաբաթուն. Վերջ՝ զարմացեալ թէ զինչ եղեւ. 12:

Սրբասացութիւն. Ո՞վ է որպէս. 81:

## ԵՐԵՔՇԱԲԱԹԻ

*Երրորդ օր Զատկի:*

Ժամամուտ. Քրիստոս յարեաւ ի մեռ. 76:

Ճշ. շարական. Յարեաւ Քրիստոս ի մեռ. 77:

Սաղմոսի սաղմոս:

Ա փոխ: Սղմ. Է: Տէր Աստուած իմ, ի քեզ յուսացայ՝ եւ փրկեա զիս. եւ յամենայն հալածչաց իմոց ապրեցո զիս:

Բ փոխ. Սղմ. Ը. Տէր Տէր մեր. զի՜ սքանչելի է անուն քո ի վերայ ամենայն երկրի:

Թէ սաղմոսի չասես՝ զերեկոյի սաղմոսն ասա: Կց. Տէր ո՞վ զինու: Փխ. Բանից իմոց ունկն դիր. 79:

Ընթ. Գործ. Բ. 42: Եւ էին հանապազորդեալք. Վ. Գ. 21:

Ալէլու. Գղէ. Տէր ի զօրութ քում. եր. 81:

Աւետ. Ղուկ. ԻԴ. 13: Եւ ահա երկուք ի նոցանէ. Վ. 35:

Սրբասացութեան. Ո՞վ է որպէս. 81:

---

## ՆՈՐ ԿԻՐԱԿԻ

*Ութերորդ օր Զատկի:*

Մեղեդի:

Այսօր նոր արեւ հարեալ ի նորահրաշ արեգակնէ. կէնէ: Այսօր նոր շուշան ծաղկեալ ի նորատունկ բուրաստանէն:

Ժամամուտ. Ահաւոր եւ սքանչելի. 77:

Ճաշու շարական ԱՉ:

Փոխ. Գովեա Երուսաղէմ զՏէր:

Նորացուցէք զօրհնութիւն. երես 77:

Սաղմոսի սաղմոս:

Ա փոխ: Սղմ. ԻԲ: Տէր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Բ փոխ: Սղմ. ԻԳ: Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա:

Ընթ. Գործ. Ե. 34: Յարուցեալ ոմն. Վ. Ջ. 7:

Մեսեդի Կէր. Քեզ վայելէ օրհնու. 79:

Կթղ. Յակ. Գ. 1: Մի բազում վարդ. Վ. 12:

Ալէլու. Գովեա Երուսաղէմ զՏէր. տուն առ տուն ի լման ասա, երես 80:

Աւետ. Յովհ. Ա. 1: Ի սկզբանէ էր. Վ. 17:

Սրբասացութեան. Ո՞վ է որպէս. 81:

Վերջին աւետարան՝ Յովհ. ԻԱ. 15: Եւ իբրեւ ճաշեցին. Վ. 19:

---

## ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Մեղեդի:

Այսօր անդրանիկ Հօր միածին Որդին.
Ցերկինս սլանայ աստուածային կերպիւ.
Նուագ նորբողից երանական այսօր.
Հնչեք հոգեղինաց երկնաւորացն խմբից:

Ժամամուտ:

Հիացան վերնական բազմութիւնքն տեսանելով զքեզ ի հրեղէն կառս բազմեալ. սարսեալ ասէին. ով է սա որ դիմեալ գայ յԵդովմայ, եւ եկեալ մտանէ փառօք ի փառս. Տէր փառք քեզ:

Ճաշու շարական ԱԶ:

Փոխ. Գովեա Երուսաղէմ զՏէր:

Որ համբարձաւն այսօր աստուածային իշխանութեամբ ի հայրական իւր կառս. սպասաւորելով ի հրեշտակական դասուցն. որք նուագէին ասելով. * Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. եւ մտցէ թագաւոր փառաց: Հիացան վերնական իշխանութիւնքն. եւ սոսկալի ձայնիւ աղաղակէին առ միմեանս. ով է սա թագաւոր փառաց եկեալ մարմնով եւ սքանչելի զօրութեամբ. Համբարձ: Փառք Հօր: Երանակէին վերնական պետութիւնքն հրաշալի ձայնիւ. նրգէին երգ նոր



ասելով. սա ինքն է թագաւոր փառաց փրկիչ աշխարհի եւ ազատիչ ազգի մարդկան. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. եւ մտցէ թագաւոր փառաց:

Սաղմոսի սաղմոս:

Ա: Սղմ. ՃԺԸ: Երանեալ են անբիծք ի ճանապարհի. եւ ոյք գնան յօրէնս Տեառն: Բաժին իմ ես դու Տէր. ասացի պահել զօրէնս քո: Արարի իրաւունս եւ արդարութիւն. մի մատներ զիս ի ձեռս նեղչաց իմոց:

Բ: Սղմ. ՃԺԹ: Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ Տէր. փրկեաց զանձն իմ ի շրթանց նենգաւորաց եւ ի լեզուէ չարէ:

Բայց թէ սաղմոսն լինի, ասա չերեկոյի առաջին սաղմոսն ճաշու սաղմոս սաս. ԽԶ:

Կց. Համբարձաւ Աստուած օրհնութեամբ. եւ Տէր մեր ձայնիւ փողոյ:

Փխ. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ Աստուած ի ձայն ցնծութեան:

Ընթերց. Գործ. Ա. 1: Զբանն առաջին. մ. 14:

Ալէլու:

Կց. Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր. ամբարձցին դրունք յաւիտենից, եւ մտցէ թագաւոր փառաց:

Փխ. Տեառն է երկիր լրիւ իւրով. աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա։

Աւետ. Ղուկ. ԻԴ. 41։ Եւ մինչդեռ տակաւին չհաւատային. Քրզ՝ օրհնէին զԱծ։ 53։

Սրբասացութիւն. Ո՞վ է որպէս. 81։

---

## ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Մեղեդի։

Ա. Նուագեմք Հոգւոյն նուագս վայելուչս. — Վայելուչ բանիւ զարմանչութիւն նախ ասեմք։

Բ. Իմաստնոց մեծի ատուր տօնիս. — Հոգւոյդ սուրբ իջեալ յերկնից — Յերուսաղէմ քաղաք — Ի նշանաւոր տեղի մի։

Ժամամուտ։

Աստուած գթեղ խոստովանիմք զսուրբ Հոգիդ եւ երկիր պագանեմք. որ ես պատճառ կենդանութեան եղելոցս եւ խաղաղարար աշխարհի. որ զոգիտութիւն աշակերտացն բազում գիտութեամբ լցեր, եւ ի հրեղէն լեզուս բաժանեալ անճառելեօք ցուցեր նոցա. աղաչեմք Տէր, խնայեա եւ կեցո զմեզ։

Ճաշու շարական ԲՁ։

Փոխ. Տէր թագաւորեաց. վայելչութիւն զգ։

Որ ի հայրաշարժ ի յանըղէրէն յառաջ բղխեալ անհամաբար ի յորդւոյ



տիրապէս սուրբ Հոգին աստուածային. ի յերկնից սաստիկ հեղեալ. ի դասս առաքելոցն լցուցիչ բոլորից. * Ընդ նմին օրհնեսցուք երկրպագելով։ Որ յանսկիզբն եւ ի միշտ ի յէութեան. նոյնագոյ բնութեամբ անորիշ բաժանմամբ ի յորդւոյ. արարչակից նմին Հոգին աստուածային. հրով բաժանեալ լեզուս քարոզիցն. ի լոյս ածեալ զազգս մարդկան բաժանմամբ պէսպէս շնորհաց. Ընդ նմին։ Փառք Հօր։ Որ ի վերայ ջուրցն գոլով գոյացոյց զարարածս. անանջրպետն ի Հօրէ եւ յորդւոյ իշխանակից սուրբ Հոգին աստուածային վերածնեաց զազգս ամենայն. ջրոյ կենդանւոյ բղխեալ յԵրուսաղէմ. Ընդ նմին։

Սաղմոսի սաղմոս։

Ա փոխ։ Սղմ. ՃԽԸ։ Օրհնեցէք զՏէր յերկնից. օրհնեցէք զնա ի բարձունս։

Բ փոխ։ Սղմ. ՃԽԹ. Օրհնեցէք զՏէր յօրհնութի նոր. օրհնութի նմա յեկեղեցիս սրբոց։

Թէ սաղմոսի չունի՝ ՏՂ. սղմ. չորեքկոյն ասասցէն

Սաղմոս տաղ. ՃԽԲ։

Կց. Հոգի քո սուրբ եւ բարի առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ։

Փխ. Տէր լուր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ քով։

Ընթերց. Գործ. Բ. 1: Եւ ի կատարել աւուրցն պենտեկոստէի. Վերջ՝ զանուն Տեառն կեցցէ: 21:

Աղէրս Եօթնողէ. Ամենայն ուրեք ամենայն իրիք ժամանակ է. Վերջ՝ զմարդասիրութիւնն:

Ալէլու:

Ողորմութեամբ Տեառն լի եղեւ երկիր, եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան. եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա:

Աւետարան ըստ Յովհան. ԺԴ. 25:

† Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Զայս խօսեցայ ընդ ձեզ մինչ առ ձեզս եմ. Վերջ՝ օն արիք գնասցուք աստի: 31:

Սրբասացութիւն. Հրեշտակային. Երես 17:

Եւ մաղթանք պատարագին: Եւ հաղորդելն արժանաւորին. եւ դարձեալ Երգեն զԱւագ Հինգշաբթուոյ տաղն՝ Եկայք մարդիկ ամենայն. Երես 125:

Տաղ Հոգւոյ Գալստեան:

Որ յիններեակ յոբելինին, — Ի կատարման պենտակոստին. — Առաքեցեր զքո սուրբ Հոգին, — Ի վերնատունըն խորհրդին. — Մըխիթարել ըզտրտմութիւն — Աշակերտաց մետասանին. — Հնչեաց նըման հողմոյ ուժգին, — Եւլից ըզտունն յոր նստէին. — Ցոյց պարգեւս ճծային — Հրեղէն լեզուօք բաժանէին:

---

# ՏՕՆ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

*Ութերորդ օր Պենտէկոստէին:*

Ժամամուտ:

Վասն որոյ եւ մեք զՀոգին սուրբ ընդ Հօր միաւորեալ, եւ ընդ Որդւոյ միասնական խոստովանիմք. եւ հայցեմք ի վերնատունըդ մեզ զհոգեւորական զխաղաղութիւնդ. Տէր փառք քեզ:

Ճաշու շարական ԲԿ:

Փոխ. Տէր թագաւորեաց. վայելչութի ըզգ:

Երրորդութիւն անբաժանելի. եւ զօրութիւն երկնային. լոյս ծագեալ յաշխարհ. * Նման ԶԶ հանցուք զօրհնութիւնս երգով: Որ էջն յերկնից. այսօր եւ հանգեաւ յառաքեալսըն ճշմարիտ նա Հոգին. Նման: Փառք Հօր: Որ ի խորհուրդըս փրկական նս. այսօր ընդ իջանել յառաքեալսըն ծանուցաւ մարգարէին. Նման ԶԶ:

Կամ ԲՁ. ՍՏ. Որ ի հայրաշարժ ի յաղբերէն. Երես 138. Կամ զոր կամի՝ ասա:

Ճշ. սաղմոս, փոխ եւ աւետ. զնոյն մարգարէին կարդա, որոյ է կիւրակէին յիշատակ է վերանալոյն հրեղէն կառօք յերկին:

Առաջին սաղմոս ՀԶ:

Կց. Զայն ետուն ամպք. քանզի եւ նետք քո գնան ի ձայնէ որոտալոյ քոյ անուի:

Փխ. Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Այ, եւ նայեցաւ առ իս:

Ընթ. Դ Թգր. Բ. 1: Եւ եղեւ ի վերացուցանել Տեառն զԵղիա. Հ. 15: Մրգ. Մաղաք. Դ. 5: ‖ Եւ ահա ես առաք. Հ. 6: Կթղ. Յակ. Ե. 16: Խոստովան եղերուք. Հ. 20:

Ալէլուիա-յարութ. էջմիածն. Դու յարուցեալ. 74:

Աւետար. Ղուկ. Դ. 25: Արդարեւ ասեմ ձեզ. Հ. 30:

---

## ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
### ԳԻՒՏ ՆՇԽԱՐԱՑՆ

Ժամամուտ:

Գրիգոր նը քահանայապետ, որ զհաւատս ուսուցեր, եւ զբանակս դիւացն հալածեցեր. մարդկան ուսուցեր քարոզել զԵրրորդութիւնն. պսակեցար յարքայութեան. արդ բարեխօս լեր առ Տէր վասն մեր:

Շարական Գ.Կ:

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր ըղձայն աղօթ:

Հովիւ քաջ բանաւոր հօտի Տէր սուրբ Գրիգոր. հաստատեցեր զհիմունս եկեղեցւոյ ի Հայաստան երկրի ի վերայ հիման սուրբ առաքելոյն: Հովիւ բարի եւ առաջնորդ կենացըն յաւիտենից Տէր սուրբ Գրիգոր. հաստատեա



զանձինս մեր հաւատով ճշմարտութեամբ ի վերայ հիման սուրբ եկեղեցւոյ: Փառք Հօր: Արդ աղաչեմք ըզքեզ հայր վարդապետ եւ տէր. բարեխօսեա Քրիստոսի Աստուծոյ մերոյ կեցուցանել զանձինս մեր:

Առաջին ողջ. ՃԼԱ: Կց. Քահանայք քո: Փխ. Յիշեա Տէր զԴաւիթ. 93:

Ընթ. Առակ. (Իմաստ.) Դ. 7: Իսկ արդ. Հ. 15: Մրգր. Միք. Ե. 7: Այլ ես Տեառն ակն. Հ. 10: Գործ. Ի. 22: Եւ արդ ահաւասիկ ես. Հ. 32:

Ալէլու:

Դու ես քահանայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի. եւ Տէր ընդ աջմէ քումմէ:

Աւետ. Յովհ. Ժ 11: Ես եմ հովիւն. Հ. 16:

Սրբասացու. Ամենակալ ես Տէր զօրու. 89:

Տաղ՝

Ի յելս արեւու արեւ. կրկնէ. — Ծագեցաւ մեզ յարեւմըտից. — Զամպն արեգական ծածկեալ. կրկնէ. — Պետրոսեան հօտէն հալածեաց:

Օրհորդ մաքուր հարսին. կրկնէ. — Աւետիս տայր փեսաւերին. — Զարթիր զուարթուն անուն. կրկնէ. — Եւ զարթո զթմրեալս՝ ի մեղաց:

Արի որ ննջեաղ ի գբի. կրկնէ. — Լուսաւորեցի քեզ Քրիստոս. — Արեամբդ ոողեա զերկիր. կրկնէ. — Սերմանեա մըշակդ հոգեւոր:

---

## ԾՆՈՒՆԴ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ

Ժամամուտք:

Զյառաջընթացութիւն քո եւ զկարապետութիւն Աստուծոյ Բանին խափանել կարծելով, որ ի ձեռն կնոջն զնախաստեղծն ի դրախտէն արտաքս ընկէց, նա եւ այժմ զՀերովդիադա անօրէնութեամբ բորբոքեալ, եւ բազմելոցն Հերովդեայ՝ զկաքաւս ոտից աղջկանն հաճոյացոյց, զի զքեզ հատցէ զգլուխ, որ զամենեցուն ձեռնադրեցեր զգլուխն զՔն: Այլ դու, որ յանապատէ բարբառոյ ձայն, գոչեա որում ձեռնադրեցեր՝ պարգեւել զխաղաղութի եւ զմեծ զողորմութի:

Ճաշու շարական ԴԿ:

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր. ըզձայն աղ:

Այսօր ցնծայ եկեղեցի ի հոգեւոր հարսանիս. զոր պատրաստեաց ձայն բարբառոյ հարսըն մաքուր փեսային: Այսօր փեսաւերն եւ բարեկամն ընդ երկնաւոր փեսային. միաւորեաց զեկեղեցի փոխադրելով ի յերկինս: Փառք Հօր: Այսօր շնորհեցաւ մեզ դեղ կենաց Նըշխարք սորին ոսկերաց. ի ձեռըն սուրբ Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի:

Առաջին տաղմոս:

Կց. Աստուած փառաւորեալ է ի խորհուրդս սրբոց իւրոց, մեծ եւ ահաւոր ի վերայ



այնոցիկ որ շուրջ են զնովաւ: Փխ. Զողորմութիւնս քո, Տէր, յաւիտեան օրհնեցից. յազգէ յազգ պատմեցից զճշմարտութիւնս քո:

Կոմ՝ Կց. Դու մանուկ, մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր. գնասցես առաջի Տռն՝ պատրաստել զճանապարհս Նորա: Փխ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայէլի, զի յայց ել մեզ. եւ արար փրկութիւն ժողովրդեան իւրում:

Ընթ. Առակ. Ը. 4: Զձեզ աղաչեմ. վ. 11:
Մրգ. Մաղաք. Դ. 5: Եւ ահա ես առաքեմ. վ. 7:
Մրգ. Եսայ. Խ. 3: Ձայն բարբառոյ յան. վ. 5:
Գործ. ԺԳ. 25: Եւ իբրեւ լնոյր Յովհ. վ. 33:

Ալէլու:

Կարապետն Յովհաննէս զարհուրեալ՝ յորովայնէ յորովայն երկիր պագանէր. սպասաւոր եղեւ Բանին Այ. եւ լուեալ զահաւոր զձայնն՝ աղաղակէր ասելով. ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի:

Աւետ. Ղուկ. Ա. 57: Եւ Եղիսաբեթի. վ. 80:

Սրբասացութ. Ամենակալ ես Տէր. Երգ 89:

# ՎԱՐԴԱՎԱՌ

Մեղեդի։

Գոհամր վարդըն վառ առեալ. կրկնէ.
Ի վեհից վարսից արփենից. կրկնէ.
Ի վեր ի վերայ վարսիցն.
Պղնձապըջէր ծաղէկ ծովային. կրկնէ։

Ժամամուտ։

Նորեւի Տէր այսօր աշակերտացն ի Թաբօրական լերինն. եւ աշակերտացն զարհուրեալ աղաղակէին ասելով. արասցուք երիս տաղաւարս, մի Տեառն, եւ մի Մովսէսի, եւ Եղիայի։ Եւ մեք բանաւոր հօտքս երգեմք ընդ քոյ ճշմարիտ վկայիցդ. առաքեա ի մեզ զլոյս քոյ շնորհացդ ի քո միւսանգամ գալստեանդ, եւ կեցո։

Ճաշու շարական Դկ. ՍՏ։

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ։

Ուրախացիր պսակ կուսութեան Տիմրամայր. այսօր Որդին քո զհայրենին իմն փայլեաց զփառս. * Նմա յամմւէժ յանձըն մրահ զամնձինըս մեր։ Նըմա Մովսէս եւ Հեթղեմաս ըսպասեն. յանուն նորա ցընծան Թաբօր եւ Հերմոն. Նըմա յաւ։ Փառք Հօր։ Եսայիան ըզքեզ Թեթեւ ամպ ետես. եւք Հայր յամպոյն քո զՈրդին իւր դաւանեաց. Նըմա յաւ։



Առաջին սաղմոս ԺԴ։

Փխ. Տէր, ով կացցէ ի խորանի քում. կամ ով բնակեսցէ ի լեառն սուրբ քո։

Ո գնայ ամբիծ, գործէ զարդարութիւն. խօսի զճշմարտութիւն ի սրտի իւրում։

ընթ. Առակ. (Իմաստ.) Է. 25։ Քանզի ճաճանչ է. Հ. Ը. 4։ Մրգ. Զատար. ԺԳ. 16։ ‖ Եւ եղիցի որ. Հ. 21։ Կթղ. Ա Յովհ. Ա. 1։ Որ էրն ի սկզբանէ. Հ. 7։

Ալէլու։

Ամպ լուսաւոր հովանի լինէր նոցա. ձայն եղեւ յամպոյն որ ասէ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ։

Աւետարան ըստ Մատթէոսի. ԺԷ. 13։

Եւ եկեալ (Յս) ի կողմանս Փիլիպպ. Կեսր՝ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա։ ԺԷ. 13։

Սրբասացութ. Հրեշտակային. 17. կամ Բազմութիւնք. 18։

Տաղ։

Այսօր ցնծայ լեառըն Թաբօր. — Եւ զուարճանայ մեծն Ահերմոն. — Քանզի լոյսն աստուածային — Այսօր ծագեաց յայն ի լերինն։ — * Այ ցնծայ, ցնծայ, ցնծայ. — Լեառըն Թաբօր եւ զուարճանայ։

———

# ՓՈԽՈՒՄՆ ՍՐԲՈՑ ԿՈՒՍԻՆ

Մեղէդի։

Այսօր գամբրիէլ. հրեշտակապետն եկեալ. բերեալ զբարբառն պսակ յաղթող կուսին։

Այսօր կոչեցեալ առ բոլորիցն Տէր. Ջտաճառ բարձրելոյն. եւ զընակարան Հոգւոյն։

Ժամամուտ ծննդեան. Երգ 9։ Յայս ննօրէ յօրն զմին ... կարգաւ։

Ճաշու շարական ԲՁ։

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ։

Անթառամ ծաղիկ անդաստանապարտ շաւաւիղ. վերաբուսեալ յարմատոյն Յեսսեայ. զքեզ Եսայիաս կանխաւ վերադրեալ եօթնարփեան շնորհաց Հոգւոյն ընդունարան գոլ. Աստուածածին եւ կոյս. զքեզ մեծացուցանեմք։ Համեղաճաշակ պտղոյն բանաւորբանակ. յորմէ կթեցաւ մեզ ողկոյզն անըսպառ յարախնութեան տըրտմեցելոցս ի ճաշակմանէ ծառոյն գիտութեան. սրբուհի անարատ ամենեքեան զքեզ մեծացուցանեմք։ Փառք Հօր։ Քաղաքավարեալ ի մարմնի անաբատելորուք. այսօր յառաքելոցն ամփոփեալ. վերին ակնարկութեամբն վերափոխեցար յարքայու-



թեան Որդւոյ քո եւ Աստուծոյ. բարեխօսեաս խոստովանողացս. զքեզ մեծացուցանեմք։

Առաջին սաղմոս ՃԼԱ։

Կց. Արի Տէր ի հանգիստ քո. դու եւ տապանակ կտակի սրբութեան քո։

Փխ. Յիշեա Տէր զԴաւիթ. եւ զամ հեզութիւն նորա։

Ընթ. Յերգոց Երգ. Գ. 9։ Սրտակալ արարեր զմեզ. Հ. 15. Ես քուն իմ Ը. 20։ Տէր արար զքեզ. Զերծ՝ ծնցի մարմին անտխեղծ։ Մարգ. Եսայ. Է. 10։ Եւ յաւել Տէր խօս. Հ. 16։ Առաք. Գաղատ. Գ. 29։ Ապա թէ դուք. Հ. Դ. 7։

Ալէլու։

Այսօր ծնաւ որ ի Հօրէ. ըստ Երգ. 167։ Կամ. Ուրախ լեր բերկրեալդ, Տր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո։

Աւետ. Ղուկ. Բ. 1։ Եւ եղեւ ընդ աւ. Հ. 7։

Սրբասացութիւն. Բազմութիւնք հրեշտ. 18։

Տաղ։

Այսօր հրաւիրմամբ Հոգւոյն ժողովեցան. Դասք առաքելոցն. եւ իմաստունն կուսից։

Այսօր խոնարհեալ անմարմնական դասուք Միածին Որդին առ կուսութեանցըն մայրն։

Այսօր աւանդեալ ըզմաքրական հոգին փայլակնանըման՝ վերամբարձեալ վեհից։

Այսօր փոխադրեալ է զգայական բնութեց զմարմինըն մաքուր՝ յիմանալեաց կայեանսն:

Այսօր երգս առեալ՝ գոչեմք եւ մեք ձայնիւ՝ կուսական տօնիւս՝ Երրորդութեն ըզփառս:

---

Կանոն օրհնութեան խաղողոյ:

Զկնի արձակման պատարագին բերեն զխաղողն յեկեղեցին, եւ քահանան ամանով է վեր. եւ ասեն

Շարական ԱԿ:

Փառք սուրբ խաչին. ալէլուիա. սուրբ Սիոնին. ալէլուիա. սուրբ յարութեանն. ալէլուիա:

Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ ետուր ուրախութի սրտից մերոց: Ի պտղոյ ցորենոյ գինւոյ եւ ձիթոյ իւրեանց. լցուցեր զնոսա:

Փառք սուրբ խաչին. որպէս է վերոյ:

Փառք եւ երկրպագութիւն Հօր եւ Որդւոյ. եւ սուրբ Հոգւոյն: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Փառք սուրբ խաչին. որպէս է վերոյ:

Եւ ընթեռնուն զընթերցուածս:

Ընթերցուածս յԱռակաց. Գ. 9:

Պատուեա զՏր ի քոց արդար վաստակոց. եւ հան նմա պտուղ ի քոց արդարութե արմտեաց: Զի լցցին շտեմարանք քո լիութբ ցորենոյ. եւ գինեաւ հնձանք քո առաւել եւս բղխեսցեն: 10:



Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ: ԿԲ: 8:

Երդուաւ Տր ի փառս իւր եւ ի զօրութի բազկի իւրոյ, եթէ ոչ տաց զցորեան քո եւ զկերակուր ի ձեռս թշնամեաց քոց: Եւ ոչ արբցեն որդիք օտարաց զգինի քո յորում դուն վաստակեցեր: Այլ որ ամփոփեցինն՝ կերիցեն զնա եւ օրհնեսցեն զՏր. եւ որ ժողովեցինն զնա՝ արբցեն ի սրահս սրբութեց իմոց: 9:

Պօղոսի առաքելոյն յԵբրայեցւոց թղթոյն է ընթերցուածս: Զ. 18:

Որք ապաւինեալ եղեաք բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն. զոր իբրեւ զխարիսխ հաստատուն եւ անշարժ ունիցիմք անձանց մերոց. որ եւ մտանիցէ ի ներքին կողմն վարագուրին, ուր կարապետն մեր Յն եմուտ վն մեր՝ ըստ կարգին Մելքիսեդեկի, եղեւ քահանայապետ յաւիտենից: Քանզի այս Մելքիսեդեկ՝ թագաւոր էր Սաղիմայ. քահանայ ԱՅ բարձրելոյ. որ եւ ընդառաջ Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ թագաւորացն՝ եւ օրհնեաց զնա. ուրում եւ տասանորդս յամէ ետ Աբրահամ. Նախ՝ թարգմանի թագաւոր արդարութե, ապա թագաւոր Սաղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութե. անհայր անմայր՝ չհամարեալ յազգս. նմանեալ որդւոյն ԱՅ՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր: Արդ՝ տեսէք որպիսի ոք էր սա. որում եւ Աբրահամ տասանորդս ետ յաւարէ անտի նա-

հապետն։ Եւ ողք յորդւոցն Ղեւեայ զքահանայ-
ութիւն առնուն՝ պատուէր ունին տասանորդել
զժողովուրդն՝ ըստ օրինացն. այսինքն է՝ զեղբարս
իւրեանց. թէպէտ եւ ելեալ իցեն յերանացն
Աբրահամու։ Իսկ չհամարեալն յազգս ի Նոցանէ՝
տասանորդեաց զԱբրահամ. եւ զնա որոյ զաւե-
տիսն ընկալեալ էր՝ օրհնեաց։ Զի առանց ամ
հակառակութեան նուազն ի լաւէ անտի օրհ-
նեսցի։ Է. 7։

Ալէլու։

Կց. Երկիր ետ զպտուղ իւր. եւ օրհնեաց
զմեզ Աստուած Աստուած մեր։

Փխ. Ած ողորմեա մեզ եւ օրհնեա զմեզ.
երեւեցո զերեսս քո ի մեզ եւ ողորմեա մեզ։

Աւետարան ըստ Յովհաննու. ԺԵ. 1։

† Տէրն մեր Յս Քս ասէ։

Ես եմ որթն ճշմ. վերջ՝ իմ աշակերտք։ 8։

Եւ սարկաւագն քարոզէ։

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Գոհացարուք զբարերարէն Աստուծոյ յա-
ղագս պարգեւելոյ մեզ առատապէս զպտղաբե-
րութիւն բուսոց եւ տնկոց արարածոց իւրոց։ Ա-
ղաչեսցուք եւ վասն երախայրեացս առաջի ե-
դեալ ողկուզաց խաղողոյս. որպէս զի օրհնու-
թեամբն որով օրհնեաց զարարածս իւր՝ շնոր-
հեսցէ զսա մեզ ի կերակուր եւ յարբումն ու-



րախութեան եւ յառողջութիւն հոգւոյ եւ մար-
մնոյ՝ ի ձեռն միածնի Որդւոյ իւրոյ, եւ կենդա-
նարար խաչի եւ թաղման եւ յարութեան Նորա։
Բարեխօսութբ սրբուհւոյ Ածածնին, ուստի տուաւ
մեզ պտուղ կենաց եւ անմահութն Յն Քն։ Տէրն
ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի։

Եւ ասեն երեքտասան Տէր ողորմեա։

Եւ ապա ասէ քահանայն զԱղօթս օրհնութեան խաղողոյ,
ասացեալ Սրբոյն Ներսէսի Հայրապետին։

Տր Աստուած Հայր անսկիզբն, անեղ եւ անմահ։

Խաղաղութիւն † ամենեցուն։

Օրհնեալ ես Որդի եւ Բան Հօր, Ճառագայթ։

Եւ յաւարտելն՝ երիցս անգամ տեառնագրէ զող-
կոյզն սուրբ խաչիւն եւ ապա բաշխէ ամենեցուն։

(Քրզ. Սբ խաչիւս։ Աղ. Պահպան։ Հայր մեր։)

---

## ԾՆՈՒՆԴ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Ժամամուտ։

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մար. երգ. 9։

Ճաշու շարական Գ.Կ։

Փխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ։

Ծառ կենաց տնկեալ յԱդին սուրբ կոյս.
որ ըզհայրածինն բըղխեցեր զծաղիկ. եւ ե-
տուր ի ժամու զՈրդին պըտուղ մարդկան. զո-
րոյ զմարմինն ճաշակեալ անմահացաք յուսով.

* վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քոյ ծնընդեան: Բանաւոր երկիր տիրուհի եւ անդաստան մաքուր ի փշոց մեղաց. որ ըզբողբոջն երկնային առանց սերման ծընար. որով զկենացն ետուր ըզհաց սովեալ բնութեանս. վասն որոյ օրհնաբանեմք ըզքեզ յաւուր քոյ ծնընդեան:

Փառք Հօր: Ամպ թեթեւ յերկրային ցանկութեանց սուրբ կոյս. եւ վառարան աստուածային բոցոյն. որ ըզցօղն հայրաբուխ անձրեւեցեր ի բանական երկիր. որով բնութիւն բուսան արդարութեան սուրբ բոյսք. վասն որոյ օրհն:

Առաջին սաղմոս:

Կց. Զի հայեցաւ ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. ահա յայսմ հետէ երանեսցեն ինձ ամ ազգք:

Փխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծացաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ:

Ընթ. Առակ. ԼԱ. 29: Բազում դստ. մ. 31: Մրգ. Եսայ. ԿԱ. 9: ‖ Եւ ծանիցի ի մէջ. մ. 9: Առ Գաղատ. Գ. 24: Այլ օրէնքն դաստ. մ. 29:

Ալէլու:

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո:

Աւետ. Ղուկ. Ա. 39: Յարուցեալ Մարիամ. մինչ՝ դարձաւ ի տուն իւր: 56:

Սրբասացութիւն. Բազմութիւնք. երես 18:

---

# ԽԱՉՎԵՐԱՑ

Մեղեդի:

Ա. Այսօր ի ձեռըն խաչին. — Եւ պատուական նըշանին. — Տաճարք պատուի Ցնի. — Ազատողին համայնից:

Բ. Ներբողեան: Խաչն ի նախնոյ նմանութեան երեւեցաւ. — Ծաղկեալ ի դրախտն աստուածատունկ. — Մըխիթարիչ եղեալ Սեթայ. — Նախագուշակ հօրն Ադամայ. — Մեք ի յայն փայտն եմք յուսացեալ. — Յոր Տէր Յիսուս բեւեռեցաւ. — Եւ խոնարհեալ երկրպագեմք. — Աստուածընկալ սուրբ նըշանին:

Գ. Վերջացման: Այս ձայն զարթուցիչ ասեմ. կրկնե. որ գոչէր ի քառաթեւին. — Ի քառաթեւին գոչէր. կրկնե. ձայն առնէր ի սանդարամետն:

Ժամամուտ. Առաջի պատուական. եր. 10:

Ձայն ղարական ԳԿ:

Փոխ. Տէր թագաւորեաց. վայելչութիւն:

Յաղթող եւ զնոր օրհնութիւ միշտ ի բարձունս երգեսցուք. թագաւորին Քրիստոսի. հաւատացեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի. եւ պս-

կեաց նը. խաչին. Նորմա ըզփառս երգեսցուք։ Փառք Հօր։ Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. եւ միր̃ ըրկողէն մատուսցուք. փառք եւ պատիւ յաւիտեան։

Առաջին տաղմոս Դ։

Կց. Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. եւ ետուր ուրախութիւն սրտից մերոց։

Փխ. Ի կարդալ իմում լուար ինձ Աճ. ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ եւ լուր աղօթից իմոց։

Ընթ. Մրգր. Եսայ. ԽԹ. 13։ Ուրախ լերուք երկինք, եւ ցնծասցէ երկիր. մ. 23։

Առաք. Գաղատ. Զ. 14։ Այլ ինձ քաւ լիցի պարծել. մինչ՝ եղբարք. ամէն։ 18։

Ալէլու։

Տուր զօրութիւն ծառայի քոյ. կեցո զորդի աղախնոյ քոյ. եւ արա առ իս նշան բարութե։

Աւետարան ըստ Յովհաննու. Գ. 13։

† Տէրն մեր Յն Քն ասէ.

Եթէ ոչ ոք ել յերկինս. մինչ՝ թէ Աստուծով գործեցան. 21։

Սրբասացութիւն. Ո՞վ է որպէս. երգս 81։

Տաղ.

Նոր դրախտին եկեղեցւոյ — Ծառ կենաց տընկեալ ի մէջ. — Զոր ոչ քրովբէիւք պահեալ, — Այլ դիւրահնար ի մէնջ։



Սաբեկայ ծառոյն նըման, — Ոչ խոյ յողջակէզ կալեալ. — Այլ գառն Աստուծոյ զենեալ՝ — Մեզ հաշտութեան նուէր։

Ի Գողգոթա կանգնեալ սանդուղք, — Տեսլեամբ Յակոբայ ցուցեալ. — Հրեշտակաց իջման յերկիր, — Մարդկան ելից յերկինս։

---

# ԸՆԾԱՅՈՒՄՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Ժամամուտ։

Աստուածածին զքեզ խոստովանեալ. Եր. 9։

Ճշ. Շարական զԾննդեանն տօն. ԳԿ։

Ծառ կենաց տնկեալ յԱդին. Երգ. 153։

Առաջին տաղմոս ԿԷ։

Կց. Տէր տացէ զբան՝ ոյք աւետարանեն զօրութեամբ բազմաւ։

Փխ. Յարիցէ Աստուած, եւ ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

Ընթ. Երգ. Ա. 1։ Համբուրեսցէ զիս մ. 11։
Առակ. ԺԱ. 30։ Ի պտղոյ արդարոյ. մ. ԺԲ. 4։
Մրգ. Եսայ. ԾԲ. 7։ ‖ Իբրեւ զի գեղեցիկ. մ. 10։
Մրգ. Զաքար. Բ. 10։ Խնդա եւ ուրախ. մ. 13։
Մրգ. Մաղաք. Գ. 1։ ‖ Ահա ես առաքեմ. մ. 2։
Առաք. Բ Կորնթ. Զ. 16։ Ապաքէն դուք տաճար Աստուծոյ. մ. Է. 1։

Ալէլու։

Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. եւ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո։

Աւետ. Ղուկ. Ա. 39։ Յարուցեալ Մարիամ. Հ. 56։

Սրբասացութեան. Բազմութիւնք. երգ 18։

---

## ԱՆԱՐԱՏ
## ՅՂՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԿՈՒՍԻՆ

Ժամամուտ։

Աղաչեմք զքեզ սուրբ կոյս Մար. երգ. 9։

Ճշ. շարական. ԳԿ։

Նուագ կենաց տնկեալ յԱդին. երգ 153։

Ճաշու սաղմոս ԿԷ։

Կց. Տէր տացէ զբան՝ որք աւետարանեն զօրութեամբ բազմաւ։

Փխ. Յարիցէ Աստուած, ցրուեսցին ամ թշնամիք նորա. փախիցեն ատելիք նորա յերեսաց նորա։

Ընթ. Եսայ. Զ. 3։ Գնացի եւ մերձ. Հ. 8։
Մրգ. Մղք. Գ. 1։ ‖ Ահա ես առաքեմ առ Հ. 2։
Առք. Գաղ. Գ. 24։ Ապա օրէնքն դաստ. Հ. 29։

Ալէլու։

Ուրախ լեր բերկրեալդ, Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս. եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո։



Աւետ. Ղուկ. Ա. 39։ Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ. Հ. 56։

Սրբասացութ. Բազմութիւնք հրեշտ. եր. 18։

---

## ՅԱԿՈԲԱՅ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ
## ԵՒ ՄԱՐՈՒԳԷԻ ՃԳՆԱՒՈՐԻՆ

Ժամամուտ։

Զհայրապետականն զարդարեցեր. եր. 91։

Ճաշու շարական ԳԿ։

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր. ըզձայն աղ։

Որ յանապատէ կոչեցար յառաքելական աթոռ բանիւ սուրբ Յակոբ. բարձրացուցեր զեղջիւր Սիոնի ճշմարտութեամբ. մասամբ նոյեան տապանին։ Որ արդարութեամբ եւ լուսով քո փայլման նոր արեգական. պայծառ քան զարփին վառեալ զօրութեամբ. յաւնել ի հրաշ պատանւոյն։ Որ միացար սրբութեամբ ի լոյսն մաքուր որպէս զանմարմին. զարմացուցեր ըզզօրըս վերինս. հիացուցեր զարարածս։ Փառք Հօր։ Արդ աղաչեմք ըզքեզ հայրըդ գըթած եւ հովիւ բարի. մաղթանօք հայցեա առ Տէր վասն եկեղեցւոյ. միշտ անշարժ պահել յախտեան։

Առաջին աղմ. ՃԼԱ։ Կց. Քահանայք քո։

Փխ. Յիշեա Տէր զԴաւիթ. երգ 93։

Ընթ. Առակ. (Իմաստ.) Է. 12։ Ուրախ եղէ. Վ. 21։ Մրգ. Ես. ԽԴ. 1։ Բայց արդ լուր Յակոբ. Վ. 5։ Առք. Եբրայ. ԺԳ.։ 17։ Ունկնդիր լերուք. Վ. 21։

Ալէլու։ Քահանայք քո զգեցցին. Սղմ. 93։ Աւետ. Յովհ. Թ. 39։ Եւ ասէ Յս. Վ. Ժ. 10։

Սրբասացութիւն. Ամենակալ ես. Սղմ. 89։

---

## ՃՐԱԳԱԼՈՅՑ ԾՆՆԴԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Յերեկոյին յաւուր ընթերցուածոցն մտանեն յեկեղեցին. եւ կարգաւ զԴանիէլն ի բեմն։

Ընթերցուած ի Դանիէլէ մարգարէէ. Գ. 1։

Յամին ութուտասներորդի Նաբուքոդոն։

Յընթեռնուլն զՀարցն առաջնոյ յածեն փոխ խառնել ածեն։ Եւ երբ զՕրհնեցէք ամ գործքն ասեն, դպիրք պաշտօնէիցն որ առընթեր կան եւ դպիրքն՝ յամենայն տան եղանակէն ձայնս յայնժամ՝

Օրհնեցէք. գովեցէք. եւ բարձր արարէք ընդ յաւիտեան։

Եւ ի կատարման Հարցն առաջնոյն՝ զի յաւիտեան է ողորմ նորա. սարկաւագն գոչէ բարձր ձայնիւ. Օրհնեալ տէր։

Ժամարարն. Օրհնեալ թագաւորութիւնն։

Եւ ասէ ժամամուտ. Անծածին ամեն. Սղմ. 9։



Ձայն շարականն ԳՁ։

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ։

Զանճառելի լուսոյ մայր. եւ զզընակարան անըսկզբնակից Որդւոյն. * օրհնութեամբ մեծացուցանեմք։ Զանհաս տնօրէնութեան մայր. եւ զանձնաւոր տաճար Այ Բանին. օրհնու։ Փառք Հօր։ Զբոլորից վերկացեալ մայր. որ զանտանելին էիցն ի յարգանդի եբարձ. ընդ ամենեքեան օրհնու։

Առաջին սաղմոս Բ։

Կց. Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ։

Փխ. Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի սնոտիս։

Ընթերց. առաք. Տիտ. Բ. 11։ Քանզի երեւեցաւ շնորհն. Վերջ՝ արհամարհիցէ։ 15։

Ալէլու։

Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի։

Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ։

Աւետարան ըստ Մատթէոսի. Ա. 18։

† Տռն մերոյ Յսի Քսի ծնունդն էր այսպէս։ Խօսեալ զմայր. Վերջ՝ զանուն նորա Յս։ 25։

Սրբասացութիւն. Բազմութիւնք հրեշտ. Եր. 18։

Նախատօնակ Ծննդեան Տեառն:

Զկնի օրհնութեան պատարագին (յետ Պահպանեա զօրհնեալս՝ տան մոմեղէն ի ձեռս ամենեցուն:

Քհն. Օրհնեալ Տէր մեր ✝ Յս Քս. ամէն:

Սրկ. Եւ ևս խաղաղ: Քհն. Օրհնութի եւ:

Եւ օրհնութեան խունկ տայ:) Եւ սկսանին

Շարական ԴԿ:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատեցաւ. ոչ մեկնելով ի Հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ:

✝ Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք. եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան: Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ. եւ հրեղինաց բազմութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ: Այսօր հովուացըն տեսեալ զարդարութեան արեգակն. եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:

✝ Ի Հօրէ ծագեցար լուսաւորել զարարածս. արդարութեան արեգակն Տէր փառք քեզ:



Ծնար ի յայրին ընծայեցար Բեթղեհէմ. * արդարութեան արեգակն Տէր փառք քեզ: Հովուաց յայտնեցար երկրպագեալդ ի մոգուց. արդարու: Եւ մեք երգեսցուք որ ի կուսէն մարմնացար. արդարու:

Սրկ. Եւ ևս խաղաղ. Քհն. Օրհնութի եւ:

(Եւ է սկսանել Հայրցն իջանէ առաջերէցն յեկեղեցին, եւ խնկէ զխորանօքն եւ զժողովրդեանն.)

Հարց ԳՁ. ի-ր տուրն:

Ընդսկիզբն էակից Բանդ Հօր, որ էիր յառաջ քան զյաւիտեանս. եւ եկիր ի փրկութիւն ըստեղծուածոց քոց. * ընդ քեզ օրհնեմք Աստուած հարցըն մերոց: Ծնար ի կուսէ անճառ միութի. անբաժանելի եւ միշտ գոլով ոչ մեկնեցար ի հայրական ծոցոյ. ընդ քեզ օրհն: Ցընծութեամբ տօնեսցուք ըզծընունդ քո սուրբ. որ յայտնեցար մեզ լոյս ի լուսոյ. եւ լուսովդ քո լցեր ըզտիեզերս. ընդ քեզ օրհն:

ԳՁ. Օրհնեցէք ամենայն գործք Տեառն ըզՏէր օրհնեցէք. * եւ բարձր արարէք ըզնա յաւիտեան: Ըզծընեալն ի սրբոյ կուսէն օրհնեցէք. եւ բարձր: Զանճառելի ըզծընունդ փրկչին գովեցէք. եւ առաւել բարձր:

Մեծ. Ուրախ լեր Աստուածածին յոյս եւ փրկութեան մայր. ընդ քեզ ընդունող լուսոյ մեծացուցանեմք։ Ընդ քեզ լուսոյ մայր եւ կոյս. ընդ քեզ գանձդ կենաց աստուածային. ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք։ Մայր սուրբ անարատ լուսոյն. հրեշտակային օրհնութեամբ պատուեալ ընդ քեզ մեծացուցանեմք։

Ող. Ամենիմաստ ամենից Հայր. բազմագեղ խնամող ստեղծող եւ Տէր բոլորից. անեղ եւ էից էակ. զոր միշտ օրհնեն դասք անմարմնականացն յաւէժաբար հնչմամբ։ Որ կերպարան եւ կնիք Հօր. առեալ վասն մեր ծառայի կերպ ի կուսէն. որ էն ի յաթոռ փառաց անհաս վերնոցն. ի յայրին իջեանի եւ ի մսուր յանբանից բազմեալ։ Զի կուսէն մարմնացեալ Բանն եկայք ժողովուրդք ընդ հովիւսն բարեբանեսցուք եւ ընդ մոգուցն երկրպագեսցուք. ընդ երկնային զօրսն երգեսցուք փառք ի բարձունս Աստուծոյ։

Տղ. Ճառագայթ եւ կերպարան էութեան Հօր Բանդ Աստուած. * Ընդ քեզ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ։ Որ միացար ի մարմնի անճառապէս Ճշմարիտ Աստուած. ընդ քեզ։ Որ զանիծիցն բարձեր ընդդատապարտութիւն Քրիստոս Աստուած. ընդ-



քեզ բարեբանեմք ասելով փառք ի բարձունս Աստուծոյ։

Ձղ. Սէ զԱծածինն. օրհնութեամբ մեծացուցանեմք։ փառք Հօր եւ։ Ամենատեսող հրեշտակն աւետարանէր. ընդ ծնեալ փրկիչն ի սրբոյ կուսէն։ Այժմ եւ միշտ։ Ամենուրախ լեր բերկրեալդ. քանզի Տէր տերանց է ընդ քեզ։

Զնէ Որթիւ։

Աւետարան ըստ Ղուկասու. Բ. 8։

✝ Վասն ծննդեան Տեառն մերոյ Յսի Քսի։

Եւ հովիւք էին ի տեղւոջն. մինչ՝ որպէս պատմեցաւ նոցա։ 20։

Քարոզ։

Սրք. Սէ զԱծածինն եւ զամ նս բարեխօս արասցուք առ Հայր յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի, եւ գթացեալ կեցուսցէ զարարածս իւր։ Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո եւ ողորմեա։

Դպ. Յոյնէ. կեցո Տէր։ Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Աղօթք։

Քհն. Ընկալ, Տէր, զաղաչանս մեր բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, անարատ ծնողի միածնի Որդւոյ քոյ, եւ աղաչանօք ամենայն սրբոց քոց։ Լուր մեզ Տէր եւ ողորմեա. Ներեա, քաւեա եւ թող զմեղս մեր։ Արժանաւորեա

գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ եւ ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Դպ. Յոյնն. Օրհնեցից զՏէր յամ ժամ:

Քհն. Օրհնեալ եղերուք ի շնորհաց:

Եւ արձակին:

—

Բայց ոմանք զաւետարանն ի սեղանի կարդան: Երբեմն խաչիւ եւ աւետարանաւ, խնկօք եւ մոմեղէնօք եւ ամենայն զարդուք ի սեղանն, առնլով դարձեալ՝

Շարական Դկ. Խորհուրդ մեծ. երես 162:

Աւետ. Ղուկ. Եւ հովիւք էին ի տեղւոջն:

Քրզ. Սուրբ խաչիւս: Աղօթ. Պահպանեա:

Հայր մեր որ յերկինս:

Եւ յընթրիս բաղձին: Բայց յայսմ երեկոյի ասելն օրհնելոյ կանոն չկայ:

———

# ԾՆՈՒՆԴ
## ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

*ի դեկտեմբերի իե:*

—

Մեղեդի:

Նոր ծաղիկ այսօր բղխեաց յարմատոյն Յեսսեայ. — Եւ դուստր Դաւթի ծնանի զՈրդին Աստուծոյ:

Ժամամուտ. Անծածին զքեզ խոստ. երես 9:



Ճաշու շարական Գ.Զ:

Փոխ. Մեծացուցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ:

Սուրբ զԱստուած ծածին. օրհնութեամբ մեծացուցանեմք: Անմատոյց հրեշտակն աւետարանէր. ընծայնեալ փրկիչն ի սրբոյ կուսէն: Փառք Հօր: Այսէ ուրախ լեր բերկրեալդ քանզի Տէր տերանց է ընդ քեզ:

Առաջին սաղմոս Բ:

Կց. Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. եւ ես այսօր ծնայ զքեզ:

Փխ. Ընդէր խռովեցան հեթանոսք. եւ ժողովուրդք խորհեցան ի նոտիս:

Ընթերց. առակ. Տիտ. Բ. 11: Քանզի երեւեցաւ շնորհն. Վերջ՝ արհամարհիցէ: 15:

Ալէլու:

Այսօր ծնաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս Որդի, որ է օծեալ Տէր՝ ի քաղաքի Դաւթի: Ի վայելչութիւն սրբոց քոց յարգանդէ յառաջ քան զարուսեակ ծնայ զքեզ:

Աւետարան ըստ Ղուկասու. Բ. 1:

† Վասն ծննդեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման. Վերջ՝ ոչ գոյր նոցա տեղի յիջեվանին: 7:

Սրբասացութիւն. Բազմութիւնք հրեշտ. 18:

Տաղ։

Տունկ անմահութեան՝ բողբոջեցար դու կոյս.
Ծաղկաբար ծնար զանմահ պտուղն Յիսուս։
Եդեմ շնչական՝ կենաց պտուղ դու կոյս.
Ի քէն ծագեցաւ Նոր արեգակն Յիսուս։
Աներղին տաճար եւ առագաստ սուրբ կոյս.
Հինաւուրցն ի քէն Նոր մարմնացաւ Յիսուս։

———

## ՍՏԵՓԱՆՈՍԻ ՆԱԽԱՎԿԱՅԻՆ

Ժամամուտ։

Ա. Յնծա այսօր ցնծա եւ զուարճացիր կաթուղիկէ սուրբ՝ յիշատակաւ սրբոյն Ստեփանոսի նախավկային Քրիստոսի՝ վկայեցելոյ Հօր. որ աղօթիւք բանայր զերկինս, զոր փակեաց Ադամ. եւ հրեշտակակերպ տեսլեամբ տեսանէր զկերպարանն Հօր ի կերպի Ադամայ՝ նստեալ յաթոռ փառաց։ Որ զբազմութիւն քարանցն որպէս ըզծաղիկս հաւաքելով՝ բոլորէր պսակս փոխանակ փշոցն եւ եղեգանն. եւ զմարտիրոսական արիւնն խառնէր ընդ փրկական արեանն Քրիստոսի հոսեցելոյն ի կողէն։ Վասն որոյ գերազանցեալ ի փառս առաւել քան զամենայն սուրբս՝ հայցեա եւ մեզ ի վերնատուողէն՝ զպարգեւս կենաց անվախճանից եւ զմեծ զողորմութիւն։

Բ. Յորովայնէ ընտրեալ սուրբ Ստեփանոս, յորովայնէ ընտրեալ սուրբ Ստեփանոս, վկայ



ճշմարիտ առաքելական քարոզութեանցն. որ ի վերայ անօրէն քարաձգողացն աղօթէիր առ Քն Ած՝ մի համարիր սոցա զայս ի մեղս։ Ի ձեռն սորին բարեխօսութն շնորհեա մեզ զմեծ քո զողորմութ։

Ճաշու շարական Դկ։

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր. ըզձայն աղօթ։

Յընծայ այսօր եկեղեցի Աստուծոյ. զքո վայելչապէս տօնէ զյիշատակս. * Ո՜վ սուրբ Ստեփանոս. մեծ եւ պատուական անուանիդ ի վըկայս. աղաչեա զԱստուած շնորհել մեզ ըզկեանս անվախճանս։ Նախաշաւիղ բարեաց ամենայն աշխարհի. եւ լուսազարդ ճանապարհացն եղեր ժառանգորդ. ո՜վ սուրբ Ստեփ։ Փառք Հօր։ Աստուածային զինու վառեցար սուրբ Հոգւոյն. տեսանելով յերկինս հայրենի փառօք զՈրդին Աստուծոյ. ո՜վ սուրբ Ստեփ։

Առաջին սաղմոս. Ե։

Կց. Տէր, որպէս զինու՝ հաճութեամբ քով պսակեսցես զմեզ։

Փխ. Բանից իմոց ունկն դիր Տէր. եւ ի միտ առ զաղաղակ իմ։

Ընթերց. Գործ. Զ. 7։ Ստեփանոս՝ այր լի շնորհօք եւ զօրութեամբ. Վ. Ը. 2։

Ալէլու։

Հոգւով սրբով զօրացեալ սուրբ Ստեփանոս, եւ ընտրեալ յորովայնէ. ճշմարիտ վկայ,

սիրող եւ առաքեալ Առաքելոյն. ի Քրիստոսէ ընկալեր զուարթնոյն զպսակն։

Ա–ետ. Ց–հ. ԺԲ. 24։ Ամէն ամէն աս. Հ. 26։

---

## ԳԼԽ. ԱՌԱՔԵԼՈՑՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ՊՕՂՈՍԻ

Ժամամուտ. Առաքեալք եւ վկայք. 88։

Ճաշու շարական շարուր Ողորմեայ ասա. ԴՁ.

Փոխ. Սիրեցի զի լուիցէ Տէր. ըզձայն աղօթ։

Ամոլք հաւատոյ այսօր փայլեն համր սուրբ ի քո սուրբ եկեղեցւոյ. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա։ Բարեխօսութեամբ Պետրոսի եւ Պօղոսի քո սուրբ առաքելոցն. մարդասէր փրկիչ տօնողացս ողորմեա։ Փառք Հօր։ Լուսաւորեալք ի սոցա դպրութենէս փառաւորեմք սուրբ զԵրրորդութիւնդ. երկաքանչիւրոցն աղօթիւք տօնողացս ողորմեա։

ԸնԲ. Առակ. (Իմաստ.) Թ. 13։ (Տէր,) ընդ քեզ եւ իմաստութիւն. Հ. Ժ. 2։ Մրգ. Եսայ. ԻԸ. 16։ Վսն այսպէս ասէ. Հ. 19։ ԿԲղ. Բ Պետր. Ա. 12։ Որով պատրաստ. Հ. 19։ Ա–ւ. Բ Տիմոթ. Դ. 1։ Զայս վկայութիւն. Հ. 8։

Ալէլու. Կացուսցես զնոսա. 89։

Ա–ետ. Ց–հ. ԻԱ. 15։ Եւ իբրեւ ճաշ. Հ. 19։

Սրբասացութիւն. Ամենակալ ես. Երես 89։

---

## ՏՕՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆՈՒԱՆ

### ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

Ժամամուտ. Աղաչեմք զքեզ. Երես. 9։

Ճաշու շարական ԴԿ։

Փոխ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. եւ ցնծ։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ. * յայսմհետէ մինչեւ յաւիտեան։ Եւ եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմ։ Փառք Հօր։ Փառաւորեալ անուն Տեառն օրհնեալ. յայսմ։

Առաջին աղօթ ՃԺԲ։

Կց. Եղիցի անուն Տեառն օրհնեալ. յայսմ հետէ մինչեւ յաւիտեան։

Փխ. Օրհնեցէք մանկունք զՏէր. եւ օրհնեցէք զանուն Տեառն։

ԸնԲ. առ. Փիլ. Բ. 5։ Զայն խորհեսցի. Հ. 11։

Ալէլու։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յաւիտեան. զի յառաջ քան զարեւ է անուն Նորա։

Ա–ետ. Ղուկ. Բ. 21։ Եւ իբրեւ լցան. Հ. 21։

Սրբասացութիւն. Բազմութիւնք. 18։

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ, ՀԱՐՍԱՆԵԱՑ, ԵՒ ԱՅԼՆ.

ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ.
Դրոշմ.

ԿԱՆՈՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ.
Նշան օրհնելոյ.
Հալաւ օրհնելոյ.
Կուսի պսակի.
Պսակ վերացուցանելոյ.

ԿԱՆՈՆ ԹԱՂՄԱՆ.
Տան կարգն.
Եկեղեցւոյ կարգն.
Գերեզմանի կարգն.

ԿԱՆՈՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՏԱՆ.
Ի տօնի Յայտնութեան.
Ի տօնի Զատկին:

# ԿԱՆՈՆ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Յորժամ տղայն ութօրեայ լինի՝ առնու քահանայն զե-րախայն եւ զկնքահայրն, կամ տայ բերել ի դուռն ի գաւիթն եկեղեցւոյն: Եւ այս կարգ կատարի:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր: Եւ հարցանէ քահանայն. Զի՞նչ խնդրես յեկեղեցւոյն Աստուծոյ:

Կնքահայրն*. Զհաւատ:

Քահանայն. Հաւատն զի՞նչ շնորհէ քեզ:

Կնքահայրն. Զկեանս յաւիտենականս:

Քահանայն. Արդ՝ եթէ կամիս ի կեանս մտանել՝ պահեա զպատուիր. Եւ այլն:

Աղօթք:

Տէր Աստուած մեր, Աստուած բարերար որ զվրիպեալս եւ զհեռացեալս ի քէն, Եւ այլն:

Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Աստուած՝ ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեն քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ: եւ ի մեղաց իմոց սուրբ արա զիս:

---

* Եթէ սարկաւագ ոչ գուցէ՝ դպիրն ասասցէ զքարոզն. նոյնպէս եւ զպատասխանիսն փոխանակ կնքահօրն:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ. եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Քեզ միայն մեղայ Տէր. եւ չար առաջի քո արարի։

Որպէս արդար եղիցես ի բանս քո. եւ յաղթող ի դատել քեզ։

Անօրէնութբ̃ յղացաւ. եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր. զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ։

Ցօղեա յիս մշտկաւ, եւ սուրբ եղէց. լուա, եւ քան զձիւն սպիտակ եղէց։

Լսելի արա ինձ Տէր զցնծուի̃ եւ զուրախութի̃. եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. եւ զա̃մ անօրէնութիւնս իմ քաւեա յինէն։

Սիրտ սուրբ հաստեա յիս Աստուած. եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։

Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց. եւ զՀոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն։

Տուր ինձ զցնծութիւն փրկութեան, եւ հոգւով պետութեան քո հաստատեա զիս։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. եւ ամպարիշտք առ քեզ դարձցին։

Փրկեա զիս յարենէ Ա̃ծ, Ա̃ծ փրկութե̃ իմոյ. եւ ցնծասցէ լեզու իմ յարդարութե̃ քում։



Տէր եթէ զշրթունս իմ բանաս. բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո։

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։

Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ՝ Ա̃ծ ոչ արհամարհէ։

Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի. եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի։

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս։

Քարոզ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք։

Վասն տղայիս աղաչեսցուք զմարդասէրն Աստուած՝ զի ողորմեսցի ըստ մեծի ողորմութե̃ իւրում, եւ արժանաւորեսցէ զսա լուացման վերըստին ծննդեան, եւ զգեստու անապականութեան. եւ զուգաթուեսցէ զսա ընդ հաւատացեալս անուան իւրոյ սրբոյ. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութե̃ իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

Ժղ̃. Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Տէր ողորմեա։

Աղօթ̃.։

Ընկալ, մարդասէր Տ̃ր, զընծայեալս քեզ։

Քարոզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք՝

Վասն քաւութեան մեղաց եւ թողութեան յանցանաց, եւ իջանելոյ ի վերայ երեւայիս ողորմութե՛ եւ գթութե՛ Տեառն Աստուծոյ ամենակալին: Կեցուսցէ եւ ողորմեսցի:

Քհն. Տէր ողորմեա. Տր̃ ողորմ. Տր̃ ողորմ:

Աղօթք:

Տր̃ Աստուած, մեծ եւ փառաւորեալ յամենայն արարածոց. Եւայլն:

Աստ հրամայէ քահանայն կնքահօրն դառնալ դէպ յարեւմուտս, եւ հարցանէ զնա յանուանէ տղայոյն ասելով.

Քհն. Ա՛յս անուն, հրաժարիս ի սատանայէ:
Կնք. Հրաժարիմ:

Քհն. Եւ յամենայն խաբէութենէ նորա:
Կնք. Հրաժարիմ:

Քհն. Յամենայն չար գործոց. ի խորհրդոց, ի գնացից եւ ի չար կամաց նր̃: Կնք. Հրաժարիմ:

Քհն. Յամենայն չար հրեշտակաց, պաշտօնէից, կամարարաց, եւ յա՛մ չար զօրութենէ նր̃ հրաժարելով հրաժարիս: Կնք. Հրաժարիմ:

Յետոյ քահանայն հրամայէ կնքահօրն դառնալ յարեւելս. եւ հարցանէ յաստի յանուանէ ընծայեալն, պատասխանէ տալով կնքահօրն:



Քհն. Ա՛յս անուն, հաւատամս ի յԱստուած Հայր ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի:
Կնք. Հաւատամ:

Քհն. Հաւատամս ի Յիսուս Քրիստոս յՈրդին նորա միածին Տէրն մեր, ի ծնեալն եւ չարչարեալն: Կնք. Հաւատամ:

Քհն. Հաւատամս ի Հոգի սուրբ. ի սուրբ եկեղեցի կաթողիկէ. ի հաղորդութիւն սրբոց. ի թողութիւն մեղաց. ի յարութիւն մեռելոց, եւ ի կեանսն յաւիտենականս: Կնք. Հաւատամ:

Եւ ապա քահանայն ի միասին ընդ կնքահօրն դարձ յայնժամ ասէ զՀաւատամքն ի բառն. տես երես 13:

Յետ այնորիկ տանին զմանուկն եկեղեցւոյն: Եւ ասէ

Սաղմոս ՃԺԷ:

Խոստովան եղերուք Տեառն զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Իսրայէլի զի բարի է. զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցեն երկիւղածք Տեառն, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ի նեղութեան կարդացի առ Տէր. եւ լուաւ ինձ յանդորր:

Տէր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ:

Տէր է իմ օգնական. եւ ես տեսից ի թշնա-միս իմ:

Բարի է յուսալ ի Տր̃ քան յուսալ ի մարդիկ. բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինեւ. եւ ա-նուամբ Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինեւ, պաշարեցին զիս ի միասին. եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Շրջեցան զինեւ որպէս մեղուք, վառեցան բորբոքեցան որպէս փուշք ի հուր. եւ անուամբ Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեցայ, եւ եղէ մերձ ի գլո-րել. եւ Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ Տէր. եւ եղեւ ինձ ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան փրկութեան ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն բարձր արար զիս. եւ աջ Տեառն արար զօրու̃թ:

Ոչ մեռայց այլ կեցից. եւ պատմեցից զգործս Տեառն:

Խրատելով խրատեաց զիս Տէր. եւ ի մահ ոչ մատնեաց:

Եւ քահանայն դնէ զծայր [illegible] ի վերայ դրա-նն, եւ բանայ զդուռն եկեղեցւոյն ասելով՝

Բացէք ինձ զդրունս արդարութեան, զի մտից ընդ այն եւ խոստովան եղէց Տեառն:



Այս դուռն Տեառն է. եւ արդարք մտա-նեն ընդ սա:

Եւ մտանեն յեկեղեցին ասելով՝ Սաղմոս ՂԹ:

Աղաղակեցէք առ Տէր ամ̃ երկիր. եւ. 4:

Փառք Հօր. Այժմ եւ միշտ:

Եւ ասէ քահանայն ցժողովուրդն. Մուտ ի տա-ճարն Աստուծոյ, եւայլն:

Եւ յորժամ երթայ յաւազանն՝ արկանէ քահանայն մաքուր ջուր յաւազանն՝ ասելով.

Քհն. — Կց. Ձայն Տեառն ի վերայ ջուրց, եւ Աստուած փառաց որոտաց. եւ Տէր ինքն ի վերայ ջուրց բազմաց:

Դպ. — Փխ. Մատուցէք Տեառն որդիք Աստուծոյ. մատուցէք Տեառն զորդիս խոյոց:

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս: Գ. 24:

Ապա օրէնքն դաստիարակ եղեն մեզ ի Քս̃ Յս̃, զի ի հաւատոցն արդարասցուք. այլ իբրեւ եկին հաւատքն՝ ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք, քանզի ամենեքին որդիք Աստուծոյ էք՝ հաւա-տովք ի Քս̃ Յս̃: Որք միանգամ ի Քս̃ մկրտեցա-րուք՝ զՔս̃ զգեցեալ էք. չիք խտիր՝ ոչ Հրէի եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի, զի ամենեքեան դուք մի էք ի Քս̃ Յս̃: Ապա եթէ դուք Քս̃ի էք՝ ուրեմն Աբրա-համու զաւակ էք, ըստ աւետեացն ժառանգք: 29:

Ա՛լէ՛լուիա. ալէ՛լուիա՛.

Տէ՛ր հովուեսցէ զիս. եւ ինձ ինչ ոչ պակա՛սեսցէ՛:

Սրկ. Ալէ՛լուիա. ո՛րթի՛:

Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ Աւետարանիս որ ըստ Յովհ: Գ. 1:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Ասէ Աստուած:

† Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.

Նա էր այր մի ի փարիսեցւոց անուն. Վերջ՝ ամենայն ծնեալն ի Հոգւոյն: 8.

Քարոզ:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Քհն. Տէր ողորմեա:

Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութե՛ անձանց մերոց զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի, եւ հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն զի Տէր ուղղեսցէ զգործս ձեռաց մերոց, եւ զքահանայիս որ հանդերձեալ է մկրտել զսա, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:



Վ՟ն գործակից լինելոյ Հոգւոյն ս՟բյ ի սրբել զառաջիկայ ջուրս, զՏ՟ր աղ: Տէր ողորմեա:

Վասն ընդունելոյ սմա զօրհնութիւն Յորդանանու, եւ լինելոյ ի բժշկութիւն հոգւոց եւ մարմնոց, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն վերածնելոյս որ ի սմա մկրտի, լինել սմա որդի լուսոյ եւ ճշմարտութեան, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Յիշելով զԱ՟ծածինն եւ զմիշտ կոյսն Մարիամ, եւ զՍ՟բ Յովհաննէս Մկրտիչն, եւ զա՟մ ս՟րբս, եւ Նոքօք զՏէր աղաչեսցուք: Յիշեա Տէր եւ:

Եւ եւս եւ վ՟ն միաբանութե՛ ճշմարիտ եւ ս՟բ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տ՟ն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Ա՟ծ մեր ըստ մեծի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթ.:

Տէր մեր Յ՟ս Ք՟ս, որ զօրութեամբ քով մեծաւ:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Տէր Աստուած ահաւոր, Աստուած յաւիտենակ:

Ապա ասէ քահանայն:

Օրհնեսցի՛ † եւ սրբեսցի ջո՛ւրս ա՛յս նշ՛անա՛ւ սո՛ւրբ խա՛չ:

Դպ. Ա՛մէ՛ն. ա՛լէլո՛ւիա՛. ա՛լէլո՛ւիա՛. ալէ՛լո՛ւիա՛

Երիցս կրկնէ՝ Օրհնեսցի:

Ապա շարական Դ Զ։

Ա՛ռաքելոյ աղաւնոյ. իջանելով մեծաձայն հնչմամբ ի բարձանց. ի նմանութի լուսոյ փայլման. հրազինեաց անկիզելի զաշակերտսն. մինչդեռ նստէին ի սուրբ վերնատանն։ Ա՛ննիւթական աղաւնի. անքննելի որ քննէ զխորս Աստուծոյ. զոր առեալ ի Հօրէ պատմէ զահաւոր եւ զմիւսանգամ գալուստն. զոր քարոզեցին համագոյականն։ Օ՛րհնութիւն ի բարձունս. եղելին ի Հօրէ եւ յՈրդւոյ Հոգւոյն սրբոյ. որով առաքեալքն արբեցան անմահական բաժակաւն. եւ հրաւիրեցին զերկիրս ի յերկինս։

Յայսմ վայրի քահանայն հեղու ի սուրբ մեռոնէն խաչաձեւ ի նոյն ջուրն ասելով. Հեղումն մեռոնիս։ Եւ ասէ զաղօթս. Որ կոչեցեր զծառայս քո Տէր։

Ապա հարցանէ յերախային՝ տալով զանուն նորա.

Քհն. Ո՛յս անուն, զինչ խնդրես։

Կնք. Խնդրեմ մկրտիլ։

Քհն. Արդարեւ խնդրես։

Կնք. Հաւատով խնդրեմ մկրտիլ, եւ մաքրիլ ի մեղաց, եւ ազատիլ ի դիւաց եւ ծառայել Այ։

Քհն. Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ։



Յայնժամ քահանայն առեալ զտղայն ի յերանէ կնքահօրն՝ մերկ ասելով.

Այս անուն ծառայս Յսի, եկեալ կամաւ յերախայութիւն, յերախայութէ ի մկրտութի, մկրտի այժմ ի ձեռս իմ յանուն Հօր, եւ մի ան ջուր հեղու ի վերայ գլխոյ մանկանն, եւ Որդւոյ, եւ մի այլ ան հեղու, եւ Հոգւոյն սրբոյ, եւ մի ան այլ հեղու։

Ապա ասէ։

Գնեալ արեամբն Քրիստոսի ի ծառայութէ մեղաց. եւ այլն։ Եւ զայս ասելով երիցս ընկղմեցուցանէ զնորընծայն ի ջուրն. եւ ապա ասէ. Որ ի Քս մկրտեցար՝ զՔս զգեցեալ ես. եւ այլն։

Սրկ. Որթիւ։

Աւետարան ըստ Մատթէոսի. Գ. 13։

† Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Յայնժամ գայ ի Գալիլեէ ի Յորդանան. վերՋ՝ ընդ որ հաճեցայ։ 17։

Եւ ապա քահանայն ընդ կնքահօրն ասէ զՀայր մերն ի բուն։

Աղօթք։

Որ լուսաւորեցեր զարարածս քո Քրիստոս Ած։

Խաղաղութիւն † ամենեցուն։

Աստուած որ մեծդ ես եւ մշտնջենաւոր. եւ առ արդէ ասելով՝ իշխանութիւն եւ պատիւ՝ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտ։

# ԿԱՆՈՆ ԴՐՈՇՄ ՏԱԼՈՅ

Յետ այսորիկ քահանայն դնէ զաջ ձեռն ի վերայ տղայոյն, եւ ասէ.

Ամենակալն Աստուած, եւ այլն:

Եւ յառաջ քան զմկրտելն ասեն

Շարական ԴԶ:

Որ յառաջագոյն յօրէնս. յօրինակ միածնի քո Հայր երկնաւորդ. ետուր զօրութիւն ի յիւղ սրբութեան յօծումն օծելոցդ. * Հեղ եւ յիւղս յայս զերկնային քո զշնորհս: Որ խոնարհեցար ի մեզ. իւղ թափեալ անուն օծեալդ Աստուծոյ. խառնելով զԱստուածութիւնդ օծեալ ընդ մարդկային առեր բնութիւն. Հեղ եւ յիւղս: Որ ի վերնատանն սուրբ. իջանելով յառաքեալսն օծումն օծելոցդ. եւ օծմամբն այսու վերաստեղծեր նոքօք զհողեղէնս որդիս Աստուծոյ. Հեղ եւ: Որ զարդարես սովաւ. ի հանդերձս լուսափայլս եւ գերապայծառս. զհարսնացեալ եկեղեցի քո սուրբ. մանկունք սորա ընդ հրեշտակս օրհնեն սուրբ զԵրրորդութիւնդ:

Ապա քահանայն թաթաւէ զաջ բոյթն ի սուրբ միւռոնն, եւ զնոյն ձեռն եդեալ ի գլուխ նորածնելոյն՝ օծանէ նախ զճակատն ասելով.



Ա՛յս անուն, իւղ անոյշ հեղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի ի վերայ քո, կնիք աստուածային եւ երկնաւոր պարգեւացն, յանուն Հօր † եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ:

Օծանէ եւ զայլ մասունս մարմնոյն՝ ասելով. Կնիքս որ յանուն Յիսուսի, եւ այլն:

Յետ այսորիկ ասէ խաղաղականելով.

Քհն. Խաղաղութիւն † ընդ քեզ փրկեալդ Աստուծոյ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քհն. Խաղաղութիւն † ընդ քեզ օծեալդ Աստուծոյ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Քհն. Խաղաղութի՛ † ընդ քեզ բերկրեալդ Աստուծոյ:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում.

Քահանայն բամբակաւ կամ այլ նման իրօք ընջէ զբոյթ իւր եւ զօծեալ տեղիս տղային: Եւ դնէ ի գլուխ նորա զսպիտակ կնքոցն՝ ասելով. Ա՛յս անուն, առ զպայծառ հանդերձս. եւ արկանէ զսպիտակ զգեստն ի վերայ նորա: Եւ ապա ասէ.

Աղօթք:

Օրհնեալ ես, բարեխնամող Աստուած, որ զգեցուցեր:

Եւ տայ կնքահօրն զվառեալ մոմեղէնն՝ ասելով. Ա՛ռ զվառեալ լապտերս, եւ այլն:

Եւ ապա հրամայէ քահանայն կնքահօրն ծնրադրել. եւ ինքն ասէ՝

Տր ողորմեա. Տր ողորմեա. Տր ողորմեա:

Աղօթք:

Տէր Աստուած ամենակալ, Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. քեզ խոնարհեց:

Եւ առեալ է յետոյ կնքահօրն զնորընծայն ի վերայ բազկաց իւրոց՝ հանէ ի բեմն. եւ երկրպագէ երիցս՝ ասելով.

Այս անուն ծառայս Քրիստոսի եկեալ յերեխայութենէ ի մկրտութիւն, ի մկրտութենէ յերկրպագութիւն. Եւ այլն:

Եւ հանեալ է բազկաց իւրոց զնորընծայն՝ տայ ի գիրկս կնքահօրն, եւ ասէ:

Աղօթք:

Որք մկրտեցան եւ լուսաւորեցան, եւ այլն:

Քարոզ:

Սրկ. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Քհն. Տր ողորմեա. Տր ողորմ. Տր ողորմ.

Աղօթք:

Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց:

Օրհնեալ Տր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Դպ. Յաւիտ. Հայր մեր որ յերկինս:

Քհն. Ա՛յս անուն, երթ ի խաղաղութիւն, եւ Տէր եղիցի ընդ քեզ:

---

# ԿԱՆՈՆ ՀԱՐՍԱՆԵԱՑ

---

## ՆՇԱՆ ՕՐՀՆԵԼՈՅ

Դնեն ի վերայ սեղանոյ զնշանն. եւ այս կարգ կատարի:

Սրկ*. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդ: Եւ յաւէլն խունկ արկանէ:

Շարական ԱԿ:

Խորհուրդն անճառ ծածկեալն յազգաց եւ յաւիտենից. յայտնեցաւ իջմամբ հրեշտակապետին այսօր առ կոյսն Մարիամ. * զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց մերոց: Անժամանակն առ ի Հօրէ եւ անմարմին ծոցածին ծնունդ. այսօր աւետեօքն Գաբրիէլի մարմին զգենու ի սրբոյ կուսէն. զոր առ Տէր ուն: Անտանելին ի համայնից՝ բովանդակիչ բնութեանց բոլորից. պարագրի այսօր մարդասիրապէս յորովայնի անարատ կուսին. զոր առ Տէր ուն: Աներեւոյթ փառացն Հօր նկարագիր անյեղապէս. ի ծառայական խոնարհի պատկեր ի յարգանդի հոգւով մաքրելոյ. զոր առ Տէր ուն: Անսահմանելին յէութեան սահմանելեացս

---

* Եթէ սարկաւագ ոչ կայցէ՝ դպիրն ասասցէ զքարոզն:

նմացուցիչ․ ի վեր քան ըզբան սահմանի այսօր յորովայնի սրբուհւոյ կուսին․ զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց մերոց։ Ուրախութիւն տրտմեցելոյ բնութեանս բերկրեալ կոյս Մարիամ․ զոր ողջունաբեր աւետեօք կրեցեր զորւողն ի քեզ զօրէնս ողջունի. առ Նա միշտ բարեխօսեա վասն անձանց մերոց։

Կամ շարս սա․ Ակ։

Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս․ պահպանեա զմեզ մարդասէր յաներեւոյթ թշնամւոյն․ * զի դու միայն ես թագաւոր փառաց օրհնեալ յաւիտեան։ Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բազուկս քո․ եւ հեղեր զարիւնդ ի փրկութիւն տիեզերաց․ զի դու միայն։ Ի միւսանգամ քո գալստեանդ յերեւել սուրբ նշանիս. արժանի արա ըզծառայս քո վերստին նորոգման․ զի դու միայն։

Ալէլուիա․ ալէլուիա․

Յարեւու եհար զխորան իւր․ եւ ինքն որպէս փեսայ զի ելանէ յառագաստէ իւրմէ։

Պօղոսի առաքելոյն ի Գաղատացւոց թղթոյն է ընթերցուածս։ Դ․ 27։

Գրեալ է․ ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր․ գոչեա եւ աղաղակեա՝ որ ոչդ երկնէիր․ զի բազում են որդիք սկընդկիդ առաւել քան



զարամբւոյն։ Այլ մեք՝ եղբարք, ըստ Սահակայ աւետեացն որդիք եմք։ Այլ որպէս յայնժամ որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս եւ այժմ։ Այլ զինչ ասէ գիր․ ի բաց հան զաղախինդ եւ զորդի դորա, զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի։ Վասն որոյ, եղբարք, չեմք որդիք աղախնոյն՝ այլ ազատին, ազատութեամբն որով Քրիստոս զմեզ ազատեցոյց։ Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանիցէք։ Ե․ 1։

Ալէլուիա․ ալէլուիա։

Տեսցես դու զորդիս որդւոց քոց․ խաղաղութիւն ի վերայ Իսրայէլի․

Ալէլուիա․ որթիւ։

Աւետարան ըստ Ղուկասու։ Ա․ 26։

✝ Ի Հօրէն ամենակալէ

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբր․ մինչ՝ գնաց ի նմանէ հրեշտակն։ 38։

Դպ․ փառք քեզ Տէր Աստուած մեր։

Քարոզ․

Սրկ։ Վասն ի վերուստ պահպանութեան անձանց հաւատացելոց եւ հրաւիրելոցս ի միութի զՏէր աղաչեսցուք։

Քհ․ Տր ողորմեա․ Տր ողորմ․ Տր ողորմ։

Աղօթք։

Ընդ յաւիտենական եւ արարիչ ամի, զքեզ։
Խաղաղութիւն ✝ ամենեցուն։
Հայր սուրբ եւ օրհնեալ յամի, որ օրհնեցեր։

Եւ ապա տան ողջոյն։

Քրղ. Սուրբ խաչիւս։ Աղօթք. Պահպանիչ։
Օրհնեալ Տէր մեր։ Հայր մեր։

---

## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՆԴԵՐՁԻ ՀԱՐՍԱՆԵԱՑ
### ԿԱՄ ՀԱԼԱՒՕՐՀՆԷՔ.

Նախ քան զամենայն բերեն զհալաւն առաջի քահանային, Եւ ապա հարց հարցանէ։

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ։ Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր։ Եւ յաւելն խառն արկանէ։

Շարական ԲԿ։

Այսօր երկնայինքն ուրախացան ընդ երկրաւորացս Նորոգման. քանզի Նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ վերնատունն. որով Նորոգեցաւ դասք առաքելոցն։ Այսօր հողանիւթեայ բնութիւնս ցընծայ ընդ Հօր հաշտութեան. քանզի որ եբարձ զՀոգին ի մարդկանէ զմարմին եղելոց. դարձեալ վերըստին ըղձն պարգեւէ։ Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցընծութեամբ զգալուստ սուրբ Հոգւոյն. որով



զարդարեցան ի զգեստուս լուսափայլս եւ գերապայծառս. երգեն ընդ սրովբէիւն զերեքսրբեանն։

Փառք Հօր։ Այժմ եւ միշտ։

Սիրով անմահ փեսային եղեր դու մայր Մարիամ. բարեխօսեա վասն մեր ի յայնմ աւուր ահեղին։

Աղօթք։

Քհն. Օրհնեա ✝ Քրիստոս Աստուած մեր հոգեւոր օրհնութեամբ զհանդերձս. Եւ այլն։

Քարոզ։

Սրկ. Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. եւ կեցուսցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ։ Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա։

Քհն. Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց։

Դպ. Յայնժ. Հայր մեր որ յերկինս։

Եւ ապա երթան ի տուն հարսինն, եւ ածեն զնա առ փեսայն։

---

## ԿՈՒՍԻ ՊՍԱԿԻՆ

Եւ առնու քահանայն զաջ ձեռն հարսինն եւ տայ յաջ ձեռն փեսային, եւ ասէ.

Առեալ զձեռն Եւայի, տուեալ ի յաջն Ադամայ, եւ այլն:

Շարական Գ.Կ:

Նայեաց ի մեզ եւ ողորմեա մեզ Քրիստոս. * որ ունիս բազում գթութիւն: Որ հայրդ ես որբոց. եւ դատաւոր այրեաց Քրիստոս. որ ունիս: Որ պսակիչդ ես սրբոց. լուր եւ մեզ աղօթիւք սոցա Քրիստոս. որ ունիս:

Մայր եւ կոյս աղաւնին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. * քեզ երանեն ամենայն ազինք: Մաքուր աղաւնի եւ հարսն երկնից Մարիամ. տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին. քեզ երանի: Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտն կենաց. քեզ երանի:

Աղօթք:

Քհն. Տէր Աստուած յաւիտենական, որ զան:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Տէր Աստուած, որ ի հեթանոսաց խօսեցար քեզ:

Եւ ասէ զերգս. Տեսէք որդեակք, եւ այլն:



Եւ նախ հարցանէ փեսային:

Քհն. Որդեակ իմ, մինչեւ ի մահ տէ՞ր ես:

Փեսայն. Այո՛, հայր սուրբ, տէր եմ հրամանաւն Աստուծոյ:

Եւ ապա հարցանէ հարսինն:

Քահանայն. Որդեակ իմ, եւ դու մինչեւ ի մահ հնազա՞նդ ես:

Հարսն. Այո՛, հայր սուրբ, հնազանդ եմ ըստ հրամանին Աստուծոյ:

Եւ ասէ Քհն. Այս բանիս վկայ Աստուած է:

Եւ նոքա ասեն. Այո՛, հայր սուրբ:

Եւ ասէ Քհն. Աստուած ի մէջ սոցա, եւ սոքա մի սասանեսցին. եւ այլն:

Եթէ պատարագ ոչ լինի հետ պսակին՝ յայսմ վայրի ճաշոյն ասեն

Շարական Գ.Զ:

Ուրախ լե՛ր սուրբ եկեղեցի. քանզի Քրիստոս արքայն երկնից այսօր պսակեաց ընդ քեզ խաչիւն իւրով. եւ զարդարեաց զամուրս քո սքանչելի փառօք իւրովք: Խնդա յոյժ դուստր Սիոնի. քանզի երկիրս երկինք եղեն այսօր վերստին քո նորոգմամբ. եւ թագաւորն երկնաւո՛ր հաճեցաւ բնակել ի քեզ: Ընդ դասս երկնաւոր զօրացն վերառեալ տօնեմք քեզ այսօր զանազան փառաւորութիւնս. ուրախ լեր հարսն անարատ անքննելին քո խորհրդով:

Ալէլուիա. ալէլուիա։

Տէր ի զօրութիւն քում ուրախ եղիցի թագաւորն. ի փրկութիւն քում ցնծասցէ յոյժ։

Պօղոսի Առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է ընթերցուածս։ Ե. 22։

Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ տեառն. զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ, եւ ինքն է փրկիչ մարմնոյ։ Այլ որպէս եկեղեցի հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւրեանց արանց յամենայնի։ Արք՝ սիրեցէք զկանայս ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ զանձն իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ արատ կամ աղտեղութիւն, կամ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ։ Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ որպէս զիւրեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։ Զի ոչ ոք երբեք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ եւ դարմանէ զնա, որպէս եւ Քրիստոս զեկեղեցի. զի անդամք եմք մարմնոյ նորա, ի մարմնոյ նորա եւ յոսկերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ. եւ եղիցին երկոքին ի մարմին մի։ Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի։ Այլ եւ



դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ իբրեւ զիւր անձն. եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ։ 33։

Ալէլուիա. ալէլուիա։

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ եւ պաճուճեալ։

Սրկ. Որթիւ։

Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն։

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում։

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք։

Քհն. Սրբոյ աւետար. որ ըստ Մատթ։ Ժթ. 2։

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր։

Սրկ. Պռօսխումէ։

Դպ. Ասէ Աստուած։

† Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի

Եւ գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք. Վերջ՝ եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ։ 9։

Քարոզ։

Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս խաղաղութեան, զՏէր աղաչ։ Քհն. Տէր ողորմեա։

Վասն ցրելոյ ի մէնջ զամենայն խորհուրդս չարին, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն պարգեւելոյ մեզ առողջ խորհուրդս եւ առաքինի վարս, զՏէր աղ։ Տէր ողորմեա։

Վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զՏէր աղ։ Տէր ողորմեա։

Վասն խորտակելոյ զհակառակորդն փաղփաղակի ընդ ոտիւք մերովք, զՏր աղ: Տր ողորմեա:

Վասն հոգւոյն հանգուցելոյ՝ որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք: Յիշեա Տր եւ:

Եւ եւս եւ վն միաբանութե ճշմարիտ եւ նբ հաւատոյս մերոյ, զՏէր աղաչ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տռն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Ած մեր ըստ մեծի.

Քհն. Տր ողորմեա. Տր ողորմ. Տր ողորմ:

Աղօթ.:

Տէր Աստուած ամենակալ, ի քէն օրհնեցաւ:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Օրհնեալ ես Տէր Աստուած ամենակալ, որ ար:

Շարական ԲԿ:

Ով երանելիդ ամենեցուն. տիեզերական իշխանութեամբ ընկալար ի Քրիստոսէ ըզթագ պարծանաց. * ով Թէոդոս մեծ թագաւոր. վասն մեր բարեխօսեա առ թագաւորն երկնաւոր: Որ քոյին նբ աղօթիւքդ վանեցեր ըզթշնամին. կոխելով ըզսատանայ. ընդ երկնային նսըն դասեցար. ով Թէոդ: Ուստի եւ մեք հաւատացեալքս. տօնեմք զքո յիշատակս. օրհնութ առաքելով ըզքեզ պսակողին. ով Թէոդ:

---

# ՊՍԱԿ ՎԵՐԱՑՈՒՑԱՆԵԼՈՑ

Շարական ԳԿ:

Այսօր մարտիրոսաց դասքն ցնծացեալ բերկրին ընդ առաջ Տեառն Քրիստոսի որդւոյն Աստուծոյ: Զայն ի յերկնից վկայեալ ասէ եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգորդք երկնից խորանացն: Լցէք ըզտեղի անկելոցն ապստամբողական թշնամւոյն. որ ի յերկնից վայրանկեալ:

Աձն. Մայր եւ կոյս աղախին Քրիստոսի. որ բարեխօսդ ես միշտ աշխարհի. * քեզ երանեն ամ ազինք: Մաքուր աղաւնի եւ հարսն երկնից Մարիամ, տաճար եւ աթոռ Աստուծոյ Բանին. քեզ երան: Քեւ հաճեցան իմանալիքն ընդ հողեղէնքս. եւ քեւ մերձեցաք ի փայտըն կենաց. քեզ երան:

Խն. Յաղթող եւ զնոր օրհնութիւն միշտ ի բարձունս երգեսցուք. թագաւորին Քսի հաւատացեալ ժողովուրդք: Որ եկն ի լուսաւորել զընտրեալ սուրբ զեկեղեցի. եւ պսակեաց սուրբ խաչիւն. նորա ըզփառս երգեսցուք: Այսօր եւ մեք տօնեսցուք զնաւակատիս սուրբ խաչին. եւ փրկողին մատուցուք փառս եւ պատիւ յաւիտեան:

փա՛ռք Հօ՛ր եւ: Այժմ եւ մի՛շտ:

Ա՛նթառամ պըսակըն ձե՛զ աւանդեա՛լ մը-նա՛յ. քան զակա՛նըս պատուակա՛նըս գերագո՛յն հրաշի՛ւք. ո՛րք վա՛նեալ ըզթը՛շնամի՛ն խո՛րտակեցի՛ք:

Ալէլուիա. ալէլուիա:

Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան արքայութեան քո:

Պօղոսի առաքելոյն ի Տիմոթէոսի առաջին թըղթոյն է ընթերցուածս: Բ. 9:

Կամիմ լինել զկանայս ի զարդ խոնարհութեան՝ ակնածութեամբ եւ զգաստութեամբ զարդարել զանձինս. մի ի հիւսս ոսկեմանս ընդելուզեալս մարգարտով, կամ ի հանդերձս պաճուճեալս. այլ որպէս վայելէ կանանց զաստուածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարութեան: Կին մարդ ցածութեամբ ուսցի ամենայն հնազանդութեամբ: Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ ի լռութեան կալ: Զի Ադամ նախ ստեղծաւ՝ եւ ապա Եւա: Եւ Ադամ ոչ պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ եւ յանցեաւ. բայց կեցցեն վասն որդեծնութեանն՝ եթէ կայցեն ի հաւատս եւ ի սէր եւ ի սրբութիւն պարկեշտութեամբ: 15:



Ա՛լէ՛լուիա. ալէ՛լուիա՛:

Կացցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ. ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ եւ պաճուճեա՛լ:

Ո՛րթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: Բ. 1:

† Վասն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին. մինչ՝ հաւատացին ի Նա աշակերտքն Նորա: 11:

Քարոզ:

Սէ. Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց. ընկալցի զխնդրուածս սրտից մերոց. թողցէ զյանցանս մեր. ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի տէրութեան Նորա: Եւ Նա տացէ մեզ միաբան միով հաւատով արդարութեան վաստակել ի գործս բարեաց: Զի զողորմութեան զշնորհն իւր՝ արասցէ ի վերայ մեր Տէրն ամենակալ. կեցուսցէ եւ ողորմեսցի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթք:

Տէր Աստուած մեր, որ յամ ժամ ընդ մեզ:

Եւ ապա բաժակ մի գինի առնու ի ձեռն իւր քահանայն, եւ առէ զաղօթս.

Տէր Աստուած մեր, որ զամենայն ինչ իմաստութեամբ արարեր: Եւ փեսաւորացն զբաժակն:

Եւ առնուն զպսակն ի գլխոց նոցա:

Քարոզ:

Սուրբ խաչիւս աղաչեսցուք զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց. եւ կեցուցէ շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Աղօթք:

Պահպանիչ եւ յոյս հաւատացելոց Քս:

Դպ. Յայնժամ. Հայր մեր որ յերկինս:

Քհն. Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեալ եղերուք ի շնորհ:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՊՍԱԿԻ

Կանոնն լուանի տան զկուսի պսակն առեալ ինչ վասն սուրհանդակի եւ վասն պտղոյ. եւ ալէլուք, գիրք եւ աւետարան՝ նոյն են: Միայն յաւարտ աղօթիցն Տէր Աստուած մեր որ ի հրեշտակաց՝ խնկոյն քարոզէ

Սրկ. Լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց. ամենակալ Տէր Աստուած մեր կեցո եւ ողորմեա:

Կամ խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ի վերայ մեր: Տէրն ամենակեալ կեց:

Եւ յետ աղօթիցն Ա՛ծ մշտնջենաւոր, Եւ այլն:

Քրզ. Սուրբ խաչիւս: Աղօթք. Պահպանիչ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

---

# ԿԱՆՈՆ ԹԱՂՄԱՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ

ԱՅՆ Է

## ԱՇԽԱՐՀԱԹԱՂԻ ԿԱՄ ՄԵԾԻ ԹԱՂՄԱՆ

---

## ՏԱՆ ԿԱՐԳՆ

Սրկ.* Եւ եւս խաղաղութե՛: Քհն. Օրհնութիւն եւ փառք: Եւ յաւելն խունկ արկանէ:

Կանոնագլուխ ԱՁ:

Դատեա՛ Տէր զայնոսիկ որք դատեն զիս. ալէլուիա. մարտիր ընդ այնոսիկ որք մարտնչին ընդ իս. ալէլուիա:

Ա՛ռ զզէն եւ զասպար քո. եւ արի յօգնել ինձ. հա՛ն զսուր քո ընդդէմ հալածչաց իմոց. արգե՛լ զնոսա. եւ ասա՛ դու ցանձն իմ թէ փրկութիւն քո եմ ես. ալէլուիա:

Ամաչեսցե՛ն եւ յամօթ լիցին որք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն որք խորհէին ինձ չար. ալէլուիա:

Եղիցին նոքա որպէս փոշի առաջի հողմոյ. եւ հրեշտակ Տեառն նեղեսցէ զնոսա. ալէլուիա:

Եղիցին ճանապարհք նոցա ի խաւար եւ ի գայթագղութիւն. եւ հրեշտակ Աստուծոյ հալածեսցէ զնոսա. ալէլուիա:

---

* Եթէ սարկաւագ ոչ կայցէ՝ դպիրն ասասցէ զքարոզն:

Ի նանի՛ր թագուցի՛ն ինձ որոգայթ յապականութեա՛ն իւրեա՛նց. եւ ի նանի՛ր նախատեցի՛ն զա՛նձն իմ. ալէլուիա:

Փխ. Տէր յերկինս է ողորմութիւն քո. ճշմարտութիւն քո մինչեւ յամպս. * ալէլուիա. ալէլուիա:

Արդարութիւն քո ո՟պ լերինք Աստուած. իրաւունք քո որպէս խորք բազումք. զմարդիկ եւ զանասուն կեցուցանես դու Տէր. ալէլ. ալէլ:

Որպէս զի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած. այլ որդիք մարդկան ի հովանի թեւոց քոց յուսասցին. ալէլ. ալէլ:

Արբեսցի՛ն նոքա ի պարարտութենէ տան քո. եւ զուղխս փափկութեան քո տացես ըմպել նոցա. ալէլ. ալէլ:

Ի քէ՛ն է Տէր աղբիւր կենաց. եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս. ալէլ. ալէլ:

Ձգեա զողորմութիւն քո որք ճանաչեն զքեզ. զարդարութիւն քո որք ուղիղ են սրտիւք. ալէլ. ալէլ:

Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից. եւ ձեռք մեղաւորաց մի դողացուսցեն զմեզ. ալէլ. ալէլ:

Անդ անկցին ամենեքեան՝ որք գործեն զանօրէնութիւն, մերժեսցին եւ այլ մի կարասցեն հաստատել. ալէլ. ալէլ:

Փառք Հօր եւ: Այժմ եւ միշտ եւ. ալէլուիա. ալէլուիա:



Քհն. ի Նխ. Սովաւ լուսաւորեցան արարածք ամենայն. Եւ այլն:

Քարոզ:

Սրկ. Վասն ի վերուստ խաղաղութեան եւ փրկութեան անձանց մերոց, զՏէր աղ: Քհն. Տէր ողորմեա:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն քաւիչ եւ ներող լինելոյ Աստուծոյ ի վերայ մեղաց մերոց, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն թողլոյ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն զի մի ընդ խոտանս գտանիցիմք յաւուրն պատասխանատուութեան, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք: Յիշեա Տէր եւ:

Եւ եւս եւ վասն միաբանութեան ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Ած ամենակալին յանձն արասցուք: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Ած մեր ըստ մեծի:

Քհն. Տէր ողորմեա. Տէր ողորմ. Տէր ողորմ:

Աղօթք:

Աստուած յաւիտենական, անսկիզբն, անեղան:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Հայր մեր, որ յերկինս եւ յերկրի եւ. յամի նբ:

Ալէլուիա. ալէլուիա:

Ահա չափով եդիր զաւուրս իմ. եւ կար զօրութեան իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ընդունայն է ամենայն մարդ մնեղի:

Պօղոսի Առաքելոյն ի Կորնթացւոց երկրորդ Թղթոյն է ընթերցուածս: Ա. 3:

Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Հայր գթութեանց, եւ Աստուած ամենայն մխիթարութեան. որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս մեր. առ ի կարող լինելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն, մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստուծոյ: Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լիցի եւ մխիթարութիւնն մեր: Զի եթէ նեղիմք. վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան. եւ եթէ մխիթարիմք, վասն ձերոյ մխիթարութն եւ փրկութն. որ յաջողեալն է համբերութբ նոցին չարչարանաց զոր եւ մեքն չարչարիմք. եւ յոյսն մեր հաստատուն է վասն ձեր. քանզի գիտեմք՝ եթէ որպէս կցորդ եմք չարչարանացն՝ նոյնպէս եւ մխիթարութեանն: Քանզի ոչ կամիմ տգէտս լինել ձեզ եղբարք՝ վասն նեղութեանն մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ եւ ի կենաց: Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. զի



մի յանձինս ապաստան իցեմք, այլ յԱստուած՝ որ յարուցանէ զմեռեալս. որ յայնպիսի մահուանէ փրկեաց զմեզ՝ եւ փրկեսցէ. քանզի յուսացեալ եմք՝ եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից ձերոց վասն մեր: 11:

Ա՛լէլուիա. ալէլուիա՛:

Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. ձայնիւ իմով առ Աստուած. եւ նայեցաւ առ իս:

Սրկ. Որթիւ:

Քհն. Խաղաղութիւն † ամենեցուն:

Դպ. Եւ ընդ հոգւոյդ քում:

Սրկ. Երկիւղածութեամբ լուարուք:

Քհն. Սրբոյ աւետար. որ ըստ Յովհ: Ե. 19:

Դպ. Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Պռօսխումէ:

Դպ. Աւէ Աստուած:

† Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Պատասխանի ետ. Վ. զառաքիչն Նր: 23:

Զայն ամենայն տես կարգաւ յերես 61—66.

Երգ. Փառաց ի փառս: Եւ տուն մի յԱրարչէն կամ յես ասացին՝ ըստ աւուր պատշաճի:

Ապա Մղթ. Քրզ. եւ աղօթ.:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

Եւ քահանայն ընծայեալն տանել յեկեղեցի. եւ ի ճանապարհին ասեն շարական հանգստեան կամ խաչի:

---

# ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱՐԳՆ

Եւ յեկեղեցւոջն այս կարգ կատարի:

Սրկ. Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկալ: Քհն. Օրհնութիւն եւ փառք Հօր: Եւ ասեն հանգստեան

Շարական ԳԿ:

Բանդ Աստուած որ ի ծոց Հօր. վասն մերոյ փրկութեան ի յերկնից խոնարհեցար. զի զմեզ նորոգեսցես ի կեանս. Աստուած հարցըն մերոց: Որ հանդերձեալ ես գալ փառօք Հօր. զարթուցանել ըզննջեցեալսն ի սուրբ անունըդ քո. նորոգեա եւ ըզմեր ննջեցեալսն. Աստուած հարցըն մերոց: Անմահութեանց տուող Քրիստոս եւ պարգեւիչ կենդանութեան. ի միւսանգամ գալստեանն եւ յաշխարհական ատենին. թողութիւն շնորհեա մեր ննջեցելոցն. Աստուած հարցըն մերոց: Որ նստիս ընդ աջմէ Հօր ծընողի իւրոյ. եւ մարդասիրապէս խնամէ զարարածըս. բարձր արարէք ըզնա յաւիտեան: Որ ըղհողացեալ բնութիւն մարդկան նորոգէ իւր Ածութբն. Եւ կենագործէ ի կեանս անմահս. բարձր արարէք ըզնա յաւիտեան:

Ածն. Լեառըն վիմածին աղբիւր յորդառատ. բարունակ ծաղկեալ այգի վայելուչ սրո-



բէ հողեղէն. բարունեայ Բանին տուն անօրէնութեան տաղաւար Հոգւոյն. * առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն: Փափկութեան դրախտին բացող բանալի. Քրիստոսի բարձող նըմանող երկնից. սափոր ոսկեղէն լի մանանայիւ. գաւազան ծաղկեալ յարմատոյն Յեսսեայ տաճար լուսոյ մայր. առ ծնեալն ի: Ցօղ քաղցրածաւալ ցանկալի զուարթնոցն. նիւթեղէն սրովբէ գեղ մարգըրտափայլ հիմն եկեղեցւոյ. մաքուր աղաւնի ամպ հովանաւոր սուրբ կոյս Մարիամ. առ ծնեալն ի քէն միշտ բարեխօսեա անդադար հայցմամբ. շնորհել զթողութիւն մեր ննջեցելոցն:

Խչ. Ով պահապան որ ծագեցար յԵդեմայ. նշան յաղթութեան ընդդէմ աներեւոյթ թշնամեացն: Դու փակելոյ դրախտին բացող. եւ առաջնորդ աւազակին. որ զբոցեղէն սուրն կապտեաց անեղին հրամանաւն: Փառք Հօր: Այժմ եւ միշտ: Քեւ ցընծան ըստորայինքս ամ ի միւսանգամ քո գալստեանն. եւ յաւէժ զուարճանան. դասք անմարմնոցն առէիցս:

Ալէլուիա. ալէլուիա:

Երանի ամենեցուն որ բնակեալ են ի տան Տեառն. յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ:

Պօղոսի առաքելոյն ի Թեսաղոնիկեցւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: Դ. 12.

Ոչ կամիմ, եղբարք, եթէ տգէտ իցէք վն ննջեցելոցն, զի մի տրտմիցիք որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հաւատամք՝ եթէ Յն մեռաւ եւ յարեաւ, նոյնպէս եւ Աստուած ըզննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա: Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, եթէ մեք որ կենդանիքս եմք մնացեալքս՝ ի գալստեանն Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն: Զի ինքն Տր հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աստուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ի Քրիստոս յարիցեն յառաջագոյն: Ապա եւ մեք որ կենդանիքս մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ Տեառն յօդս, եւ այնպէս ամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք: Այսուհետեւ մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք: 17:

Ալէլուիա. ալէլուիա:

Բարձր առնեմ զքեզ Տր զի ընկալար զիս. եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս:

Որթիւ:

Աւետարան ըստ Յովհաննու: ԺԲ. 24:

† Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ. վերջ՝ պատուեսցէ զնա Հայրն իմ: 26:



Քարոզ:

Սրկ. Վասն հրաժարելոյ անձին ննջեցելոյս, զՏէր աղաչեսցուք: Քհն. Տէր ողորմեա:

Վասն քաւութեն մեղաց եւ թողութեն յանցանաց սորա եւ մեր, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն առաջնորդելոյ սմա յանստուեր օթեվանս, զոր պատրաստեաց Որդին միածին ի տան Հօր իւրոյ, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն լսելոյ սմա զձայն կենարար փողոյն, եւ վերանալ ընդ առաջ փրկչին, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն արժանի լինելոյ սմա դասել յաջակողման դասուն, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Եւ եւս եւ վն միաբանութեն ճշմարիտ եւ սբ հաւատոյս մերոյ, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Զանձինս մեր եւ զմիմ: Քեզ Տեառնդ:

Ողորմեաց մեզ Տէր Աձ մեր ըստ մեծի:

Քհն. Տր ողորմեա. Տէր ողոր. Տր ողորմ:

Աղօթք:

Որ թագաւորդ ես յաւիտենից Քս Աձ եւ եւս:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Գթած եւ մարդասէր Աստուած, հանգո զհոգի:

Զայն ամենայն տես նուագեա յերես 61—66:

Երգ. Փառաց ի փառս: Քահանայք եւ ժող:

Ես տուն մի յԱրարիչ եւ մարդասիրէն կամ յես ասացիէն, ըստ աւուր պատշաճի:

Աղ. Մղթ. Հոգւոյ հանգուցելոյս: Քրզ. Վն հոգւոյ հանգ: Աղօթ. Քրիստոս, Որդի Աստուծոյ անոխակալ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

---

## ԳԵՐԵԶՄԱՆԻ ԿԱՐԳՆ

Ցորժամ մերձենան ի գերեզմանն՝ ասեն

Շարական Դ.Զ:

Մերձեցայ ես ի դուռըն գերեզմանին. եւ եհաս ինձ ժամ մահուան մըտանել ի յարգանդ երկրի. յորմէ ստեղծեալ եմք ամենեքեան. *Բժիշկ իմաստուն եւ ճարտարապետ. բժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն. արարող եւ յոյս փրկութեան մերոյ: Նղեցի ձեռըն քո պահապան անձին իմոյ. եւ աջ քո բարի առաջնորդեսցէ ինձ ի յարդարութիւն. բժիշկ իմ: Բղխեսցես առ իս ըզգութ մարդասիրութեանդ. եւ յաղբերէդ կենաց լուասցես զմեղս անձին իմոյ. բժիշկ իմ: Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզքեզ. զամենայն աւուրըս կենաց իմոց. եւ առ քեզ ապաւինիմ հովիւ բանաւոր հօտի. դարձո զմոլորեալս ի հօտ քո Քրիստոս բժիշկ իմաստուն եւ ճարտարապետ. բժշկեա զհոգւոյ իմ զհիւանդութիւն. արարող եւ յոյս փրկութեան մերոյ:





Եւ հասեալ ի գերեզմանն՝ ասեն ձայնիւ

Սաղմոս ՃԺԴ. ողբաձայն:

Կց. Դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի Տէր կոչեաց ըզքեզ:

Փխ. Սիրեցի զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն իւր առ իս. եւ ես յաւուրս իմ կարդացի առ նա:

Շրջեցան զինեւ երկունք մահու. եւ վիշտք դժոխոց գտին զիս:

Զնեղութիւն եւ զանձկութիւն գտի. եւ զանուն Տեառն կարդացի:

Ո՛ Տէր, փրկեա զանձն իմ. ողորմած ԱԾ մեր ողորմի, եւ պահէ զտղայս Տէր:

Ես խոնարհ եղէ եւ Տէր կեցոյց զիս. — Դարձ անձն իմ ի հանգիստ քո. զի Տէր կոչեաց ըզքեզ:

Պօղոսի առաքելոյն ի Կորնթացւոց առաջին թղթոյն է ընթերցուածս: ԺԵ. 12:

Ապա եթէ Քրիստոս քարոզի թէ ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ի ձէնջ՝ եթէ յարութիւն մեռելոց չիք: Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ. եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ հաւատքն ձեր. եւ գտանիցիմք սուտ վկայք Աստուծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ՝ թէ յարոյց

գքն. զոր ոչն արդեօք յարոյց, եթէ մեռեալք ոչ յառնիցեն: Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ. եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատք ձեր, եւ տակաւին ի նմին մեղս կայք: Իսկ արդ ովք ննջեցինն ի Քրիստոս՝ կորեա՞ն արդեօք: Եթէ այսու կենօքս միայն յուսացեալ եմք ի քն, ողորմելի եմք քան զամենայն մարդիկ: Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց, առաջին պտուղ ննջեցելոց: Քանզի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութի՟ մեռելոց. որպէս Ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպէս եւ Քրիստոսիւ ամենեքին կենդանասցին. իւրաքանչիւր յիւրում կարգի. նախ Քրիստոս, եւ ապա Քրիստոսեանք ի գալստեան նորա, եւ ապա կատարած: 24:

Ալէ՛լուիա. ալէ՛լուիա.

Տէ՛ր լուր աղօթից իմոց եւ աղաղակ իմ առ քե՛զ եկեսցէ. մի դարձուցաներ զերեսս քո՛ յինէ՛ն:

Ալէ՛լուիա. օ՛րթի՛:

Աւետարան ըստ Յովհաննու: Ե. 24:

† Տէրն մեր Յս Քս ասէ.

Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ. փրկչ՝ որ առաքեացն զիս: 30:

Քարոզ.

Սրբ. Վասն ուղղելոյ զգնացս մեր ի ճանապարհս. Երբ. 197:



Աղօթք:

Աստուած հոգւոց եւ ստեղծիչ մարմնոց, տէր:

Խաղաղութիւն † ամենեցուն:

Արդ խնդրեմք ի քէն՝ թագաւոր թագաւորաց:

Ապա սարկաւագն առնու հող ափով, եւ մատուցանէ քահանային. եւ քահանայն փեռանագրէ ասելով.

Օրհնութիւն աստուածային իջցէ ի հող մահուսորին. եւ այլն: Եւ ասեն է Բեւ՝

Սաղմոս ԻԲ:

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց զիս. եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, եւ առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան իւրոյ:

Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ, զի դու Տր ընդ իս ես:

Ցուպ քո եւ գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ սեղան. ակն յանդիման նեղչաց իմոց:

Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն քո Տէր զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Եւ սկսանին Ցորդորակ:

Ճանապարհ բարի քո. եւ ճշմարտութի. Առաջնորդ հոգւոց մերոց. յերկրէ ի յերկինս: Դուռըն կենաց մըտից Ցո. Ած ճըշմարիտ. Մոյծ եւ զմեզ առ Հայրըդ քո. Հոգւովըդ սրբով:

Մաղթանք:

Քհն. Տէր ուղղեա զգնացս մեր. Եւ այլն:

Քարոզ:

Սրկ. Աղաչեսցուք զամենակալն Աստուած, զի յաջողեալ ուղղեսցէ զճանապարհս ծառայից իւրոց ի բարի և ի խաղաղութի: Ամենակալ Տր:

Աղօթք:

Առաջնորդ կենաց եւ պարգեւիչ խաղաղութե:

Խաղաղութիւն ✝ ամենեցուն:

Օրհնեալ ես Տէր Աստուած փրկիչ մեր, որ յաւ:

Եւ արկանէ խաչանայն զխաչն ի գերեզմանն՝ ասելով.

Հողս օրհնութեան իջցէ ի գերեզմ. եւ այլն:

Եւ իջուցանեն զննջեցեալն ի գերեզման. եւ մինչ ծածկեն հողով զմարմինն՝ ասեն յայսնեւ.

Ողորմած Ած քաւեա զանօրէնութի իմ:

Շարական ԲԿ. կցուրդով:

Հաւատ ունելով հոգի խաղաղութեան. երթ առ արարիչըն հայցելով. Ած իմ հանգո:

Սղմ. Ես ասացի ի զարմանալ իմում. թէ ամենայն մարդ սուտ է:

Շր. Հաւատ ունելով. որպէս ի վերոյ:



Սղմ. Ըզճանապարհս իմ ուղիղ արա ինձ ըստ բանի քում. եւ մի տիրեսցեն ինձ ամենայն մեղք:

Շր. Հաւատ ունելով. որպէս ի վերոյ:

Փառք Հօր եւ: Այժմ եւ միշտ:

Ընդ Քրիստոսի պահելով յաղթող լուցուք փորձողին. եւ ընդ հրեշտակս երգեսցուք. փառք ի բարձունս Աստուծոյ:

Եւ ասեն փառքն:

Փառք ի բարձունս Աստուծոյ. եւ յերկիր խաղաղութիւն. ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս. օրհնեալ ես Տէր Աստուած մեր. օրհնեմք ըզքեզ եւ գովեմք ըզքեզ: Խոստովանիմք Տէր ըզքեզ. եւ երկիր պագանեմք քեզ. փառաւորեմք ըզքեզ. գոհանամք Տէր ըզքէն վասըն մեծի փառաց քոց: Տէր թագաւոր. սուրբդ երկնային. Աստուած եւ Հայր ամենակալ: Տէր եւ Որդի Հօր միածին Յիսուս Քրիստոս եւ սուրբ Հոգի: Տէր Աստըւած գառն Աստուծոյ. եւ Որդի Հօր. որ առեր ըզմեղս ի կուսէն. ողորմեցար. բարձեր ըզմեղս աշխարհի: Եւ արդ ընկալ զաղաչանըս մեր. սուրբըդ որ նըստիս ընդ աջմէ Հօր. ողորմեաց մեզ: Զի դու միայն սուրբ դու միայն բարձրեալ ես. դու միայն Տէր մեր. Յիսուս

Քրիստոս։ Տէր եւ Հոգիդ սբ որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ. Տէր եւ գովեմք զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա Տէր զօրս զայս խաղաղութեամբ եւ առանց մեղաց պահել զմեզ։ Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս ամէն։ * Օրհնեալ Տէր. ուսո ինձ զարդարութիւնս քո. Երիցս։ Տէր ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ասացի Տէր ողորմեա ինձ եւ բժշկեա զանձն իմ. եւ մեղայ քեզ։ Ցոյց մեզ Տէր զողորմութիւնս քո. եւ զփրկութիւնս քո տուր մեզ։ Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Տէր իմ զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո ինձ առնել զկամս քո զի դու ես Աստուած իմ։ Ի քէն է Տէր աղբիւր կենդանութեան. եւ լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Տարածեա զողորմութիւնս քո որք ճանաչեն զքեզ Տէր։

Մաղթանք։

Քհն. փառք, պատիւ և երկրպագութիւն ի բարձ։

Երգ սաղմոսի։

Եդին զիս ի գբի ներքնում. ի խաւարի եւ ի ստուերս մահու։



Տէր Աստուած փրկութեան իմոյ. ի տուէ կարդացի. եւ գիշերի առաջի քո։

Քարոզ։

Սրկ. Վասն ի վերուստ պահպանութեան ի Տեառնէ անձանց մերոց, եւ հաճոյական աղօթս առնելոյ, զՏէր աղաչ։ Քհն. Տէր ողորմեա։

Վասն ընդունելոյ Տն Այ զհոգի հանգուցելոյս ի հանգստեան արդարոց, զՏր աղ։ Տէր ողորմեա։

Վասն թողլոյ սմա զյանցանս զկամայ եւ զակամայ, զՏէր աղաչ։ Տէր ողորմեա։

Վասն արժանի լինելոյ սմա՝ խաղաղութե եւ մեծաւ յուսով սպասել տեառնագալուստ փողոյն, զՏէր աղաչ։ Տէր ողորմեա։

Վասն քաղցրաբարբառ լսելոյ սմա զհաւոր ձայնն որ ասէ, եթէ արիք՝ ահա գայ Քրիստոս, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն համարձակապէս տեսանելոյ սմա զանապական եւ զանստուեր լոյսն, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն աչալրջութեամբ եւ առանց ամօթոյ կալ սմա առաջի արդար դատաւորին Քրիստոսի, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վն տալոյ սմա տեղի ի հայրական խնամոցն յաջակողմեան դասուն, զՏր աղ։ Տէր ողորմեա։

Վասն լսելոյ սմա զերանաւէտ զձայնն, եթէ եկայք օրհնեալք Հօր իմոյ ի տեղի հանգստեան, զՏէր աղաչեսցուք։ Տէր ողորմեա։

Վասն պարգեւելոյ սմա զերկնային պսակն կենաց եւ անմահութեան, զՏր աղ: Տէր ողորմեա:

Վասն հրեշտակի խաղաղութեան աւանդելոյ զհոգի սորա ի տեղի արդարոցն, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն առաքման շնորհաց մեծի եւ ամենազօր աջոյն Քրիստոսի ի հողանիւթեայ յարկ տապանի սորա, զՏէր աղ: Տէր ողորմեա:

Վասն կնքելոյ զգերեզմանս զայս նշանաւ խաչին իւրոյ մինչեւ ի գալուստն իւր սուրբ, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն առաքելոյ զշնորհս Հոգւոյն սրբոյ ի սիրտ լռողաց հաւատացելոց անուան իւրոյ, զՏէր աղաչեսցուք: Տէր ողորմեա:

Վասն մխիթարելոյ զվշտագնեալս սրտիւք՝ ի ձեռն ողորմութեան իւրոյ, զՏր աղ: Տէր ողորմեա:

Վասն պահելոյ զմնացորդս սորա յամենայն հնարից սատանայի, զՏէր աղ: Տէր ողորմեա.

Վասն հոգւոցն հանգուցելոց որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք: Ցիշեա Տր եւ:

Եւ եւս եւ վն: Զանձինս մեր: Ողորմեաց:

Քհն. Տր ողորմեա. Տր ողորմ. Տր ողորմ:

Աղօթ. կնքելոյ գերեզմանն:

Օրհնեալ ես Տէր Աստուած մեր, որ ստեղծեր:

Խաղաղութիւն ✝ ամենեցուն:

Տէր մեր եւ փրկիչ Յս Քս Որդի Աստուծոյ կենդ:



Ձայն ամենայն տես կարգաւ յերես 61—66:

Երգ. Փառաց ի փառս: Քահանայք եւ ժող: Ե-
տոն մի յԱրարիչ եւ մարդասիրէն կամ յես ասացին՝ ըստ աւուր պատշաճին:

Մղթ. Հոգւոյ հանգ: Քրզ. Վասն հոգւոյ հանգ: Աղօթ. Քս որդի Աստուծոյ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

---

*Ձեռնադրութիւն գերեզմանի:*

Սրկ. Եւ եւս խաղաղ: Քհն. Օրհնութի եւ:

Օրհնեսցի ✝ եւ կնքեալ պահեսցի գերեզմ:

Սրկ. Եւ եւս խաղաղ: Քհն. Օրհնութի եւ:

Օրհնեսցի ✝ եւ կնքեալ պահեսցի շիրիմ եւ:

Սրկ. Եւ եւս խաղաղ: Քհն. Օրհնութի եւ:

Օրհնեսցի ✝ եւ կնքեալ պահեսցի դամբար:

Սրկ. Եւ եւս խաղաղ: Քհն. Օրհնութի եւ:

Անշարժ եղիցի կնիք ✝ տէրութեան ի վերայ գերեզմանի ծառայիս Աստուծոյ մինչեւ ի գալուստն Քրիստոսի, որ եկեալ միւսանգամ նորոգեսցէ փառօք ի փառս Հօր եւ Որդւ:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

# ԿԱՆՈՆ ՏՕՒՆ ՕՐՀՆԵԼՈՅ

## Ի ՏՕՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Սրկ. Եւ ես խաղաղու: ՔՀՆ. Օրհնութիւն եւ փառք Հօր: Եւ տուեն

Շարական ԴՁ:

Լոյս ի լուսոյ ի Հօրէ առաքեցար եւ մարմնացար ի սուրբ կուսէն. զի վերըստին նորոգեսցես զապականեալն Ադամ: Դու Աստուած ի յերկրի երեւեցար եւ ընդ մարդկան շրջեցար. եւ փրկեցեր ըզտիեզերս յանիծից Ադամայ: քեզ ի յերկնից վկայեալ Հօր քո ձայն. ասէ դա է իմ Որդի. եւ սուրբ Հոգին ըզքեզ յայտնեաց աղաւնակերպ երեւմամբ:

Մկրտի Քրիստոս եւ սրբին ամենայն արարածք. եւ տայ մեզ թողութիւն մեղաց. ջրով եւ հոգւով վերասերելով ըզմեզ:

Ալէլուիա. ալէլուիա.

Տուն Իսրայէլի օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի օրհնեցէք զՏէր: Տուն Ղեւեայ օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք ըզՏէր:

Աւետարան ըստ Մատթէոսի: Գ. 13:

† Վասն մկրտութեան Տեառն մերոյ Յսի Քսի:

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ: Եւ



Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. ինձ պիտոյ է ի քէն մկրտել եւ դու առ իս գաս: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ ետ նմա: Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա երկինք. եւ ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, եւ գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ: 17:

Փառք քեզ Տէր Աստուած մեր:

Սրկ. Սբ խաչիւս. եր. 223: ՔՀՆ. Պահպանեա:

Օրհնեալ Տէր մեր: Հայր մեր:

---

## Ի ՏՕՆԻ ԶԱՏԿԻՆ

Սրկ. Եւ ես խաղ: ՔՀՆ. Օրհնութիւն եւ:

Շարական ԱՁ:

Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր. քեզ աւետիք խնդութեան. հարսն ի յերկրէ եկեղեցի * օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիոն: Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո. լուսաւորեաւ Երուսաղէմ. քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս. օրհնեա: Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երրեակ

լուսովն. եւ քեզ ծագեալ լոյս գիտութեան. յարուցեալն ի մեռելոց Քրիստոս. օրհնեա ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիովն:

Ալէլուիա. ալէլուիա.

Տուն Իսրայէլի օրհնեցէք զՏէր. տուն Ահարոնի օրհնեցէք զՏէր: Տուն Ղեւեայ օրհնեցէք զՏէր. երկիւղածք Տեառն օրհնեցէք ըզՏէր:

Աւետարան ըստ Մատթէոսի: ԻԸ. 16:

✝ Ցետ յարութեն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս: Իբրեւ տեսին զնա՝ երկիր պագին նմա, եւ ոմանք յերկուացան: Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր՝ եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Ուսուցէք նոցա պահել զամ որինչ պատուիրեցի ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի: 20:

Սբ խաչիւս: Պահպանեա: Հայր մեր:

# ԿԱՆՈՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Դնի Սրբազնին ի բազմոցի՝ ի տուրբ սեղանն: Եւ մինչ փոխէն եղանակին զՏաղ բազմոցին՝ քահանայն խնկարկէ:

Տաղ:

Մայր հաւատոյ: Երգ 39:

Աղօթք:

Տէր Աստուած բարձրեալ ամենակալ. լոյս անքնին, մեծութիւն անհեղ. եւ այլն: Դպ. Ամէն:

Հովիւ քաջ եւ առաջնորդ բանաւոր հօտի, հայեաց գթութեամբ. եւ այլն: Դպ. Ամէն:

Դպ. Աստուած մեր. եւ Տէր մեր. երեւեցաւ մեզ: Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն:

Եւ քահանայն բարձրացուցանէ զՍրբազնին անցանել ժողովրդեանն, եւ խաչակնքէ տանելով.

Կեցո Տէր զժողովուրդս քո եւ օրհնեա ✝ զժառանգութիւնս քո. հովուեա եւ բարձրացո զսոսա յաւիտենէ մինչեւ յաւիտեան:

Շարական Գ.Չ:

Յաստուածային կայծակունս. ի սրովբէից անհըպելին. Անմաքրապէս մերձեցաք. գոլ պարտապան քում խորհրդոյդ. Շնորհեա ընդոյն մաքրութեամբ. ի թողութիւն մեղաց մերոց:

Իսկ ի մեծ պահս փոխանակ տաղին ասէ ողբոյն

Սաղմոս Ծ:

Ողորմեա ինձ Աստուած. ի լմն:

Եւ յետ Օրհնութեանն փոխանակ շարականին՝

Երգ։

Թագաւորն արարածոց. զհացն կենաց ետ քաղցելոց. Եւ զբաժակն ուրախարար. որք յԱդամայ տրտմեցելոց. Այս նոր ուխտ է իմոյ արեան. փոխան հնոյ ուխտին արեան. Զոր յիշատակ իմ առնիցէք. մինչեւ եկից ես միւսանգամ։

Ժողովեալքս ի քէն հայցեմք. ընդ ժողովեալ մետասանին. Յոր զկենարարդ քո մարմին. բաշխեալ ետուր ընդ բաժակին. Շնորհեա եւ մեզ Տէր ընդ նոսին. հաղորդ լինել քում սեղանին. կենաց հացիդ յոր փափագիմք. եւ ըմպելեացդ ում ծարաւիմք։

---

## Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի

Մայր սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր. եւ ցնծութ՟ի աշխարհի ծնար զԲանն Աստուած. աղաչեմք։ Մայր ծը բարեխօսեա։

* Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած. — Որ խոնարհեցաւ ի հայրական ծոցոյ. էառ մարմին ըստ մարդկային բնութեանս՝ առնել խաղաղութիւն յերկինս եւ յերկրի. աղաչեմք։ Մայր ծը բարեխօսեա։

Աղաչեա. Ներել մեզ, անտես առնել զյանցանս մեր, եւ տալ օգնականութիւն ընդդիմա-



կաց լինել հակառակամարտիցն ի պատերազմի. աղաչեմք։ Մայր ծը բարե։

Աղաչեա. Զի լռեսցեն պատերազմունք. դադարեսցին յարձակմունք թշնամեաց. տնկեսցի սէր եւ արդարութ՟ի ի յերկրի. աղ։ Մայր ծը բարե։

Աղաչեա. Աճեցուցանել յերկրի մերում զքաղցր բխումն աղբերաց. զառատ պտղաբերութ՟ բուսոց եւ տնկոց առ ի զուարճալի լինել ա՟մ հարկաւոր պիտոյից մերոց. աղաչ։ Մայր ծը բարե։

Աղաչեա. Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ, շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, պահել անարատ մինչեւ յօր երեւելոյ գալստեան իւրոյ. աղա։ Մայր ծը բարե։

Աղաչեա վ՟ն մեր սրբուհի զմիածին քո զորդին եւ վ՟ն հոգւոյն հանգուցելոց՝ ընդունել յարքայութ՟ երկնից, եւ տալ մասն եւ բաժին ընդ ն՟ըս ա՟մ. աղ։

Յիշեա Տէր եւ ողորմեա։

Եւ եւս առաւել զյորդորումն սիրոյ եւ զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք։

Տուր մեզ Տէր Աստուած մեր։

Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք։

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Ողորմեաց մեզ Տէր Ա՟Ծ մեր ըստ մեծի ողորմութ՟ քում. ասասցուք ամենեքեան միաբանութ՟։

Տէր ողորմեա. Տէր ողորմեա. Մայր սուրբ բարեխօսեա առ Տէր վասն մեր։

### Շարական Աստուածածնի.

ԲՁ. Անկանիմք առաջի քո Ածածին. եւ աղաչեմք զանարատ զկոյսդ: Բարեխօսեա վն անձանց մերոց. եւ աղաչեա զմիածին Որդիդ: Փրկել զմեզ ի փորձութե. եւ յամ վտանգից մերոց:

ԴԿ. ՍՏ. Սրբուհի Մարիամ, սափոր ոսկի եւ տապանակ կտակարանաց. որ զ՚ի վերուստ զհացն կենաց պարգեւեցեր քաղցեալ բնութես. առ նա միշտ բարեխօսեա վն քաւութե մեղաց մերոց:

---

### Ս. Գրիգորի Լուսաւորչի.

ԳԿ. Իւծելոյս մեզք տառապեալ որդեացս. անձագութ ծնող Հայր Գրիգորիոս. Հայցմամբ աղօթիւք առ Հայրն երկնաւոր խնդրեա. կատարել զընթացս մեր ուղղափառութեամբ:

---

### Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետի.

ԳՁ. Սբ ես Տէր եւ ի սբս հանգուցեալ. բարեբանեալ ի վերին զօրաց եւ ի սրբոց քոց. Տէր Ած հարցն մերոց: Ջարժանահաս մահ տարաժամ ի ցասմանէ քում հրամանի. բարձ ի մէնջ բարեխօսութբ եւ աղօթիւք սրբոյն Յակովբայ. Տէր Ած հարցն մերոց: Ի քէն հայցեմք զօգնութի ամենայն Երրորդութի. օգնեա մեզ ի նեղութե մերում. բարեխօսութբ եւ աղօթիւք սրբոյն Յակովբայ. Տէր Ած հարցն մերոց:

---

# ՑՈՒՑԱԿ

Ա. ԿԱՐԳ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ
Երես 1:
— Օրհնեալ գովեալն ըստ խորհրդոյ աւուրն. 35:
— Երգք, շարական, տաղ. ճաշակման. 37:
Կարգ հայրապետական պատարագի. 41:
Կարգ ննջեցելոց պաշտաման պատարագի. 47:
— Պաշտօն հանգստեան ննջեցելոց. 48:
Բ. ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃՔՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ. 67:
Աւուր պատշաճքն տէրունի աւուրց:
— Կիւրակէից յարութեան. 69:
— Կիւրակէիցն աղուհացից. 75:
— Ցինանցն. 76:
Աւուր պատշաճքն պահոց աւուրց:
— Չորեքշաբաթու եւ Ուրբաթու. 82:
— Շաբաթապահոց. 85:
Աւուր պատշաճքն տօնից սրբոց:
— Առաքելոց. 88:
— Մարգարէից. 89:
— Հայրապետաց. 91:
— Մարտիրոսաց. 93:
— Ճգնաւորաց. 98:
— Թագաւորաց. 99:
— Կուսանաց. 99:
Գ. ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՃՔՆ ԳԼԽԱՒՈՐ ՏՕՆԻՑ. 103:
Աստուածայայտնութիւն եւ Մկրտութիւն Տեառն մերոյ. Ա օր. (6 յնր). 103:

— կանոն Օրհնութեան ջրոյ. (Ջրօրհնէք.) 104։
Տեառնընդառաջ. (2 փետր.) 118։
Աւետումն Սրբոյ կուսին. (25 մրտ.) 121։
Ծաղկազարդ. 122։
Աւագ Հինգշաբաթի. 124։
Աւագ Շաբաթ. 126։
— Նախատօնակ Յարութեան Տեառն. 127։
Զատիկ Յարութեան Տեառն մերոյ. Ա օր. 132։
Երկուշաբաթի, Բ օր Զատկի. 133։
Երեքշաբաթի, Գ օր Զատկի. 134։
Նոր Կիւրակէ, Ը օր Զատկի. 135։
Համբարձումն Տեառն մերոյ. 136։
Հոգեգալուստ. (Պենտէկոստէ.) 138։
Տօն Ամենասուրբ Երրորդութեան. (Ա կիր. զկնի պենտէկոստ). 141։
Ս. Գրիգորի Լուսաւորչի Գիւտ Նշխարացն. 142։
Ծնունդ Ս. Յովհ. Կարապետին. (24 յնս.) 144։
Վարդավառ, տօն Պայծառակերպութեան Տեառն. Ա օր, (Է կիր. զկնի պենտէկոստ.) 146։
Փոխումն Սրբոյ կուսին. Ա օր. (12—18 օգ.) 148։
— կանոն Օրհնութեան խաղողոյ. 150։
Ծնունդ Սրբոյ կուսին. (8 սեպտեմբ.) 153։
Խաչվերաց. Ա օր. (11—17 սեպտեմբ.) 155։
Ընծայումն Սրբոյ կուսին. (21 նոյեմբ.) 157։
Յղութիւն Սրբոյ կուսին. (9 դեկտեմբ.) 158։
Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, եւ Մարուգէի ճգնաւորին. (Դ շբ. յիսնակաց.) 159։
Ճրագալոյց Ծննդեան Տեառն. (24 դեկտ.) 160։
— Նախատօնակ Ծննդեան Տեառն. 162։
Ծնունդ Տեառն մերոյ. (25 դեկտ.) 166։
Ս. Ստեփանոսի Նախավկային. (26 դեկտ.) 168։
Ս. Գլխաւոր առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի. (27 կամ 28 դեկտ.) 170։
Տօն ցնօրէնութեան եւ Անուան Տեառն մերոյ. Ը օր Ծննդեան. (1 յնր. կաղանդ.) 171։

ՅԱՒԵԼՈՒԱԾ։

կանոն Մկրտութեան. 175։
կանոն Դրոշմի. 186։
կանոն Հարսանեաց. 188։
— Նշան օրհնելոյ. 188։
— Հալաւ օրհնելոյ. 192։
— Կուսի պսակին. 194։
— Պսակ վերացուցանելոյ. 199։
— Երկրորդ պսակի. 202։
կանոն Թաղման (աշխարհաթաղ). 203։
— Տան կարգն. 203։
— Եկեղեցւոյ կարգն. 208։
— Գերեզմանի կարգն. 212։
կանոն տուն օրհնելոյ. 222։
— Ի տօնի Յայտնութեան (6 յնր.) 222։
— Ի տօնի Զատկին. 223։
կանոն օրհնութեան. 225։

ՀՀ Ազգային գրադարան
NL0161241